0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ

Թողարկող	**«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ**	
Տեղաբաշխող	**«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ**	
Արժեթղթերի դասը՝	**անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս**	
Արժեթղթերի ձևը՝	**ոչ փաստաթղթային**	
Արժեթղթերի քանակը՝	**ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:**	
Արժեկտրոնային եկամտաբերություն՝		
Շրջանառության ժամկետը՝		
Տեղաբաշխման ձևը՝		
Արժեթղթերի թողարկման արժույթը՝	**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	**10,000 (տասը հազար) ՀՀ դրամ**	**25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար**
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	**մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ**	**մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 3

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5

1.1 Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ 5
1.2 Բանկին և Բանկի պարտատոմսերին առնչվող ռիսկեր 12
1.3 Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 15
1.4 Բանկի աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուները 16
1.5 Բանկի կառավարման մարմինների անդամները, խոշոր բաժնետերերը և աշխատակիցները 16
Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ 17
1.6 Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները 17
1.7 Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը 19
1.8 Այլ էական տեղեկություններ 20
1.9 Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները 21

ԲԱԺԻՆ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 23

2.1 Ռիսկային գործոններ 23
2.2 Հիմնական տեղեկատվություն 24
2.3 Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ 25
2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները 35
2.5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 37
2.6 Լրացուցիչ տեղեկատվություն 38

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39

3.1 Անկախ աուդիտորները 39
3.2 Ռիսկային գործոններ 39
3.3 Տեղեկատվություն Բանկի մասին 43
3.4 Բիզնեսի նկարագիրը 48
3.5 Բանկի կառուցվածքը 58
3.6 Զարգացման վերջին միտումները 59
3.7 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 59
3.8 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 60
3.9 Հսկող անձինք 70
3.10 Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 70
3.11 Էական պայմանագրերը 71
3.12 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 72
3.13 Այլ տեղեկատվություն 72

AraratBank	ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ծրագրային ազդագրի բովանդակությունը» :

Ստորագրող անձինք՝

Գրիգոր Հովհաննիսյան	**Խորհրդի նախագահ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արզիկ Սուվարյան	**Խորհրդի անդամ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նարեկ Բեգլարյան	**Խորհրդի անդամ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կորյուն Աթոյան	**Խորհրդի անդամ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Բաբաջանյան	**Խորհրդի անդամ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Անանյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաշյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Գրիգորյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

AraratBank	**ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի

Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Միեր Անանյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		05.04.22թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԲԱՆԿ ԿԱՄ ԹՈՂԱՐԿՈՂ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԱԶԴԱԳԻՐ) ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.araratbank.am:

2019 և 2020 թվականների դրությամբ ներկայացված ֆինանսական տվյալների աղբյուր են հանդիսանում տարեկան աուդիտորական եզրակացությունները, իսկ մնացած տվյալներն աուդիտի կողմից ստուգված չեն:

1.1 Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ АРАРАТБАНК открытое акционерное общество
անգլերեն՝ ARARATBANK Open Joint-Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ռուսերեն՝ ОАО АРАРАТБАНК
անգլերեն՝ ARARATBANK OJSC

Բանկի ապրանքային նշանն է՝

AraratBank

Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի փողոց 87 շենք, 85 տարածք

Բանկի գրանցման համարն է՝ 4:

Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի փողոց 87 շենք, 85 տարածք

Կապի միջոցները՝ հեռ.՝ (+374 10) 59-23-23,
ֆաքս՝ (+374 10) 54-78-94,
էլ. փոստ՝ info@araratbank.am,
ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ներդրումային ծառայությունների վարչության պետ Անահիտ Շաքարյանի հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 59 23 01:

Բանկը հիմնադրվել է ՀՀ կապի նախարարության ձեռնարկությունների կողմից, որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, և 1991թ.-ի սեպտեմբերի 20-ին որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ ՍՊԸ գրանցվել է Պետական բանկում, գրանցման համար 4: Այնուհետև, Բանկը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում՝ 1994թ.-ի մարտի 31-ին:

Բանկն իր բնականոն գործունեությունն իրականացրել է մինչև 2000թ.-ի նոյեմբեր ամիսը: Այնուհետև 21.11.2000թ.-ին ՀՀ ԿԲ-ի կողմից Բանկում նշանակվել է նախնական խնամակալություն, 15.06.2001թ.-ին խնամակալություն, որից հետո 19.03.2002թ.-ին՝ ժամանակավոր ադմինիստրացիա, որի գործունեությունն ավարտվել է 29.10.2004թ.-ին:

Բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի 2002թ.-ի դեկտեմբերի 27-ի որոշման համաձայն Բանկը վերակազմավորվել է որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 2003թ.-ի հունվարի 23-ին), այնուհետև անվանափոխվել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

2009 թվականին Բանկն իր դուստր ընկերության՝ «Իզմիրլյան» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ ձևավորել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ խումբ: 2010 թվականին «Իզմիրլյան» ՈՒՎԿ ՍՊԸ-ն լուծարվել է, և դուստր ընկերության լուծարման հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2010թ. փետրվարի 26-ի համապատասխան որոշմամբ:

Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին կայացվել է որոշում Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, համաձայն որի՝ լրացուցիչ թողարկվել է 483,230 (չորս հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուն) հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Տեղաբաշխման արդյունքում Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալն ավելացել է մոտ 8.5 մլրդ ՀՀ դրամով:

2016 թվականի նոյեմբերի 8-ին Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը հաստատել է լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք 2016 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը: 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ, կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը: 2017 թվականին Բանկն ավարտեց «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ ինտեգրման գործընթացը:

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի վերջին փոփոխությունները տեղի են ունեցել և հաստատվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից 2022 թվականի հունվարի 26-ին:

2021 թվականի ընթացքում տեղի են ունեցել նաև փոփոխություններ Բանկի ղեկավարների կազմում: Վերջիններիս և հսկող անձանց վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ազդագրի հաջորդ մասերում (Կետեր՝ 1.5 , 3.8 և 3.9):

Բանկն իր հեռանկարային զարգացումը նախանշելիս առաջնորդվում է *«Կանխատեսել՝ նշանակում է կառավարել»* գաղափարախոսությամբ՝ փորձելով հնարավորինս ճշգրիտ և համակողմանի կանխատեսել սպասվող հնարավոր զարգացումները՝ նպատակ ունենալով

բարձրացնել կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների արդյունավետությունը և հասցեականությունը:

Բանկի առաքելությունն է ապահովել Բանկի կայուն շարունակական զարգացումը, նպաստել երկրի տնտեսության զարգացմանը և կրել սոցիալական պատասխանատվություն հասարակության առջև՝ արժեքներ ստեղծելով Բաժնետերերի, Հաճախորդների և Աշխատողների համար:

Բանկի տեսլականն է լինել կայուն, լայն և արդյունավետ մասնաճյուղային ցանց ունեցող հանրային Բանկ՝ օգտագործելով լավագույն միջազգային և նորագույն տեխնոլոգիաները, ունենալ առաջատար դիրքեր ՓՄՁ վարկավորման, առևտրի ֆինանսավորման, ներդրումային և թվային բանկինգի ուղղություններով:

Բանկի արժեքներն են՝

- Հաճախորդներ՝ ձեռքբերված տարիների ընթացքում, որոնց համար Բանկն իրականացնում է որակյալ սպասարկում և մատուցում միջազգային մակարդակի ծառայություններ:
- Բաժնետերեր՝ կայուն զարգացում ու բարձր վարկանիշ ունեցող միջազգային և տեղական, որոնք ունեն անհրաժեշտ գիտելիքներ, հնարավորություններ և ունակություններ զարգացնելու Բանկը:
- Անձնակազմ, որն իր գիտելիքների, հմտությունների, Բանկի որդեգրած արժեքներին և առաքելությանը նվիրվածության շնորհիվ հանդիսանում է Բանկի գործունեության արդյունավետության և հաջողության գրավականը:
- Բանկային տեխնոլոգիաներ՝ լավագույն միջազգային և նորագույն՝ տեղայնացված ներքին միջավայրին:
- Միջազգային գործընկերներ, որոնք իրենց գործիքակազմով ու հարուստ փորձով հնարավորություն են տալիս դիվերսիֆիկացնել Բանկի կողմից ներգրավվող միջոցները և նպաստում են Բանկի զարգացմանը:

Բանկի նպատակն է՝ Հայաստանի բանկային համակարգում գրավել առաջատար դիրքեր՝ նպաստելով իր հաճախորդների, բաժնետերերի, անձնակազմի՝ ասել է թե ՀՀ բոլոր քաղաքացիների բարեկեցությանն ու կենսամակարդակի բարելավմանը, բարօրությանը:

Բանկն իր նպատակներին հասնելու համար որդեգրել է համակարգային մոտեցում՝ որպես զարգացման հեռանկարային ուղղություններ առանձնացնելով հետևյալ երեք ուղղությունները՝

- ✓ ավանդական բանկային ծառայություններ (Classic Commercial Banking),
- ✓ ներդրումային բանկային ծառայություններ (Investment Banking),
- ✓ թվային բանկային ծառայություններ (Digital Banking):

2017թ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն Բանկի բաժնետերերի կազմում, մասնավորապես՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը վաճառել է Բանկի բաժնետոմսերում իր ունեցած բաժնեմասը և այլևս բաժնետեր չի հանդիսանում:

2019թ.-ի հունիսի 25-ին տեղի ունեցավ Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետերերի բաժնեմասնակցության չափի փոփոխություն. Բանկի բաժնետեր Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ն վաճառել է, իսկ Բանկի բաժնետեր՝ Բարսեղ Բեգլարյանը ձեռք է բերել 75,531 հատ բաժնետոմս, որի արդյունքում Բարսեղ Բեգլարյանի բաժնեմասնակցության չափը Բանկի կանոնադրական կապիտալում դարձել է 22.626284%, իսկ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ինը՝ 4.289809%:

2020թ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն Բանկի բաժնետերերի կազմում, մասնավորապես՝ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ն վաճառել է Բանկի բաժնետոմսերում իր ունեցած բաժնեմասը և այլևս բաժնետեր չի հանդիսանում:

31.12.2021թ. դրությամբ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 5 և ավել տոկոս բաժնետերեր են հանդիսանում «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, որի բաժնեմասը կազմում է կանոնադրական կապիտալի 72.73%-ը և Բարսեղ Բեգլարյանը՝ 22.63%-ը: Բանկի բաժնետոմսերի մնացած մասի՝ 81,815 բաժնետոմսերի սեփականատերեր են հանդիսանում ընդհանուր թվով 70 բաժնետերեր՝ 3 իրավաբանական անձ և 67 ֆիզիկական անձ (տվյալները ներկայացված են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, 31.12.2021 թվականի դրությամբ):

Բանկի կանոնադրական կապիտալը 31.12.2021թ.-ին կազմել է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից, իսկ էմիսիոն եկամուտը՝ 8,031,745 հազ. ՀՀ դրամ:

Բիզնեսի համառոտ նկարագիրը

Բանկը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել բանկային գործունեությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները, մասնավորապես՝

Միջոցների ներգրավում: Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսագումարների վճարման պարբերականության:

Վարկերի և միջոցների այլ տեղաբաշխումներ: Բանկն իրականացնում է բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), բնակարանի ձեռքբերման, վերանորոգման և կառուցապատման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, անշարժ գույքի գրավով և առանց գրավի ապահովման սպառողական վարկավորում, ուսանողական վարկերի տրամադրում, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային ֆինանսավորում:

Արտարժույթի և արժեթղթերի առուվաճառք: Բանկն ակտիվորեն մասնակցում է ՀՀ արժեթղթերի երկրորդային շուկայում առևտրին, ինչպես նաև արտարժույթի բորսայական առևտուրներին:

Թվային բանկային ծառայություններ:

- Ավանդական բանկային ծառայությունների թվայնացում ԱրարատՄոբայլ հավելվածի և ինտերնետ հարթակների օգնությամբ,
- Ավտոմատ ինքնասպասարկող սարքերի VTM (Virtual Teller Machine) ներդրում,
- Արժեթղթերի առք ու վաճառքի գործընթացի թվայնացում:

Ժամանակակից ներդրումային բանկային ծառայություններ:

- Միջազգային շուկայում բրոքերային ծառայությունների մատուցում,
- Տեղական շուկայում բրոքերային ծառայությունների մատուցում,
- Արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի միջնորդավորված վարում,
- Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցում:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, հանդիսանալով Կառավարության կողմից լիազորված օպերատոր, իրականացնում է պետական մարմինների պատվիրակված գործառույթներ:

Բանկը 1997թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային մի շարք բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը՝ Բանկը կարևորում է արագ դրամական փոխանցման համակարգերի հետ համագործակցության ընդլայնումը և կատարելագործումը: Այս նպատակով 2022 թվականին

Բանկը շարունակելու է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, IntelExpress, Ria Money և MoneyTun արագ դրամական փոխանցման համակարգերի հետ:

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, որոնց թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Բանկը թողարկում է ArCa բանկային վճարային քարտեր (ArCa Classic, ArCa կենսաթոշակային, ArCa մանկան, ArCa Gift, Arca Green Line), Visa քարտեր (Visa Classic, Visa Gold, Visa Infinite), Master քարտեր (MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business), ինչպես նաև Diners քարտեր (Diners Club Young Professional, Diners Club Super Premium):

2007 թվականի ընթացքում Բանկը դարձել է MasterCard համակարգի աֆիլիատ անդամ, իսկ 2008 թվականից սկսած թողարկում է Cirrus/Maestro, MasterCard Standard, MasterCard Gold քարտեր:

2010 թվականի օգոստոսին դառնալով VISA International վճարային համակարգի ասոցացված անդամ՝ 2011 թվականից Բանկը թողարկում է VISA GOLD, VISA CLASSIC և VISA INFINITE քարտեր, իսկ վերջիններիս քանակն ավելացնելու, սպասարկման որակը բարձրացնելու և տեխնիկական վերազինում իրականացնելու նպատակով՝ կատարում է ներդրումներ: 2013թ.-ին Բանկը դարձավ VISA միջազգային վճարահաշվարկային համակարգի պրինցիպալ անդամ, ինչը հնարավորություն տվեց Բանկին տրամադրել հաճախորդներին ծառայությունների ավելի ընդլայնված և արդիականացված փաթեթ:

2013թ.-ից Բանկը պաշտոնապես դարձավ DinersClub միակ թողարկող բանկը ՀՀ-ում և տարեվերջին Բանկը թողարկեց սուպեր պրեմիում դասի DinersClub Super Premium և պրեմիում դասի DinersClub Young Profesional վճարային քարտերը:

2015 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը, 2016 թվականին բարձրացվեց սպասարկվող վճարային քարտերի անվտանգության մակարդակը՝ պայմանավորված 3D secure համակարգի ներդրմամբ: Բանկի բանկոմատներում ներդրվեցին զեղծարարությունները զսպող՝ Antiskimmer ծրագրային ապահովումը: Իրականացվեց նաև Բանկի կողմից թողարկվող քարտերի PIN (Personal Identification Number) ծրարների ամբողջական տպագրում Բանկի տարածքում:

2015թ.-ից Բանկն Իդրամ ընկերության հետ համատեղ իրականացրեց www.arca.am պորտալով և ArCa համակարգի ներքո սպասարկվող բանկերի բանկոմատներով կոմունալ վճարումների ընդունումը:

Ներկայումս Բանկի կողմից թողարկվում և սպասարկվում են MasterCard, Visa, Diners Club և ArCa վճարային համակարգերի քարտեր: Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է Բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ:

Բանկն իրականացնում է Սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման գործառույթ, ինչպես նաև որպես ապահովագրական գործակալ իրականացնում է ապահովագրական պայմանագրերի վաճառք:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, ինչպես նաև բանկոմատների, POS տերմինալների և վճարային տերմինալների միջոցով:

Ավանդական բանկային ծառայություններից բացի Բանկն առաջարկում է նաև ներդրումային և թվային բանկային ծառայություններ:

Ազդագիրը ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ (05.04.2022թ.) Բանկի մասնաճյուղերի թիվը կազմել է 51՝ 50-ը ՀՀ տարածքում և 1 մասնաճյուղ ԼՂՀ-ում:

31.12.2021թ. դրությամբ Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1,014 մարդ:

Բանկն ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB USA), Եվրասիական Զարգացման Բանկի (EDB Russia), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE Luxembourg), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), BLUEORCHARD MICROFINANCE FUND (Switzerland) Covid-19 Emerging and Frontier Markets MSME Support, Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), ResponsAbility (Switzerland), Legal Owner Triodos Funds B.V.L and Triodos SICAV II, Microfinance Enhancement Facility SA, SICAV-SIF, Commerzbank AG (Germany), Ասիական Զարգացման բանկ (ADB), SYMBIOTICS SICAV ընկերության, ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Բանկը գործում է Երևան քաղաքի կենտրոնում՝ Բյուզանդի 87 շենք, 85-րդ հասցեում գտնվող տարածքում:

Ներկայումս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն որևիցե խմբի անդամ չի հանդիսանում:

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

AraratBank	**ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից թողարկվող կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի



Ստորև ներկայացվում է Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	31.12.2021[1]	31.12.2020	31.12.2019
Ակտիվներ, այդ թվում՝	**270,126,961**	**248,881,437**	**222,446,304**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**209,296,474**	**204,130,472**	**185,144,218**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	147,756,084	148,222,057	135,921,392
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,618,428	14,341,535	10,747,641
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	32,970,740	21,858,087	38,475,185
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	5,847,760	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	13,951,222	8,667,639	-
Ամորտիզացված արժեքով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	5,193,394	-
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	**77.48%**	**82.02%**	**83.23%**

1.2 Բանկին և Բանկի պարտատոմսերին առնչվող ռիսկեր

1.2.1. Բանկին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերը կապված են նրա ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներից և արտահայտվում են ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու հանգամանքով: Բանկը մշտապես զարգացնում է իր ֆինանսատնտեսական վիճակին սպառնացող ռիսկերի կառավարման արդյունավետությունը և որպես հիմնական ռիսկեր դիտարկում վարկային, իրացվելիության, շուկայական, գործառնական, տնտեսության վիճակի և օրենսդրության փոփոխություններով պայմանավորված ռիսկերը: Թողարկողի բնականոն գործունեությանը սպառնացող ռիսկեր կարող են առաջացնել նաև արտաքին գործոնները, որոնք թողարկողից անկախ են: Նման ռիսկերից զերծ մնալու կամ հետևանքները նվազեցնելու նպատակով բանկը մշակում է գործունեության անընդհատության ապահովման և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգեր: Թողարկողի գործունեությանն առնչվող ռիսկերը կարող են հանգեցնել պարտատոմսերի գնի նվազմանը: Բանկի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները գնահատելու համար կարող եք օգտվել բանկի ինտերնետային կայքում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններից:

Վարկային ռիսկը բանկի վարկառուների, փոխառուների և բանկի նկատմամբ պարտավորություններ ստանձնած անձանց կողմից պայմանագրային պարտավորությունները ժամանակին և սահմանված չափով կամ մասամբ չկատարելու հավանականությունն է, ինչը կարող է վնաս հասցնել բանկի կապիտալին: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարումը բանկի կարևորագույն խնդիրներից է:

Իրացվելիության ռիսկն ի հայտ է գալիս, երբ Բանկի ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ դրամական ներհոսքի կրճատման,

[1] 2021թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:

ներգրավման աղբյուրների սահմանափակման, մակրոտնտեսական իրավիճակի, օրենսդրական ու նորմատիվային դաշտի փոփոխություններով և այլ պատճառներով: Իրացվելիության ռիսկի հետևանքով Բանկի՝ ակտիվներն արագ և շուկայական գնով իրացնելու հնարավորությունները կդժվարանան, հետևաբար նաև խնդիրներ կարող են առաջանալ պայմանագրային պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու:

Տոկոսադրույքի ռիսկ, որը ֆինանսական գործիքների տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում արժեքի փոփոխության ռիսկն է, ինչն իր հերթին կարող է ազդել Բանկի զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան, հանգեցնել վնասների: Բանկում տոկոսադրույքի Կառավարման նպատակով կիրառվում են բազիսային, եկամտաբերության կորի փոփոխության և ժամկետային անհամապատասխանության ռիսկերի գծով վերլուծություններ:

Արտարժույթի ռիսկ, որն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկը: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ելնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումներից և հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ՝ նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

Գործառնական ռիսկը, որը կարող է ի հայտ գալ ներքին գործընթացների, համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների բացասական ազդեցության արդյունքում, ինչը կարող է կորուստ բերել բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկի հետևանքով կարող է վտանգվել նաև բանկի համբավը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Բանկի վնասներ կրելու հավանականությունը:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա, որի պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը:

Ընդհանուր տնտեսության և քաղաքական ռիսկեր, երբ ՀՀ և գործընկեր երկրների մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կամ ՀՀ ներքաղաքական, տարածաշրջանային քաղաքական իրավիճակի անբարենպաստ զարգացումները կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա, մասնավորապես՝ կարող են ուղեկցվել Բանկի կողմից սպասվող եկամուտների նվազմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարություններով:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության լիցենզավորման և կարգավորման նպատակը ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունն է, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման

համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

1.2.2 Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Ներդրողը պետք է գիտակցի, որ թողարկողի ֆինանսատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցող ռիսկերի հետևանքով պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը կապված գնի անկման և շուկայում իրացվելիության հետ: Թողարկված պարտատոմսերը շրջանառության ժամկետի ընթացքում կարող են բացասական փոփոխությունների ենթարկվել տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությունների հետևանքով, ուստի թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կարող է իրացնել պարտատոմսերը երկրորդային շուկայում իր համար շահավետ գնով: Այնուամենայնիվ թողարկողը տեղեկացնում է նաև, որ իր գործունեությամբ նպաստում է պարտատոմսերի շուկայի զարգացմանը՝ ակտիվություն ցուցաբերելով պարտատոմսերի թողարկման և ֆոնդային բորսայում դրանց ցուցակման գործընթացներում հնարավոր ռիսկերի շարքում կարելի է նշել.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը: Ներդրողը կարող է կրել նաև փոխարժեքների տատանման հետ կապված կորուստներ ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի փոխանակման ժամանակ: Սույն ռիսկը հատկապես առնչվելի է այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացվող գումարները փոխանակելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի: Օրինակ՝ ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը կարող է կրել նաև արտարժույթի փոխանակման հետևանքով որոշակի կորուստներ կապված իր՝ ՀՀ դրամով արտահայտված միջոցներն ԱՄՆ դոլարի վերածելու և Պարտատոմսերի մարման ժամանակ ԱՄՆ դոլարը ՀՀ դրամի փոխանակման ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկը: Շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ պարտատոմսերի գնի և եկամտաբերության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Վարկային/դեֆոլտի ռիսկը: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

1.3 Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված և պարբերաբար վերանայվող հեռանկարային զարգացման ծրագրերի: Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի և Բանկի գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ Բանկի ակտիվները աճել են 8.54%-ով (21,245,524 հազ ՀՀ դրամով)՝ կազմելով 270,126,961 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 248,881,437 հազ. ՀՀ դրամի դիմաց:

Դիտարկվող ժամանակաշրջանի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 230,565,301 հազ. ՀՀ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 19,910,428 հազ. ՀՀ դրամով կամ 9.45%-ով:

2021 թվականի ընթացքում Բանկը գեներացրել է 1,699,157 հազ. ՀՀ դրամի Զուտ շահույթ՝ 2020 թվականի 1,340,694 հազ. ՀՀ դրամի համեմատ աճելով 26.74%-ով:

հազար ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	2021[2]	2020	2019
Ակտիվներ	270,126,961	248,881,437	222,446,304
Պարտավորություններ	230,565,301	210,654,873	185,041,968
Կապիտալ	39,561,660	38,226,564	37,404,336
Զուտ շահույթ	1,699,157	1,340,694	2,263,647
Զուտ տոկոսային եկամուտ	8,595,070	8,391,398	6,931,752

Բանկի կանոնադրական կապիտալը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը բաղկացած է 1,760,731 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի վերջին փոփոխությունները տեղի են ունեցել և հաստատվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից 2022 թվականի հունվարի 26-ին:

2021 թվականի ընթացքում տեղի են ունեցել նաև փոփոխություններ Բանկի ղեկավարների կազմում: Վերջիններիս և հսկող անձանց վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է Ազդագրի հաջորդ մասերում (Կետեր՝ 3.8 և 3.9):

31.12.2021թ.-ից մինչև ՀՀ ԿԲ Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն (05.04.2022թ.) ընկած ժամանակահատվածում, Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

Ազդագրի ԿԲ գրանցման ներկայացման օրվա դրությամբ (05.04.2022թ.) Բանկի գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, Բանկի դեմ չկան և չեն սպասվում դատական հայցեր, որոնք կարող են էական նյութական, բացասական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական վիճակի կամ Բանկի զարգացման հեռանկարների վրա:

[2] 2021թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:

1.4 Բանկի աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուները

Բանկի 2009, 2010 և 2011 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն, որի հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, հեռ.՝ +374 10 595 999, ինտերնետային կայք՝ http://www.kpmg.am, կազմակերպության գործադիր տնօրեն՝ Տիգրան Գասպարյան: 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020, 2021 թվականների անկախ աուդիտն իրականացրել է՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որի հասցեն է ՀՀ ք. Երևան 0015, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք («Երևան Պլազա» բիզնես-կենտրոն), հեռ.՝ (+37410) 500 964, ինտերնետային կայք՝ http://www.grantthornton.am, կազմակերպության տնօրեն՝ Արմեն Հովհաննիսյան:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի՝ 2019-2020թթ. եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

1.5 Բանկի կառավարման մարմինների անդամները, խոշոր բաժնետերերը և աշխատակիցները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով),
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի գործադիր տնօրեն (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է հինգ անդամներից.

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	**Գրիգոր Հովհաննիսյան**	Խորհրդի նախագահ	28 տարի
2	**Արզիկ Սուվարյան**	Խորհրդի անդամ	27 տարի
3	**Նարեկ Բեգլարյան**	Խորհրդի անդամ	16 տարի
4	**Կարեն Բաբաջանյան**	Խորհրդի անդամ	15 տարի
5	**Կորյուն Աթոյան**	Խորհրդի անդամ	41 տարի

Բանկի վարչությունը կազմված է յոթ անդամներից.

	Անուն, ազգանուն	Պաշտոն	Փորձառությունը
1	**Միեր Անանյան**	Վարչության նախագահ, գործադիր տնօրեն	31 տարի
2	**Կարեն Սարգսյան**	Վարչության անդամ, գործադիր տնօրենի առաջին տեղակալ	31 տարի
3	**Բագրատ Ճզմաչյան**	Վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	39 տարի

4	**Միեր Գրիգորյան**	Վարչության անդամ, գործադիր տնօրենի տեղակալ	18 տարի
5	**Տիգրան Գալստյան**	Վարչության անդամ, գլխավոր հաշվապահ	37 տարի
6	**Զարուհի Մելքոնյան**	Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ	30 տարի
7	**Կարեն Հակոբյան**	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	15 տարի

31.12.2021թ. դրությամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 5 և ավել տոկոս բաժնետերեր են հանդիսանում «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, որի բաժնեմասը կազմում է կանոնադրական կապիտալի 72.73%-ը, Բարսեղ Բեգլարյանը՝ 22.63%-ը: Բանկի բաժնետոմսերի մնացած մասի՝ 81 815 բաժնետոմսերի սեփականատերեր են հանդիսանում ընդհանուր թվով 70 բաժնետերեր՝ 3 իրավաբանական անձ և 67 ֆիզիկական անձ (տվյալները ներկայացված են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, 31.12.2021 թվականի դրությամբ):

31.12.2021 թվականի դրությամբ Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1,014 մարդ:

Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ մինչ այժմ կատարել է պարտատոմսերի 21 թողարկում, որոնցից 4-ը գտնվում են շրջանառության մեջ 05.04.2022 թվականի դրությամբ:

Արժեթուղթ	Շրջանառության մեջ առկա ծավալ	Արժույթը	Արժեկտրոնի եկամտաբերություն	Շրջանառության ժամկետ	Մարման ամսաթիվ
AMARBKB2HER3	8,000,000	ԱՄՆ դոլար	5.25%	51 ամիս	22.04.2022
AMARBKB2IER1	3,000,000	ԱՄՆ դոլար	5.25%	51 ամիս	11.09.2022
AMARBKB2KER7	3,000,000	ԱՄՆ դոլար	5.5%	51 ամիս	19.09.2023
AMARBKB2LER5	2,854,725	ԱՄՆ դոլար	5.5%	51 ամիս	29.01.2024

1.6 Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

Պարտատոմսերի տեսակը՝	անվանական արժեկտրոնային
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	եռամսյակային
Պարտատոմսերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը՝	ոչ փոխարկելի

Պարտատոմսերի թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի թողարկման ծավալը՝	մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ	մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանները ենթակա են հրապարակման՝ հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանները հրապարակվելու են առնվազն Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:	
Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման օրերը՝		
Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝		
Պարտատոմսերի տոկոսադրույքը՝		
Պարտատոմսերի շրջանառության ձևը՝	ազատ շրջանառության իրավունքով	

Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային վճարումները և մարումը կատարվելու են այն արժույթով, որով թողարկվել են պարտատոմսերը:

ՀՀ դրամով թողարկած պարտատոմսերի արժեկտրոնային վճարումները և մարումը կատարվելու են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով թողարկած պարտատոմսերի արժեկտրոնային վճարումները և մարումը կատարվելու են ԱՄՆ դոլարով:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:

Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումն իրականացվելու է ուղղակի վաճառքի սկզբունքով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով: Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը, և այլ էական մանրամասները ենթակա են որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է՝ ներգրավվող միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացումը և ներգրավվող միջոցների ծախսատարության նվազեցումը: Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

1.6.1. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները Ենթակա են որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը

սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանները հրապարակվելու են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

1.7 Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Բանկը պարտատոմսերի թողարկման Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նախատեսում է թողարկել է մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով դրամային և մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով):

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Բանկի Խորհրդի առանձին որոշումներով յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանների մասին տեղեկատվությունը կհրապարակվի հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, ընդ որում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է տեղաբաշխման գործընթացը: Ազդագիրը և թողարկման վերջնական պայմանները կհրապարակվեն Բանկի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am, և պարտատոմսերի տեղաբաշխումը կսկսվի ոչ շուտ, քան Ազդագրի հրապարակումից 3 (երեք) աշխատանքային օր հետո:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի Խորհրդի որոշմամբ :

Պարտատոմսեր գնելու նպատակով՝ Ներդրողը Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում ներկայացնում է Պարտատոմսերի ձեռքբերման հայտ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք:

Բանկի պարտատոմսերում ներդրողն իր կողմից ներկայացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտի բավարարման մասին տեղեկացվում է մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է առանց մասնագիտացված կազմակերպության (անդերռայթերի) մասնակցության:

Պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները կարող են կատարվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով, ինչպես նաև այլ առևտրային բանկերի միջոցով: Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշիվները բացվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Բանկի Խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 (երկու) օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Թողարկված պարտատոմսերը առանձին տրանշներով տեղաբաշխելու դեպքում յուրաքանչյուր առանձին տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է Բորսային՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար:

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

1.8 Այլ էական տեղեկություններ

Բանկի Կանոնադրությունը և ֆինանսական հաշվետվությունները հասանելի են Բանկի պաշտոնական կայքում՝ www.araratbank.am, ինչպես նաև Ազդագրին կից Հավելվածներում:

1.9 Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշի անվանումը	2021[3] (աուդիտ չանցած)	2020 (աուդիտ անցած)	2019 (աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,699,157	1,340,694	2,263,647
Սեփական կապիտալի միջին մեծություն	38,894,112	37,815,450	36,157,793
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE),%	***4.37%***	***3.55%***	***6.26%***
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,699,157	1,340,694	2,263,647
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	259,504,199	235,663,871	221,637,394
Ակտիվների շահութաբերություն (ROA),%	***0.65%***	***0.57%***	***1.02%***
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,699,157	1,340,694	2,263,647
Գործառնական եկամուտ[4]	12,368,118	10,928,639	9,383,132
Զուտ շահույթի մարժա (NPM), %	***13.74%***	***12.27%***	***24.12%***
Գործառնական եկամուտ	12,368,118	10,928,639	9,383,132
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	259,504,199	235,663,871	221,637,394
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	***4.77%***	***4.64%***	***4.23%***
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	259,504,199	235,663,871	221,637,394
Սեփական կապիտալի միջին մեծություն	38,894,112	37,815,450	36,157,793
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	***6.67***	***6.23***	***6.13***
Զուտ տոկոսային եկամուտ	8,595,070	8,391,398	6,931,752
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	206,713,473	194,637,345	177,710,471
Զուտ տոկոսային մարժա (NIM), %	***4.16%***	***4.31%***	***3.90%***
Տոկոսային եկամուտ (ՏԵ)	19,091,237	17,554,101	16,097,745
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (ՄԵԱ)	206,713,473	194,637,345	177,710,471

[3] 2021թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:

[4] Ներառում է զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները, ինչպես նաև ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարները:

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	***9.24%***	***9.02%***	***9.06%***
Տոկոսային ծախսեր (ՏԾ)	10,496,167	9,162,703	9,165,993
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (ՄԾՊ)	215,224,510	193,033,656	182,243,137
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր, %	***4.88%***	***4.75%***	***5.03%***
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,699,157	1,340,694	2,263,647
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	1,760,731	1,760,731	1,760,731
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	***0.97***	***0.76***	***1.29***
Սփրեդ (ՏԵ)/(ՄԵԱ) - (ՏԾ)/(ՄԾՊ)	***4.36%***	***4.27%***	***4.03%***

ԲԱԺԻՆ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային գործոններ

Արժեթղթերի շուկայում՝ ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի իրացվելիության և հետևաբար գնի անկմանը:

2.1.1. Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Բանկի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը՝ պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան ձեռք բերման գինը:

Արտարժութային ռիսկը՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Օրինակ՝ ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը կարող է կրել նաև արտարժույթի փոխանակման հետևանքով որոշակի կորուստներ կապված իր ՀՀ դրամով արտահայտված միջոցներն ԱՄՆ դոլարին վերածելու և Պարտատոմսերի մարման ժամանակ ԱՄՆ դոլարը ՀՀ դրամի փոխանակման ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկը, տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողները, ովքեր Բանկի պարտատոմսերը ձեռք կբերեն ձեռք բերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռք բերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորությունների հավանական բացակայությամբ: Հավանական է, որ

վերաներդրման ռիսկը ներդրումային որոշում կայացնելու գործընթացում էական գործոն չի հանդիսանա ընթացիկ կամ կարճաժամկետ (մեկ արժեկտրոնային ժամանակամիջոցից ոչ ավել) ներդրումային հորիզոն ունեցող ներդրողների համար:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Բանկի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել ավելի ցածր (գնաճի չափով) անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

2.2. Հիմնական տեղեկատվություն

2.2.1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակն է ներգրավվող միջոցների աղբյուրների դիվերսիֆիկացումը և ներգրավվող միջոցների ծախսատարության նվազեցումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Միաժամանակ պետք է նշել, որ Բանկը, հանդիսանալով կորպորատիվ պարտատոմսերի թողարկում իրականացրած առաջին բանկերից մեկը, շարունակում է իր կողմից որդեգրած պարտատոմսերի թողարկման ավանդույթը՝ հաշվի առնելով շուկայում ձևավորված պահանջարկը և ներդրողների սպասումները:

2.2.2. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային տեղաբաշխումը սկսելուց առնվազն 3(երեք) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Բանկը պարտավորվում է հրապարակել թողարկման օրվանից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ առնվազն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

2.3 Տեղեկատվություն առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերն անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, իսկ դրանց շուրջ ծագող հնարավոր վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն նախատեսում է պարտատոմսերի թողարկման Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում իրականացնել մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով դրամային և մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

2.3.1. Պարտատոմսերի պայմանները

Պարտատոմսերի տեսակը	անվանական արժեկտրոնային	
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային	
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի	
Պարտատոմսերի թողարկման արժույթը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:	
Պարտատոմսերի թողարկման ծավալը	մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ	մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի ռեեստրը	Պարտատոմսերի ռեեստրը ենթակա է վարման «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից	
Տեղաբաշխող	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	
Շուկա Ստեղծող	Բանկը նախատեսում է օգտվել Շուկա ստեղծողի ծառայություններից:	
Պարտատոմսերի տեղաբաշխումը	Ուղղակի վաճառքի ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:	
Թողարկումը	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են Բանկի խորհրդի 2022թ. մարտի 4-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 14/Լ-Հ որոշմամբ	

	սահմանված ընդհանուր պայմաններով և յուրաքանչյուր թողարկման դեպքում Խորհրդի առանձին որոշումներով:
Պարտատոմսերի թողարկման օրը, շրջանառության ժամկետը,	Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Բանկի Խորհրդի առանձին որոշումներով յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանների մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման օր է համարվելու տեղաբաշխման առաջին օրը, որից սկսած կհաշվարկվեն պարտատոմսերի դիմաց հաշվարկվող արժեկտրոնային տոկոսները:
Արժեկտրոնի տոկոսադրույքը	Յուրաքանչյուր տրանշի համար պարտատոմսերի արժեկտրոնների տոկոսադրույքը սահմանվելու է Բանկի Խորհրդի առանձին որոշմամբ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ:
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը	Եռամսյակային (4 անգամ օրացուցային տարվա մեջ)
Արժեկտրոնների հաշվարկման օրերը	Ազդագրի շրջանակներում յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային տոկոսները կհաշվարկվեն թողարկման օրվանից սկսած, ընդ որում տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում: Յուրաքանչյուր տրանշով տեղաբաշխվող պարտատոմսերի թողարկման օր է համարվելու տեղաբաշխման առաջին օրը, որից սկսած կհաշվարկվեն պարտատոմսերի դիմաց հաշվարկվող արժեկտրոնային տոկոսները:
Օրերի հաշվարկման պայմանականությունը	փաստացի/փաստացի. **DCC**=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D1M1Y1 **DSN**=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 - D2M2Y2 որտեղ՝ D1M1Y1 - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

	D2M2Y2 - գործարքի կատարման ամսաթիվն է, D3M3Y3 - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Արժեկտրոնի կուտակումը	**Արժեկտրոնի կուտակումը** կիրականացվի հետևյալ բանաձևով՝ $$[\,AI = FV * \frac{C}{4} * \frac{DCS}{DCC}\,]$$ AI – Կուտակված տոկոս FV – Պարտատոմսերի անվանական արժեք C – Արժեկտրոնի տոկոսադրույք DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի փաստացի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում **Արժեկտրոնների վճարումները** կկատարվեն հավասարաչափ՝ համաձայն հետևյալ բանաձևի. $PC=\frac{C}{4}$ Որտեղ՝ C – Տարեկան արժեկտրոնի գումարն է
Պարտատոմսերի գինը	**Պարտատոմսի գինը** որոշվելու է հետևյալ բանաձևով. $$P = \frac{C}{4}\sum_{i=1}^{N}\left[\frac{1}{\left(1+\frac{y}{100*4}\right)^{i-1+\tau}}\right] + \left[\frac{FV}{\left(1+\frac{y}{100*4}\right)^{N-1+\tau}}\right]$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ **DSN** - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի:

	DCC - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է՝ օրերի հաշվարկման պայմանականությունը փաստացի/փաստացի: **P** - պարտատոմսի գինն է: **N** - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է: **Y** - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է: **C** - տարեկան արժեկտրոնի չափը: **i** – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում i արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև N արժեքները (երբ N-ը ընդունում է 1 արժեք, i –ն նույնպես ընդունում է 1 արժեք): FV – Պարտատոմսերի անվանական արժեք:
Պարտատոմսերի եկամտաբերությունը	Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվելու է հետևյալ կերպ՝ $EAY=(1+C/4)^4-1$, որտեղ՝ 1) EAY - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է: 2) C - տարեկան արժեկտրոնների տոկոսադրույքն է:
Պարտատոմսերի մարման օրը	Թողարկվող և տեղաբաշխվող յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի համար Բանկի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am Ազդագրի հրապարակումից հետո յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ լրացուցիչ կհրապարակվի նաև տեղաբաշխվող պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով: Եթե արժեկտրոնային եկամտի կամ մարման գումարի վճարման օրը լինի ոչ աշխատանքային, ապա վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը:
Արժեկտրոնների և պարտատոմսերի մարման արժույթ	ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և պարտատոմսերի ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար արժեկտրոնների վճարումը և մարումն իրականացվում

	մարումն իրականացվում է ՀՀ դրամով	է ԱՄՆ դոլարով
Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում	Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի դիմաց արժեկտրոնային եկամուտները վճարվելու են եռամսյակային պարբերականությամբ: Արժեկտրոնային եկամուտների վճարման փոխանցումը Բանկի կողմից կատարվելու է արժեկտրոնի հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24^{00}-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկն արժեկտրոնային եկամտի վճարման օրը մինչև ժամը 14^{00}-ն վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են: Թողարկված յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարվելու է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24^{00}-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը պարտատոմսերի մարման օրը մինչև ժամը 14^{00}-ն համապատասխան վճարումները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին: Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին արժեկտրոնային եկամուտների վճարման կամ մարման գումարի փոխանցման անհնարինության դեպքում այն մուտքագրվելու է համապատասխան տարանցիկ հաշիվ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը: Պարտատոմսերի ոչ ռեզիդենտ սեփականատերերի առկայության դեպքում, Բանկը արժեկտրոնի վճարումը ՀՀ տարածքում կիրականացնի այնպես, ինչպես ռեզիդենտ սեփականատերերին, մնացած դեպքերում՝ սեփականատիրոջ հանձնարարագրով և Բանկի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների համար, Բանկում գործող սակագներով, կփոխանցի համապատասխան հաշվին:	

Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում	Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների:
Ցուցակումը	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկի սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:

2.3.2. Տեղեկություններ պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքների վերաբերյալ

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

✓ Ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:

✓ Իրականացնել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող ցանկացած գործառույթ:

✓ Թողարկման օրվանից հաշված եռամսյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

✓ Բանկի կողմից Պարտատոմսերի մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ՝ օրենքով վերապահված իրավունքներից:

✓ Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:

✓ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք:

✓ Օրենքով և իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Օրենքով և իրավական ակտերով սահմանված պարտատոմսերի սեփականատերերի իրավունքների սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով և նույն օրենքով սահմանված կարգով ենթակա են հատուցման 3-րդ հոդվածով սահմանված չափերով, այն է՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման նպատակով:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ, վերջինիս կողմից սահմանված կանոններին համաձայն, իր հաշվին բացել անձնական հաշիվ և դրա տվյալները ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ ցանկացած այլ բանկում իր անվամբ բացել դրամային և դոլարային բանկային հաշիվ և դրա տվյալները ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, իսկ դրամային և դոլարային բանկային հաշիվ ունենալու դեպքում՝ անհրաժեշտ է տվյալներն ուղղակի ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների՝ հետևյալ դեպքերի համար.

1. մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ ՀՀ ԿԲ խորհրդի 27 նոյեմբեր 2012 թվականի թիվ 331-Ն որոշման համաձայն՝ մասնավոր գործարքներ են համարվում՝

ա. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,

բ. Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,

գ. Արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները,

2. պարտատոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

3. շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից՝ վերջինիս հաշվի օպերատորների միջոցով:

ՀՀ օրենսդրությամբ, Թողարկողի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

Թողարկողի պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից տրամադրված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակում նշված հաճախորդի հաշվին:

2.3.3. Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Թողարկողի առաջարկվող պարտատոմսերի մարումների և Բանկի կողմից ներգրավված այլ պարտավորությունների մարումների միջև ստորադասություն չկա: Այսինքն, Բանկը չունի այնպիսի պարտավորություն, որի պարտատերերն ունեն մարման առաջնահերթություն այլ պարտատերերի, այդ թվում նաև առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի նկատմամբ: Թողարկողի սնանկության դեպքում Թողարկողի գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ՝ համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգի: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները՝ կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո 3-րդ և 4-րդ հերթին, մասնավորապես վերը նշված օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է պարտավորությունների մարման հետևյալ հերթականությունը.

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային

ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն,

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

ե1) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

ե2) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «զ» ենթակետով սահմանված հերթում:

«գ» ենթակետով սահմանված անձի՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է «գ» ենթակետով սահմանված հերթում, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ «դ» ենթակետով սահմանված հերթում:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:

Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

2.3.4. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող պարտատոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը

Կարևոր ծանուցում

Չնայած այն հանգամանքի, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և /կամ

փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- ✓ **Շահութահարկ** (Իրավաբանական անձանց դեպքում),
- ✓ **Եկամտային հարկ** (Ֆիզիկական անձանց դեպքում):

Պարտատոմսերից կարելի է եկամուտ ստանալ հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը),
2. Կապիտալի հավելաճ (ձեռքբերման պահից հետո պարտատոմսի գնի աճը, հաշվարկվում է որպես մինչև մարման օրը պարտատոմսի վաճառքի և գնման գնի դրական տարբերություն):

Շահութահարկ

Շահութահարկ վճարողներ են համարվում ՀՀ գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածներով սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Այս պահին շահութահարկի դրույքը 18 տոկոս է:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի համար կազմում է 10 տոկոս: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում մինչև 2024թ.-ի դեկտեմբերի 31-ը ցուցակված պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից ստացվող եկամուտների մասով ազատվում են շահութահարկի վճարումից: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

Եկամտային հարկ

Եկամտային հարկ վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Այս պահին եկամտային հարկի դրույքաչափը 10 տոկոս է: Թողարկողի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Թողարկողը հանդիսանում է հարկային գործակալ:

2020թ.-ի մարտի 1-ից ՀՀ-ում գործող Ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատվում են եկամտային հարկից: Բացառություն են կազմում միայն բանկերի թողարկած այն պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց: Վերոնշյալ դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք ՀՀ գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:

2.4 Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1. Առաջարկի պայմանները, վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և առաջարկից օգտվելու համար անհրաժեշտ գործողությունները

Բանկը՝ պարտատոմսերի թողարկման Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո, մեկ տարվա ընթացքում թողարկելու է անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ և մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով):

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը կազմելու է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները կսահմանվեն Բանկի Խորհրդի առանձին որոշումներով յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Թողարկման վերջնական պայմանների մասին տեղեկատվությունը կհրապարակվի տեղաբաշխումից առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.araratbank.am:

Յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, ընդ որում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածում վաճառքի ենթակա պարտատոմսերի քանակը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է տեղաբաշխման գործընթացը: Ազդագիրը և թողարկման վերջնական պայմանները կհրապարակվեն Բանկի ինտերնետային կայքում՝ www.araratbank.am և պարտատոմսերի տեղաբաշխումը կսկսվի ոչ շուտ, քան ազդագրի հրապարակումից 3(երեք) աշխատանքային օր հետո:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի Խորհրդի որոշմամբ:

Պարտատոմսեր գնելու նպատակով՝ Ներդրողը Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում ներկայացնում է Պարտատոմսերի ձեռքբերման հայտ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ✓ Ներդրողի անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու (լիազորված) անձի ստորագրությունը),
- ✓ Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը,
- ✓ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ը հաշվի օպերատորի կողմից բացված անձնական հաշվի համարը:
- ✓ Ներդրողի դրամային և դոլարային հաշվեհամարները:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտին կից ներկայացվում են.

- ✓ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշի) պատճենները (կամ տեղեկանք սոցիալական քարտ ստանալուց հրաժարվելու մասին),

✓ իրավաբանական անձի դեպքում՝ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը (ներառյալ բոլոր ներդիրները), լիազորված անձի դեպքում՝ նաև լիազորագիրը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 15^{00}-ն ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով, ընդ որում Պարտատոմսերի ձեռքբերման հայտը համարվում է ընդունված, եթե համապատասխան հաշվում առկա է Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 15^{00}-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման հաջորդ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ներկայացրած անձինք գրանցվում են հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, իսկ Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Տեղաբաշխման ընթացքում Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման ծավալների փոփոխության կամ չեղյալ հայտարարելու հնարավորություն:

Պարտատոմսերի ձեռքբերման նվազագույն և առավելագույն մեծությունների վերաբերյալ սահմանափակումներ չկան, որի հետևանքով Պարտատոմսերի ձեռքբերման հայտերում նշվող գումարների վերաբերյալ նվազագույն կամ առավելագույն մեծությունների սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում և/կամ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ցանկացած այլ պահառուի մոտ գնորդի անունով այդ պարտատոմսի գրանցման պահից: Պարտատոմսեր ձեռքբերողները ներկայացված հայտերը բավարարվելուց հետո արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից և/կամ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորից՝ համաձայն վերջիններիս կողմից սահմանված սակագների:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտի օրվանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում Պարտատոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չի նախատեսվում: Պարտատոմսերի ձեռքբերման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

2.4.2. Պարտատոմսերի տեղաբաշխման ծրագիրը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այդ թվում որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին), անհատ ձեռնարկատերերին: Բանկի անվանական պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ուղղակի վաճառքի սկզբունքով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Բանկի պարտատոմսերում ներդրողն իր կողմից ներկայացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտի բավարարման մասին տեղեկացվում է մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը:

2.4.3. Առաջարկի գինը

Ազդագրի շրջանակներում յուրաքանչյուր տրանշով թողարկվող պարտատոմսերի համար տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար պարտատոմսերի վաճառքի գինն ըստ օրերի կհրապարակվի Բանկի ինտերնետային կայքում, որը հաշվարկվելու է Ազդագրի 2-րդ բաժնում սահմանված պարտատոմսի գնի որոշման բանաձևով: Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից մատուցվող ծառայությունների կամ խորհրդատվության դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am:

2.4.4. Տեղաբաշխումը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է առանց մասնագիտացված կազմակերպության (անդերռայթերի) մասնակցության:

Պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները կարող են կատարվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով, ինչպես նաև այլ առևտրային բանկերի միջոցով: Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշիվները բացվում են «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի միջոցով:

2.5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրելու նպատակով Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հարկ է նշել, որ որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերը առևտրի թույլատրման հայտը հնարավոր է չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Բանկի Խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրը ներառյալ արժեկտրոնի հաշվեգրված գումարները:

Թողարկված պարտատոմսերը առանձին տրանշներով տեղաբաշխելու դեպքում յուրաքանչյուր առանձին տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիմելու է Բորսային՝ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար:

Ստորև ներկայացված են Բանկի կողմից թողարկված և Բորսայում ցուցակված պարտատոմսերի տվյալները ՝ 05.04.2022 թվականի դրությամբ:

Արժեթուղթ	Շրջանառության մեջ առկա ծավալ	Արժույթը	Արժեկտրոնի եկամտաբերություն	Շրջանառության ժամկետ	Մարման ամսաթիվ
AMARBKB2HER3	8,000,000	ԱՄՆ դոլար	5.25%	51 ամիս	22.04.2022

AMARBKB2IER1	3,000,000	ԱՄՆ դոլար	5.25%	51 ամիս	11.09.2022
AMARBKB2KER7	3,000,000	ԱՄՆ դոլար	5.5%	51 ամիս	19.09.2023
AMARBKB2LER5	2,854,725	ԱՄՆ դոլար	5.5%	51 ամիս	29.01.2024

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է համապատասխան պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները սահմանվում են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվության հավաքագրման և մշակման համար Բանկը որևիցե խորհրդատուի չի դիմել:

Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվությունը Բանկի անկախ աուդիտորի կողմից աուդիտի չի ենթարկվել:

Սույն Բաժնի 2.5 կետում ներկայացված՝ Բանկի կողմից արդեն իսկ թողարկված և «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում առևտրին թույլատրված և ազատ շրջանառվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրն է՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.amx.am: Ներկայացված տեղեկատվությունը ճշգրտորեն վերարտադրվել է ազդագրում և որևէ փաստ, որը կարող էր խեղաթյուրել այդ տեղեկատվության իմաստը, բաց չի թողնվել: Սույն Բաժնում այլ անձանց կողմից այլ տեղեկատվություն չի տրամադրվել:

Բանկին և Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Անկախ աուդիտորները

Բանկի 2009, 2010 և 2011 թվականների անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն, 2013, 2014, 2015, 2016, 2017, 2018, 2019, 2020 և 2021 թվականներին՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեշնլի» անդամ, իսկ «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Ինտերնեշնլ» կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ.

հասցե՝ ՀՀ ք. Երևան 0015, Գ. Լուսավորիչ փ. 9, «Երևան Պլազա» բիզնես-կենտրոն
հեռ.՝ +374 10 50-09-64,
ինտերնետային կայք՝ http://www.grantthornton.am,
կազմակերպության տնօրեն-բաժնետեր՝ Արմեն Հովհաննիսյան

«Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ.

հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փ. 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն,
հեռ.՝ +374 10 59 59 99,
ինտերնետային կայք՝ http://www.kpmg.am,
կազմակերպության գործադիր տնօրեն՝ Տիգրան Գասպարյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի եզրակացությունները ներկայացված են Ազդագրին կից Հավելվածներում:

Նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի աուդիտն իրականացրած անձի կողմից աշխատանքից հրաժարման դեպք չի եղել:

3.2 Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ստորև շարադրված ռիսկերի ամփոփ նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից՝ Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար: Մասնավորապես կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ռիսկերը:

Վարկային ռիսկ: Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված գործընկերոջ վարկունակության, վարկառուի կողմից պարտավորության չկատարելու կամ մասնակի կատարելու հետ, որոնք Բանկին կարող են կորուստներ պատճառել:

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, վարկավորելիս որպես ապահովվածություն նախապատվություն է տալիս վարկառուի վարկունակությանը և վճարունակությանը, ինչի շնորհիվ խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում բավականին փոքր է: 31.12.2021թ. չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում 2.23% է կազմել:

Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից մեկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ՝ վարկերի և փոխատվությունների տրամադրում, և ներդրումային գործունեության հետ՝ Բանկի ակտիվների պորտֆելի մեջ պարտքային արժեթղթերի և այլ պարտքային գործիքների ավելացում: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները:

Վարկեր տրամադրելիս Բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի նաև վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը: Վարկային պորտֆելի որակի կառավարման նպատակով սահմանված է նաև որոշում կայացնող մարմինների սահմանաչափերի հստակ համակարգ, վարկերի և վարկունակության նվազագույն պահանջների վերանայման և թեստավորման սկզբունքներ: Վարկային ռիսկի նկատմամբ իրականացված սթրես թեստերի վատագույն սցենարի համաձայն՝ 31.12.2021թ.դրությամբ վարկային ռիսկի ազդեցությունը կապիտալի համարժեքության նորմատիվի վրա չի գերազանցի 11.05 տոկոսային կետը:

Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ոչ ամբողջական համապատասխանությունը բնական է ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների

անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը: Իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով բանկում ներդրված է սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմ: Պարբերաբար իրականացվում են իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ: 2021 թվականի դեկտեմբերի 31-ին դրությամբ իրականացված իրացվելիության ռիսկի սթրես թեստի ժամանակ դիտարկվել է սթրես սցենար, երբ տեղի է ունենում ժամկետային ավանդների 24%-ի և ցպահանջ այլ պարտավորությունների 50%-ի միաժամանակյա արտահոսք, որի պարագայում իրացվելիության նորմատիվները՝ Ն21 և Ն22, կազմում են համապատասխանաբար 21.8% և 95.0 %:

Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2019-2021 թվականների դրությամբ:

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն 31.12.2021	Փաստացի մեծություն 31.12.2020	Փաստացի մեծություն 31.12.2019
$Ն_2$[1]	Նվազագույնը 15%	27.28%	24.56%	25.91%
$Ն_2$[2]	Նվազագույնը 60%	125.42%	125.36%	135.26%

Բանկում ներդրված է իրացվելիության ճգնաժամային կառավարման մեխանիզմ, որը օգտագործվում է իրացվելիությանը սպառնացող անկանխատեսելի իրավիճակներում, մասնավորապես սահմանված ցուցանիշների և արտաքին գործոնների բացասական ազդակների դեպքերում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների տոկոսադրույքների փոփոխությունների արդյունքում արժեքի փոփոխության ռիսկն է, որն էլ իր հերթին կարող է ազդել Բանկի զուտ շահույթի վրա: Շուկայական տոկոսադրույքների փոփոխությունը կարող է ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա: Նման տատանումները տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում կարող են ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տոկոսային մարժան, հանգեցնել վնասների: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքներից ելնելով սահմանափակվում են տոկոսադրույքի հանդեպ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեծությունը, արժեթղթերի պորտֆելի մեծությունը, կենտրոնացվածությունը և ժամկետայնությունը: Արդյունքում, 2021 թվականի վերջի դրությամբ Բանկի՝ լողացող տոկոսադրույքով ներգրավված ու տեղաբաշխված միջոցների վրա տոկոսադրույքների 100 բազիսային կետով անբարենպաստ փոփոխության դեպքում գոյացած հանրագումային վնասը Բանկի ֆինանսական ցուցանիշների հիման վրա իրականացված հաշվարկների համաձայն չի գերազանցի ընդհանուր կապիտալի 0.09 %-ը, իսկ արժեթղթերի պորտֆելի վրա՝ 2.08 %-ը:

Արտարժույթի ռիսկ: Արտարժույթի ռիսկն իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկը: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Ելնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումներից և հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ, նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ձգտում է նվազագույնի:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը, մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Բանկը պատրաստ կլինի իրականացնել այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով ապահովել ծրագրավորված ակտիվապասիվային և եկամտային ցուցանիշների կատարումը: Բանկն իրականացնում է ակտիվների ու պարտավորությունների արժութային ճեղքվածքի կառավարման հավասարակշռված ու ցածր ռիսկային քաղաքականություն: Ռիսկերի կառավարման գործող ներքին համակարգի պայմաններում 2021 թվականի դրությամբ Բանկի ֆինանսական ցուցանիշների հիման վրա կազմված սթրեսային սցենարի համաձայն՝ արտարժույթի փոխարժեքի 20% փոփոխության դեպքում արտարժութային ճեղքվածքի գծով վնասները չեն գերազանցի ընդհանուր կապիտալի 5.5 %-ը:

Մրցակցային ռիսկ, որն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի բանկերի դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, բանկային առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Բանկն, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող սպասարկումների որակը և մատչելիությունը:

Կադրերի հոսունության ռիսկ, որն իրենից ներկայացնում է մրցունակ կադրերի աշխատանքից ազատման դեպքում Բանկի վնասներ կրելու հավանականությունը: Բարձրորակ մասնագետների առկայությունը Բանկի աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի պատճառով՝ առաջանում է նաև կադրերի հոսունության ռիսկ, որի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ Բանկի ղեկավարությունը նպատակային և հետևողական միջոցառումներ է իրականացնում աշխատողների որակավորման բարձրացման, նյութական խրախուսման և սոցիալական ապահովման խնդիրների բարելավման ուղղությամբ:

Ընդհանուր տնտեսության և քաղաքական ռիսկեր, երբ ՀՀ և գործընկեր երկրների մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կամ ՀՀ ներքաղաքական, տարածաշրջանային քաղաքական իրավիճակի անբարենպաստ զարգացումները կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա: Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Բանկի հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա: Դա կարտահայտվի Բանկի կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ: Բանկում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

3.3 Տեղեկատվություն Բանկի մասին

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:
ռուսերեն՝ АРАРАТБАНК открытое акционерное общество.
անգլերեն՝ ARARATBANK Open Joint-Stock Company.

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ռուսերեն՝ ОАО АРАРАТБАНК
անգլերեն՝ ARARATBANK OJSC

Բանկի ապրանքային նշանն է՝

AraratBank

Բանկի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 87, 85 տարածք:

Բանկի գրանցման համարն է՝ 4:

Բանկի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 87, 85 տարածք:

Կապի միջոցները՝

հեռ.՝ (+374 10) 59 23 23,
ֆաքս՝ (+374 10) 54 78 94,
էլ. փոստ՝ info@araratbank.am,
ինտերնետային կայք՝ www.araratbank.am:

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Բանկը հիմնադրվել է ՀՀ կապի նախարարության ձեռնարկությունների կողմից, որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, և 1991թ.-ի սեպտեմբերի 20-ին որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ ՍՊԸ գրանցվել է Պետական բանկում, գրանցման համար 4: Այնուհետև, Բանկը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում՝ 1994թ.-ի մարտի 31-ին:

Բանկն իր բնականոն գործունեությունն իրականացրել է մինչև 2000թ.-ի նոյեմբեր ամիսը: Այնուհետև 21.11.2000թ.-ին ՀՀ ԿԲ-ի կողմից Բանկում նշանակվել է նախնական խնամակալություն, 15.06.2001թ.-ին խնամակալություն, որից հետո 19.03.2002թ.-ին՝ ժամանակավոր ադմինիստրացիա, որի գործունեությունն ավարտվել է 29.10.2004թ.-ին:

Բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի 2002թ.-ի դեկտեմբերի 27-ի որոշման համաձայն Բանկը վերակազմավորվել է որպես «ՀԱՅԿԱՊ» բանկ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցվել է ՀՀ ԿԲ-ում 2003թ.-ի հունվարի 23-ին), այնուհետև անվանափոխվել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ-ի, որը 2007 թվականի օգոստոսին վերակազմավորվել է որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին կայացվել է որոշում Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ, համաձայն որի լրացուցիչ թողարկվել է 482,230 (չորս հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր երեսուն) հատ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 17,590 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Տեղաբաշխման արդյունքում Բանկի կապիտալն ավելացել է մոտ 8.5 մլրդ ՀՀ դրամով: 2016 թվականի նոյեմբերի 8-ին Բանկի Բաժնետերերի Ընդհանուր ժողովը հաստատել է լրացուցիչ թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք 2016 թվականի նոյեմբերի 16-ին գրանցվել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ Կենտրոնական Բանկը 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող

բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

2017 թվականին Բանկն ավարտեց «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ ինտեգրման գործընթացը:

Բանկն իր հեռանկարային զարգացումը նախանշելիս առաջնորդվում է, *«Կանխատեսել՝ նշանակում է կառավարել»* գաղափարախոսությամբ՝ փորձելով հնարավորինս ճշգրիտ և համակողմանի կանխատեսել սպասվող հնարավոր զարգացումները՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումների արդյունավետությունը և հասցեականությունը:

Բանկի առաքելությունն է՝ ապահովել Բանկի կայուն շարունակական զարգացումը, նպաստել երկրի տնտեսության զարգացմանը և կրել սոցիալական պատասխանատվություն հասարակության առջև՝ արժեքներ ստեղծելով Բաժնետերերի, Հաճախորդների և Աշխատողների համար:

Բանկի տեսլականն է՝ լինել կայուն զարգացող միջազգային, լայն և արդյունավետ մասնաճյուղային ցանց ունեցող հանրային բանկ, օգտագործելով լավագույն միջազգային և նորագույն տեխնոլոգիաները, ունենալ առաջատար դիրքեր՝ ՓՄՁ վարկավորման, մանրածախ գործառնությունների, առևտրի ֆինանսավորման և ֆինանսական շուկայում իրականացվող գործառնությունների ուղղություններով:

Բանկի նպատակն է՝ ապահովել կայուն զարգացում, արդարացնելով Բանկի բոլոր շահառուների սպասումները: Նշված նպատակն իրականացնելու համար Բանկը որդեգրել է մասնաճյուղերի ցանցի օպտիմալացման, ինչպես նաև նոր տեխնոլոգիաներով բանկային ծառայություններից օգտվելու հնարավորության ներդրման քաղաքականություն:

Բանկի՝ առաջիկա երեք տարիների հիմնական և երկարաժամկետ նպատակն է՝ ՀՀ բանկային շուկայում զբաղեցնել տեղ առաջատար հնգյակում՝ մի շարք բացարձակ և հարաբերական ցուցանիշներով, մասնավորապես, ակտիվների, հաճախորդներին տրված վարկերի ծավալներով, հաճախորդների քանակով և շահութաբերությունը բնութագրող ցուցանիշներով: Բանկն իր նախանշված նպատակներին հասնելու համար որդեգրել է համակարգային մոտեցում՝ որպես զարգացման հեռանկարային ուղղություններ առանձնացնելով հետևյալ երեք ուղղությունները՝

- ✓ ավանդական բանկային ծառայություններ (Classic Commercial Banking),
- ✓ ներդրումային բանկային ծառայություններ (Investment Banking),
- ✓ թվային բանկային ծառայություններ (Digital Banking):

Բանկի կանոնադրական կապիտալը 31.12.2021թ. դրությամբ կազմում է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից: 31.12.2021թ. դրությամբ Բանկի էմիսիոն եկամուտը կազմել է 8,031,745 հազ. ՀՀ դրամ:

2017թ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն Բանկի բաժնետերերի կազմում, մասնավորապես՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը վաճառել է Բանկի բաժնետոմսերում իր ունեցած բաժնեմասը և այլևս բաժնետեր չի հանդիսանում:

2019թ.-ի հունիսի 25-ին տեղի ունեցավ Բանկի կանոնադրական կապիտալում բաժնետերերի բաժնեմասնակցության չափի փոփոխություն. Բանկի բաժնետեր Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ն վաճառել է, իսկ Բանկի բաժնետեր՝ Բարսեղ Բեգլարյանը

ձեռք է բերել 75,531 հատ բաժնետոմս, որի արդյունքում Բարսեղ Բեգլարյանի բաժնեմասնակցության չափը Բանկի կանոնադրական կապիտալում դարձել է 22.626284%, իսկ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ինը՝ 4.289809%:

2020թ. ընթացքում տեղի է ունեցել փոփոխություն Բանկի բաժնետերերի կազմում, մասնավորապես՝ Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ն վաճառել է Բանկի բաժնետոմսերում իր ունեցած բաժնեմասը և այլևս բաժնետեր չի հանդիսանում:

31.12.2021թ. դրությամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 5 և ավել տոկոս բաժնետերեր են հանդիսանում «ՖԼԵՇ» ՍՊԸ-ն, որի բաժնեմասը կազմում է կանոնադրական կապիտալի 72.73%-ը, Բարսեղ Բեգլարյանը՝ 22.63%-ը: Բանկի բաժնետոմսերի մնացած մասի՝ 81 815 բաժնետոմսերի սեփականատերեր են հանդիսանում ընդհանուր թվով 70 բաժնետերեր՝ 3 իրավաբանական անձ և 67 ֆիզիկական անձ (տվյալները ներկայացված են Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից, 31.12.2021 թվականի դրությամբ):

Թողարկողի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

Ազդագիրը ԿԲ գրանցման ներկայացնելու պահի դրությամբ (05.04.2022թ.) Բանկի մասնաճյուղերի թիվը կազմել է 51՝ 50-ը ՀՀ տարածքում և 1 մասնաճյուղ ԼՂՀ-ում:

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

Բանկի մասնաճյուղային ցանցի աշխարհագրական տեղաբաշխվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀՀ	Մասնաճյուղի անվանում	Հասցե
1.	**Աջափնյակ**	ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բեկնազարյան փ. 5/15 և 5/8 շինություններ
2.	**Ավան-Առինջ**	ՀՀ, ք. Երևան, Ավան-Առինջ թաղամաս, 2-րդ միկրոշրջան 7/8
3.	**Արաբկիր**	ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս 56
4.	**Արարատյան**	ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10
5.	**Արշակունյաց**	ՀՀ ք. Երևան, Կենտրոն, Արշակունյաց պողոտա 15
6.	**Դավիթաշեն**	ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս 44/1 շենք
7.	**Զարգացում**	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Պարոնյան 21/1
8.	**Զեյթուն**	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն,Պարույր Սևակ 51/1
9.	**Էրեբունի**	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Խաղաղ Դոնի 13/1
10.	**Իսահակյան**	ՀՀ ք.Երևան, Նալբանդյան փողոց, 43-րդ շենք, թիվ 24 խանութ

11.	**Կենտրոն**	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Պուշկին 19
12.	**Կոմիտաս**	ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս 12/1
13.	**Մալաթիա**	ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Րաֆֆու 39/1
14.	**Մաշտոց**	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 25
15.	**Նոր Արեշ**	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Գաջեգործների 76
16.	**Նոր Նորք**	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Գայի պողոտա 15/5
17.	**Նոր Նորք 1**	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Հունան Ավետիսյան 46/5
18.	**Նուբարաշեն**	ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն թ. 11 16/12
19.	**Շենգավիթ**	ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Գարեգին Նժդեհի 10/30
20.	**Ուսանողական**	ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ալեք Մանուկյան 1 ԵՊՀ կենտրոնական մասնաշենք
21.	**Ջրվեժ**	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Ա. Քոչինյան 4/2
22.	**Սեբաստիա**	ՀՀ, ք. Երևան,Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա 141/1
23.	**Աբովյան**	ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Հանրապետության 1/21
24.	**Ագարակ**	ՀՀ, Սյունիքի մարզ, Կարճևանի համայնք, ավան Ագարակ
25.	**Աշտարակ**	ՀՀ, Արագածոտնի մարզ ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 18
26.	**Արմավիր**	ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Հանրապետության 6
27.	**Արտաշատ**	ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց 95
28.	**Բագրատաշեն -1**	ՀՀ, Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Բագրատաշեն մաքսային կետ
29.	**Բագրատաշեն-2**	ՀՀ, Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Բագրատաշեն մաքսային կետ
30.	**Բավրա**	ՀՀ, Շիրակի մարզ, գ. Բավրա
31.	**Գյումրի**	ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գարեգին Նժդեհի փողոց 10/12
32.	**Գյումրի մասքսատուն**	ՀՀ, Թբիլիսյան խճուղի 2/14
33.	**Գյումրի-2**	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացու 63

34.	**Գոգավան**	ՀՀ, Լոռու մարզ, գ. Գոգավան, Գոգավան-Պրիվոլնոյե մաքսակետի տարածք
35.	**Գորիս**	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 6/1
36.	**Դիլիջան**	ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Գետափի 6ա
37.	**Էջմիածին**	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մեսրոպ Մաշտոց 6բ/1
38.	**Իջևան**	ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան 5/3-2
39.	**Ծաղկաձոր**	ՀՀ, Կոտայքի մարզ, ք Ծաղկաձոր, Գր. Մագիստրոսի 2
40.	**Կոտայք**	ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Առինջ, Գ թղմ., 9-րդ փողոց, թիվ 2 առևտրի սրահ
41.	**Հրազդան**	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 78/3
42.	**Մասիս**	ՀՀ, Արարատի մարզ, ք Մասիս, Կենտրոնական հրապարակ 17
43.	**Մարտունի**	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 42/2
44.	**Շիրակ**	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Արագածի 2/6
45.	**Չարենցավան**	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փողոց թիվ 1 առևտրի սրահում
46.	**Սևան**	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 142/1
47.	**Սիսիան**	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շաքիի համայնք, Երևան մայրուղու 7-րդ կիլոմետր
48.	**Սպիտակ**	ՀՀ, մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք., Ս.Ավետիսյան 2
49.	**Ստեփանակերտ**	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 1/Ա
50.	**Վանաձոր**	ՀՀ, Լոռու մարզ, ք Վանաձոր, Տիգրան Մեծի 79/1
51.	**Վանաձոր-1**	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մոսկովյան փող, թիվ 44

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1. Հիմնական գործունեությունը

Բանկի համար առավել կարևոր գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավման և տեղաբաշխման իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ, որոնք նկարագրված են ստորև:

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսների վճարման հաճախականության:

Վարկերի և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), բնակարանի ձեռքբերման և նորոգման հիփոթեքային վարկավորում, ավտովարկավորում, լոմբարդային վարկավորում, սպառողական այլ վարկավորում, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային գործառնություններ:

Արտարժույթի և արժեթղթերի առքուվաճառք

Բանկն ակտիվորեն մասնակցում է ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին, երկրորդային շուկայի գործարքներին, ինչպես նաև արտարժույթի բորսայական առևտրին:

Բանկը հանդիսանում է ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ պետական ներքին պարտքի կառավարման գործակալ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ, հանդիսանալով Կառավարության կողմից լիազորված օպերատոր, իրականացնում է պետական մարմինների պատվիրակված գործառույթներ:

Բանկային փոխանցումներ

Բանկը 1997թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային մի շարք բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը՝ Բանկն առանձնապես կարևորում է արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ համագործակցության ընդլայնումը և կատարելագործումը: Այս նպատակով Բանկը շարունակում է զարգացնել համագործակցությունը Unistream, MoneyGram, IntelExpress, Ria Money, MoneyTun արագ դրամական փոխանցումների համակարգերի հետ:

Պլաստիկ Քարտեր

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, որոնց թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Բանկը թողարկում է ArCa Classic, ArCa կենսաթոշակային, ArCa Մանկան, ArCa Gift բանկային վճարային քարտեր:

2007 թվականի ընթացքում Բանկը դարձել է MasterCard համակարգի աֆիլիատ անդամ, իսկ 2008 թվականից սկսած թողարկում է Cirrus/Maestro, MasterCard Standard, MasterCard Gold քարտեր:

2010 թվականի օգոստոսին դառնալով VISA International վճարային համակարգի ասոցացված անդամ՝ 2011 թվականից Բանկը թողարկում է VISA GOLD, VISA CLASSIC և VISA INFINITE քարտեր, իսկ վերջիններիս քանակն ավելացնելու, սպասարկման որակը բարձրացնելու և տեխնիկական վերազինում իրականացնելու նպատակով՝ կատարում է ներդրումներ: 2013թ.-ին Բանկը դարձավ VISA միջազգային վճարահաշվարկային համակարգի պրինցիպալ անդամ, ինչը հնարավորություն տվեց Բանկին տրամադրել հաճախորդներին ծառայությունների ավելի ընդլայնված և արդիականացված փաթեթ:

2013թ.-ից Բանկը պաշտոնապես դարձավ DinersClub միակ թողարկող բանկը ՀՀ-ում և տարեվերջին Բանկը թողարկեց սուպեր պրեմիում դասի DinersClub Super Premium և պրեմիում դասի DinersClub Young Profesional վճարային քարտերը:

2015թ.-ից Բանկն Իդրամ ընկերության հետ համատեղ իրականացրեց www.arca.am պորտալով և ArCa համակարգի ներքո սպասարկվող բանկերի բանկոմատներով կոմունալ վճարումների ընդունումը:

2015 թվականին ընդլայնվեց Բանկի կողմից թողարկվող Diners Club քարտերի սպասարկման ցանցը, 2016 թվականին բարձրացվեց սպասարկվող վճարային քարտերի անվտանգության մակարդակը՝ պայմանավորված 3D secure համակարգի ներդրմամբ: Բանկի բանկոմատներում ներդրվեցին զեղծարարությունները զսպող՝ Antiskimmer ծրագրային ապահովումը: Իրականացվեց նաև Բանկի կողմից թողարկվող քարտերի PIN (Personal Identification Number) ծրարների ամբողջական տպագրում Բանկի տարածքում:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր հաճախորդների համար մշակել է նոր ծառայություն՝ USSD-բանկինգ, որի միջոցով հաճախորդը ցանկացած պահին բջջային հեռախոսի միջոցով կարող է ստուգել իր քարտերի մնացորդները, ստանալ քաղվածք կամ անհրաժեշտության դեպքում բլոկավորել քարտը:

Ներկայումս Բանկի կողմից թողարկվում և սպասարկվում են MasterCard, Visa, Diners Club և ArCa վճարային համակարգերի քարտեր: Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է Բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ:

Բանկի համար զարգացման գերակա ուղղություններից մեկն է վճարային քարտերի թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Բանկը թողարկում է ArCa բանկային վճարային քարտեր (ArCa Classic, ArCa կենսաթոշակային, ArCa Մանկան, ArCa Gift, Arca Green Line), Visa քարտեր (Visa Classic, Visa Gold,Visa Infinite), Master քարտեր (MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business), ինչպես նաև Diners քարտեր (Diners Club Young Professional, Diners Club Super Premium):

2021 թվականի վերջի դրությամբ Բանկի ակտիվ գործող վճարային քարտերի թիվը կազմել է 114,753 հատ, որից 48,836-ը բաժին է ընկնում ArCa վճարային քարտերին, 34,821-

ը՝ MasterCard, 29,573-ը՝ Visa Card միջազգային վճարային քարտերին, 1,523-ը՝ Diners Club միջազգային վճարային քարտերին:

Դիտակվող ժամանակաշրջանի վերջի դրությամբ Բանկի թողարկած վճարային քարտերի կառուցվածքը՝ ըստ վճարային համակարգերի, ներկայացված է գծապատկեր 1.-ում:

Գծապատկեր 1. Բանկի վճարային քարտերի կառուցվածքը առ. 31.12.2021թ.



Բանկը, թողարկած քարտերի քանակով, ՀՀ բանկային համակարգում գտնվում է առաջատար դիրքերում, ինչը պայմանավորված է Բանկի կողմից այդ բնագավառի զարգացմանն ուղղված ակտիվ և նորարար ծրագրերի իրականացմամբ:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ինտեգրումը, էլեկտրոնային առևտրի ծավալների շարունակական աճը, անկանխիկ գործառնությունների տարածումը՝ Բանկն առանձնակի կարևոր է համարում շարունակաբար ավելացնել միջազգային պլաստիկ քարտերի (Visa, MasterCard) թողարկման ծավալները, ինչպես նաև, օգտագործելով Բանկի՝ Հայաստանում Diners Club միջազգային վճարային համակարգի բացառիկ ներկայացուցիչը լինելու հանգամանքը, Բանկը շարունակելու է իրականացնել բազմատեսակ ծրագեր՝ հանրությանն առավելագույնս իրազեկում Diners Club քարտերի ընձեռած հնարավորությունների և առավելությունների մասին:

Բանկն իրականացնում է Սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման գործառույթը, ինչպես նաև որպես ապահովագրական գործակալ իրականացնում է ապահովագրական պայմանագրերի վաճառք:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, ինչպես նաև բանկոմատների, POS տերմինալների և վճարային տերմինալների միջոցով:

Ավանդական բանկային ծառայություններից բացի Բանկն առաջարկում է նաև ներդրումային և թվային բանկային ծառայություններ: Մասնավորապես, ներդրումային բանկային ծառայությունների շրջանակներում Բանկն իր իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է ներքին և միջազգային շուկաներում լայն շրջանակ ընդգրկող ֆինանսական ակտիվներում ներդրումների կատարման ծառայություններ: Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաճախորդներն ունեն հնարավորություն օգտվել ARARATBANK TRADING PLATFORM առևտրային հարթակի ընձեռած հնարավորություններից՝ առցանց ստանալով օպերատիվ տեղեկություններ միջազգային ֆինանսական շուկաների վերջին նորություններին և վերլուծություններին, ինչպես նաև առցանց գործառնություններ կատարել զարգացած և զարգացող երկրներում շրջանառվող ֆինանսական գործիքներով (բաժնետոմսեր, պարտատոմսեր, արտարժույթ, ֆորվարդներ, ֆյուչերսներ, օպցիոններ և այլն): Բանկը տեղական շուկայում իրականացնում է նաև արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների մատուցում:

Բանկը մատուցում է արժեթղթերի պահառության և ռեեստրավարման ծառայություններ, ինչպես նաև իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների միջնորդավորում:

Թվային բանկային ծառայությունների մասով Բանկն իր հաճախորդներին առաջարկում է 2021 թվականին վերջնականապես ներդրված նոր Թվային բանկ համակարգը, որը նոր տեխնոլոգիաներով արդիականացված, հաճախորդներին մատուցվող ծառայությունների առավել ընդլայնված ու ֆունկցիոնալ համակարգ է: Այն տրամադրում է ավելի քան 50 ծառայությունների հնարավորություն, որոնցից է ֆիզիկական անձանց միջև փոխանցումների նոր՝ FLIGHT ծառայությունը: Բանկը նաև ակտիվ մեկնարկել է գործընթացներ Բանկային ավտոմատացված մեքենաների և անհպում վճարային համակարգերի ներդրման ուղղությամբ:

Բանկի կողմից նոր ծառայությունների առաջարկը և մատուցումն իրականացվում է շուկայում սպառողների կողմից ներկայացված պահանջմունքի ուսումնասիրության հիման վրա: Բանկի նոր առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը տեղ է գտնում ինտերնետում՝ Բանկի տնային էջում, ինչպես նաև գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի սպասարկման սրահներում:

3.4.2. Հիմնական շուկաները

Բանկն իր զարգացման ներկա փուլում կարևորում է համարժեք մրցունակության մակարդակի ապահովումը հետևյալ շուկայական հատվածներում.

- ✓ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- ✓ խոշոր բիզնեսի վարկավորում,
- ✓ սպառողական վարկավորում,
- ✓ բնակարանային հիփոթեք,

- ✓ միջազգային առևտրի սպասարկում՝ ներառյալ դրամական փոխանցումներ, ակրեդիտիվներ, երաշխիքներ,
- ✓ ավանդների ներգրավում՝ տարբերակված ըստ ժամկետների, արժույթների և տոկոսների վճարման հաճախականության,
- ✓ հանրային ծառայությունների վճարների սպասարկում,
- ✓ պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում,
- ✓ ֆինանսական լիզինգի գործառնությունների իրականացում,
- ✓ ներդրումային բանկային ծառայությունների մատուցում,
- ✓ թվային բանկային ծառայությունների մատուցում:

Բիզնես վարկավորման և վճարահաշվարկային սպասարկման շուկայական հատվածում բանկերի միջև մրցակցությունը բավականաչափ կոշտ է, որի պարագայում Բանկի կողմից բիզնեսի կարիքների բավարարումը միտված է առավելապես համալիր սպասարկումների բավարարմանը, որը Բանկի գործունեության ռազմավարական գերակայություններից է:

Բանկը, ելնելով կապիտալացման և պարտավորությունների ներգրավման միտումներից ու գնահատվող հնարավորություններից, իր ռազմավարության թիրախներից դիտարկում է մանրածախ բանկային ծառայությունների մատուցումը, բանկային սպասարկումների և ծառայությունների մատչելիության ու հասանելիության ապահովումը սպառողների լայն շրջանակի համար, որի արդյունքում Բանկն իր ամուր դիրքը կհաստատի Հայաստանում գործող բանկերի առաջին տասնյակում:

Կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների դերն ու նշանակությունը՝ 2021 թվականին Բանկը խորացրել և ընդլայնել է համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, որի արդյունքում իր հաճախորդներին առաջարկել է մատչելի և երկարաժամկետ վարկային միջոցներ:

Բանկն ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB USA), Եվրասիական Զարգացման Բանկի (EDB Russia), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE Luxembourg), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), Green for Growth Fund Հիմնադրամի, Incofin Investment Management, DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), BLUEORCHARD MICROFINANCE FUND (Switzerland) Covid-19 Emerging and Frontier Markets MSME Support, Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), ResponsAbility (Switzerland), Legal Owner Triodos Funds B.V.L and Triodos SICAV II , Microfinance Enhancement Facility SA, SICAV-SIF, Commerzbank AG (Germany), Ասիական Զարգացման բանկ (ADB), SYMBIOTICS SICAV ընկերության, ինչպես նաև այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Միայն 2021 թվականի ընթացքում միջազգային ծրագրերով ներգրավվել է 54,500,000 ԱՄՆ դոլարի և 3,000,000 Եվրոյի վարկ:

3.4.3. Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը

Բանկի մրցակցային առավելությունների շարքում հարկ է նշել հետևյալը.

✓ Բանկում ինստիտուցիոնալ ներդրողների առկայությունը, որոնք հետապնդում են երկարաժամկետ նպատակներ և խնդիրներ՝ նպատակաուղղված Բանկի հետագա զարգացմանը:

✓ Բանկի կառավարման արդյունավետ համակարգը, որում հստակ ամրագրված են յուրաքանչյուր կազմակերպական միավորի գործառութային խնդիրները և որոշված են դրանց պատասխանատվության սահմանները:

✓ Ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգը, դրա հուսալիության բարձր աստիճանը, որը հնարավորություն ունի ժամանակին բացահայտելու առաջացող ռիսկերի բնույթը, դրանց հնարավոր ազդեցության մակարդակը և առաջարկելու դրանց չեզոքացման ուղիները:

✓ Կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգը, որի շրջանակներում ամրագրված են Բանկի Խորհրդի և Վարչության պաշտոնատար անձանց ֆիդուցիար պատասխանատվությունը:

✓ Բանկային նոր ինովացիոն ծառայությունների նպատակաուղղվածությունը և նմանատիպ ծրագրերի իրացման հաջողված փորձը: Բանկի մրցունակության բարձրացման առանցքային գործոններից է տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտ բաղադրիչների յուրացումը, ծառայությունների մատուցումը, տեխնոլոգիաների միջազգային չափորոշիչների և համաշխարհային լավագույն փորձի վրա կառուցումը, որի արդյունքում Բանկում մշակվում ու ներդրվում են ինովացիոն և արդյունավետ պրոդուկտներ:

✓ Արտաքին միջավայրի ազդակների արագ արձագանքման արդյունավետ համակարգը, մասնավորապես՝ տնտեսության իրական հատվածում ընթացող գործընթացների և բանկային սպասարկումները, ծառայությունների ոլորտում տոկոսադրույքների ու սակագների փոփոխությունների նկատմամբ համարժեք արձագանքումը: Այդ նպատակով՝ Բանկը մշտապես իրականացնում է մարքեթինգային ուսումնասիրություններ և հարցումներ, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ հաճախորդների հետ: Դրա շնորհիվ Բանկը վարում է սպասարկումների ճկուն (ներառյալ սակագնային) քաղաքականություն և առաջարկում է շուկայում առավել մատչելի ու մրցունակ պայմաններ և սակագներ:

✓ Բանկի աշխարհագրության և մասնաճյուղային ցանցի ինտենսիվ զարգացումը երկրի բոլոր տարածաշրջաններում, որը վերջին չորս տարիների ընթացքում հաջողությամբ իրացվում է առանց ռիսկերի կառավարման համակարգի էական խաթարումների և շեղումների:

✓ Միջազգային ֆինանսական կառույցների հետ արդյունավետ համագործակցությունը և համագործակցության շրջանակներում համատեղ ծրագրերի հետևողական իրականացումը:

✓ Բանկի կառավարման բարձրագույն և միջին օղակներում բավարար ներուժ ու փորձ ունեցող կադրային պոտենցիալի առկայությունը, որն ունակ է լուծել Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված խնդիրները:

✓ Բանկի կառավարման բոլոր օղակներում գործունեության բավարար կանոնակարգվածության աստիճանը:

✓ Բանկային ծառայությունների լայն շրջանակը, Բանկի ուժեղ ու կայուն դիրքերը մանրածախ սպասարկումների ոլորտում, որոնց շնորհիվ Բանկը դինամիկ և հաստատուն ձևով ընդլայնում է ծառայությունների և սպասարկումների ծավալները:

✓ Բանկի կողմից հաճախորդների թիրախային խմբերի տարանջատումն ըստ բիզնեսի ոլորտների վարման առանձնահատկությունների ու քաղաքացիների շրջանում ըստ սոցիալական, աշխարհագրական, տարիքային և այլ չափորոշիչների, որի արդյունքում առաջարկվում են յուրաքանչյուր խմբին համարժեք նպատակային համալիր, բարձրորակ բանկային ծառայությունների շրջանակ:

✓ Անմիջապես հաճախորդների սպասարկման համար պատասխանատու աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը, որի շնորհիվ նաև բարելավվում է սպասարկման որակը և աճում հաճախորդների թվաքանակը:

✓ Բաժնետիրական ընկերության կարգավիճակում հանդես եկող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ձևավորված դրական վարկանիշը և աճող հեղինակությունը:

Ֆինանսական գործառնությունները Բանկի կողմից իրականացվում են ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ կանխիկ և անկանխիկ եղանակներով:

Բանկի հիմնական հաշվեկշռային ցուցանիշների դինամիկան 2017-2021 թվականներին ներկայացված է Գծապատկեր 2.-ում, իսկ ակտիվների և կապիտալի շահութաբերության ցուցանիշներինը (ROA, ROE)՝ Գծապատկեր 3.-ում:

Գծապատկեր 2. Բանկի հիմնական հաշվեկշռային ցուցանիշների (մլրդ ՀՀ դրամ) և լևերիջի գործակցի (%) դինամիկան 2017-2021թթ.[5]



[5] 2021թ. տվյալները ներկայացված են հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից և աուդիտի կողմից ստուգված չեն:

Գծապատկեր 3. Բանկի ակտիվների և կապիտալի շահութաբերության ցուցանիշների դինամիկան 2017-2021թթ.



Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ծավալների աճի դինամիկան 2017-2021թթ. ներկայացված է գծապատկեր 4.-ում:

Գծապատկեր 4. Բանկի վարկային պորտֆելի դինամիկան 2017-2021թթ.



ՀՀ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումներում Բանկի վարկային պորտֆելի մասնաբաժինը 2021 թվականի վերջի դրությամբ կազմել է 3.72% :

մլն ՀՀ դրամ

	2017	2018	2019	2020	2021
ՀՀ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված ընդհանուր վարկեր	2,684,582	3,128,570	3,657,011	4,181,799	3,967,551
Բանկի կողմից հաճախորդներին տրամադրված վարկեր	119,167	119,978	135,921	148,222	147,756
Բանկի մասնաբաժինը	**4.44%**	**3.83%**	**3.72%**	**3.54%**	**3.72%**

Թողարկողի դիրքն այլ առևտրային բանկերի համեմատ 31.12.2021 թվականի դրությամբ հետևյալն է.[6]

հազ. ՀՀ դրամ

Հ/Հ	Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավոր-ություններ	Ընդհանուր կապիտալ	Զուտ շահույթ
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10	**270,126,961**	**147,756,084**	**230,565,301**		
11					
12				**39,561,660**	**1,699,157**
13					
14					
15					
16					
17					

[6] Հաշվարկն իրականացվել է հիմնվելով ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.5 Բանկի կառուցվածքը



2009 թվականին Բանկն իր դուստր ընկերության՝ «Իզմիրլյան» ՈՒՎԿ ՍՊԸ-ի հետ ձևավորել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ խումբ: 2010 թվականին «Իզմիրլյան» ՈՒՎԿ ՍՊԸ-ն լուծարվել է և դուստր ընկերության լուծարման հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2010թ. փետրվարի 26-ի համապատասխան որոշմամբ: Ներկայումս ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն որևիցե խմբի անդամ չի հանդիսանում:

3.6 Զարգացման վերջին միտումները

Տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող զարգացումներով պայմանավորված Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները պարբերաբար վերանայվում են՝ նպաստելով վերջիններիս մրցունակության բարձրացմանը և մատչելիության ապահովմանը:

Թողարկողի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ իմանալու համար ներդրողը կարող է ծանոթանալ Բանկի տարեկան և միջանկյալ հաշվետվություններին, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի www.araratbank.am «Հաշվետվություններ» բաժնում, ինչպես նաև Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում եռամսյակային հաշվետվություններ, որոնք տեղադրված են Թողարկողի պաշտոնական ինտերնետային կայքի՝ «Հաշվետու թողարկողի հաշվետվություններ» և «Բաժնետերեր և ներդրողներ» բաժիններում:

3.7 Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Բանկը 2021թ. նպատակ է հետապնդում աճի նոր ուղու վրա դնել վարկային պորտֆելը, փոխելով դրա կառուցվածքը, ինչպես նաև Բանկի ռիսկի ախորժակի սահմաններում ազատվել գերիրացվելի միջոցներից, մեծացնելով վարկային ներդրումների կշիռը ընդհանուր ակտիվներում, բարձրացնել Բանկի Լևերիջը, մեծացնել մասնաճյուղերի ներգրավվածությունը Բանկի հիմնական բիզնես գործընթացներին և ավելի արդյունավետ շահագործել դրանք, հատկապես Մանրածախ վարկերի տրամադրման, ավանդների ներգրավման և խաչաձև վաճառքներ իրականացնելու գործում: Վերը թվարկվածների շնորհիվ Բանկը 2022 թվականի ընթացքում պետք է կարողանա ավելացնել զուտ տոկոսային մարժան 0.3 տոկոսային կետով, իսկ ակտիվների որակի առումով գրանցել դրական արդյունք (մեկ խոշոր ժամկետանց վարկառուի պարտավորություններն արդեն դուրս են գրվել 2021 թվականի ընթացքում) և կլանել ակտիվների 0.39%-ի չափով վարկային ռիսկ պահուստավորման տեսքով, ինչը նշանակում է այս ցուցանիշի բարելավում 0.41 տոկոսային կետով 2021 թվականի համեմատ: Արդյունքում Բանկը կապահովի մոտ 2.5 մլրդ դրամի չափով զուտ շահույթ:

Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ✓ Բանկի գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին,
- ✓ Բանկի ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Բանկի ռիսկերը, պահպանելով բանկային գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները,
- ✓ ավելացնել Բանկի եկամտաբեր ծառայությունների տեսականին,
- ✓ ապահովել Բանկի դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացում,

✓ ապահովել Բանկի զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,

✓ Բանկի գործունեության ապահովման ծախսեր:

Բանկը կանխատեսել է 2023 և 2024 թվականների գործունեության արդյունքում գեներացնել համապատասխանաբար 2,959,989 հազ. ՀՀ դրամի և 3,283,990 հազ. ՀՀ դրամի զուտ շահույթ:

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

✓ Բանկի ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,

✓ Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,

✓ Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,

✓ Բանկի անձնակազմի վարձատրության, ուսուցման և վերապատրաստման ծախսեր,

✓ Բանկի գործունեության ապահովման ծախսեր,

✓ Նոր բանկային արտադրանքի և ծառայությունների ներդրման ծախսեր:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

✓ բանկային ավանդների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ,

✓ արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ,

✓ անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

Բանկի շահույթը առաջիկա տարիների համար կունենա հետևյալ պատկերը՝

	31/12/22	31/12/23	31/12/24
	Պլան	Պլան	Պլան
Զուտ Շահույթ	2,453,692	2,959,989	3,283,990

3.8 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Բանկի կանոնադրությամբ, սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

✓ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով),

✓ Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),

✓ Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի գործադիր տնօրեն (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները

Բանկի Ժողովը

1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

2. Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատու մը նոր խմբագրությամբ,

բ) Բանկի վերակազմավորումը,

գ) Բանկի լուծարումը,

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

թ) Ժողովի վարման կարգի հաստատումը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

ժա) բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը,

ժբ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժգ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժդ) Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումն ու հետգնումն օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում,

ժե) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը, և որի արժեքը՝ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին,

ժզ) գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները,

ժէ) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

ժը) օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

3. Ժողովի բացառիկ իրավասությունները չեն կարող փոխանցվել Խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ այլ անձանց:

4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ) Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում, բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժգ) Բանկի կողմից օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

ժդ) Բանկի առանձնացված և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների ու կանոնակարգերի հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

ժե) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը և (կամ) դրանց մասնակցությունը,

ժզ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և (կամ) դրանց մասնակցությունը,

ժէ) ստորև նշված հարցերի ներկայացումը Ժողովին:

1. Բանկի վերակազմավորումը,
2. բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը,
3. Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,
4. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
5. Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումն օրենքով ու Բանկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում,
6. Խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին,
7. գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն

տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները,

8. Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժը) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժթ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ի) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,

իա) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների և կարգերի սահմանումը,

իբ) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը,

իգ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը,

իդ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը: Բանկի պարտապանի պարտավորության վրա տոկոսների և տույժերի հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման, կամ ներման մասին որոշումների ընդունումը,

իե) Բանկի առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկի հաստատումը,

իզ) օրենքով և Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Վերը նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահված է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Գործադիր մարմնին կամ այլ անձանց:

Գործադիր մարմինը

1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը:

Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում ՀՀ կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

2. Բանկի Վարչության կազմը ձևավորվում է Խորհրդի որոշմամբ:

Վարչության կազմում ընդգրկված են Գործադիր տնօրենը (պարտադիր), նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, ինչպես նաև, Խորհրդի որոշմամբ, այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

3. Բանկի Վարչությունը՝

ա) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները,

բ) հաստատում է Բանկի աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,

գ) քննարկում է ստորև 5-րդ կետի ա), զ), թ), ժգ), ժդ) ենթակետերով նախատեսված հարցերը, որոշումներ է ընդունում դրանց վերաբերյալ,

դ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ,

ե) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գույքի օտարման գործարքների վերաբերյալ,

զ) քննարկում և որոշումներ է ընդունում վարկերի տրամադրման վերաբերյալ,

է) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության մասին,

ը) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ամսական և (կամ) եռամսյակային կատարողականների մասին,

թ) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության տարեկան պլանները և հաշվետվությունները:

4. Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

5. Գործադիր տնօրենը՝

ա) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող Բանկի՝ ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը,

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը,

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին,

դ) Բանկի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ե) ապահովում է Ժողովի, Խորհրդի և Վարչության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարումը,

զ) ըստ Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի, իրականացնում է իրավասությունների և պարտականությունների, այդ թվում՝ Գործադիր տնօրենի տեղակալների, բաշխումն աշխատողների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերությունները,

է) վերահսկում է միջին և ստորին օղակների ղեկավարների գործողությունները,

ը) պահանջում է ստորաբաժանումների ղեկավարներից՝ վերահսկել իրենց աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետությունը,

թ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում կազմակերպական կառուցվածքը կատարելագործելու վերաբերյալ,

ժ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններ, հայցադիմումներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

ժա) պարբերաբար իրականացնում է Բանկի անձնակազմի վերապատրաստումը,

ժբ) իրականացնում է Վարչության նախագահի գործառույթները՝

1) կազմակերպում է Վարչության աշխատանքները,
2) գումարում և նախագահում է Վարչության նիստերը,
3) կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը,
4) ներկայացնում է Վարչությունը Խորհրդի նիստերին
5) ստորագրում է Վարչության նիստերի որոշումները,

ժգ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում ներքին հսկողության համակարգի համարժեքության և մոնիտորինգի արդյունավետության վերաբերյալ,

ժդ) իր իրավասություններին պատկանող ցանկացած հարց կարող է քննարկել Վարչության նիստին,

ժե) իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

6. Այն հարցերը, որոնք օրենքով կամ Բանկի կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի կամ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Գործադիր տնօրենի իրավասությանը:

7. Գործադիր տնօրենը Խորհրդին առնվազն եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ձևով:

8. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ՝ եթե Գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

1. Բանկի Խորհրդի նախագահ՝ Գրիգոր Հովհաննիսյան

Բնակության վայրը	ք. Երևան, Բարբյուսի փող., տ. 2-2
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	

Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	ՀԲԸՄ Նախագահի Խորհրդական

2. Խորհրդի անդամ՝ Արզիկ Սուվարյան

Բնակության վայրը	ք. Երևան, Բելյակովի փող.,շ. 5, բն. 36
Իրավասությունները	Բանկի կորպորատիվ կառավարման կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի կառավարման և բիզնեսի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

3. Խորհրդի անդամ՝ Նարեկ Բեգլարյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Բաբայան փ., տ .2/24
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	Բանկային ռիսկերի կառավարման կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«ԲիԲի-Կապիտալ» ՍՊԸ-ի համահիմնադիր, տնօրեն

4. Խորհրդի անդամ՝ Կարեն Բաբաջանյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան, Սոսեի փ., տ.30
Իրավասությունները	Բանկի բրենդավորման աշխատանքների կոորդինացում Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ
Պարտականությունները	Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Braind ընկերության համահիմնադիր, տնօրեն

4. Խորհրդի անդամ՝ Կորյուն Աթոյան

Բնակության վայր	ՀՀ, ք. Երևան, Մալյան փ., 22-6
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ

Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	-

Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ, եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար),

գ) նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն ենթակետի իմաստով՝ իրական ժամանակի ռեժիմով և հեռակա (հարցմամբ) մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն,

դ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

1. Վարչության նախագահ-գործադիր տնօրեն՝ Միեր Անանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Զաքարիա Քանաքեռցու փ., տ. 42/16
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

2. Վարչության անդամ - գործադիր տնօրենի առաջին տեղակալ՝ Կարեն Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Նորք-Մարաշ, Ս. Խանզադյան փ., տ.12
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

3. Վարչության անդամ - գործադիր տնօրենի տեղակալ՝ Բագրատ Ճզմաչյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փող. 24 շենք, բն. 22
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	

Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

4. Վարչության անդամ - գործադիր տնօրենի տեղակալ՝ Մհեր Գրիգորյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան փող. 9 շենք, բն. 4
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

5. Վարչության անդամ - գլխավոր հաշվապահ՝ Տիգրան Գալստյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փող. 26 շենք, բն. 17
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

6. Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ՝ Զարուհի Մելքոնյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծ պողոտա, շենք 31ա, բն. 17
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

7. Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ՝ Կարեն Հակոբյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Ջրվեժ, Մայակ, 27 շենք, բն. 50
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ (տես՝ Ազդագրի 64-66էջերը)
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բանկի գործունեությունից դուրս այլ գործունեություն չի ծավալում:

Ազդագիրը ԿԲ ներկայացման պահին՝ 05.04.2022թ., Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոս կենտրոնացվածություն որևէ մասնաճյուղում չի եղել:

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագիրը ԿԲ ներկայացման պահի դրությամբ՝ 05.04.2022թ., շահերի բախում չկա:

3.9 Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն գտնվում է.

✓ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Եզնիկ Կողբացու 30, ք. Երևան, Հարավ-Արևմտյան թաղ. 52/2 շ., բն. 32, հեռ. (010) 58 28 84, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հ/հ 166690902, ՀՎՀՀ 01808789) ուղղակի հսկողության տակ, քանի որ այն հանդիսանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետոմսերի 72.73%-ի սեփականատեր,

✓ ՀՀ քաղաքացի Բարսեղ Բեգլարյանի (անձնագիր՝ BA0295809, տրված՝ 11.03.2014թ.-ին 001-ի կողմից, ք. Երևան, Չոլագյան փ. տ. 4) ինչպես ուղղակի (Բարսեղ Բեգլարյանի մասնակցությունը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալում կազմում է 22.63%) այնպես էլ անուղղակի (Բարսեղ Բեգլարյանի մասնակցությունը «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում կազմում է 84.19%, հետևաբար նա հնարավորություն ունի կանխորոշելու «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից կայացվող որոշումները) հսկողության տակ,

3.10 Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.10.1.Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2019-2020թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2021 թվականի եռամսյակային միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներառված են Ազդագրին կից հավելվածներում:

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Ինտերնետի Բանկի տնային էջում:

3.10.2. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2021 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ՀՀ ԿԲ Ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն (05.04.2022թ) ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.10.3.Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդ 12 ամիսների ընթացքում առկա են հարուցված քրեական գործեր որպես բարձր հարգի, սակայն իրականում ցածր հարգի ոսկյա իրերի գրավադրմամբ վարկավորման, ինչպես նաև բանկոմատների լիցքավորման

գործընթացում գումարների հափշտակության փաստերով, որոնք գտնվում են նախաքննության փուլում: Բանկոմատների լիցքավորման գործընթացում գումարների հափշտակության փաստով հարուցված քրեական գործի շրջանակներում մեկ անձի առաջադրվել է մեղադրանք և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է կալանքը:

3.11 Էական պայմանագրերը

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր ժողովը 2016 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում և փակ տեղաբաշխում իրականացնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման մասին: Նշված որոշմամբ թողարկվել է 483,230 հատ լրացուցիչ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 17,590 ՀՀ դրամ արժեքով: Լրացուցիչ թողարկված սովորական բաժնետոմսերից 23,312 հատ ձեռք են բերվել Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ, Սիկավ-Սիֆ ԲԸ-ի կողմից (RURAL IMPULSE FUND II S.A., SICAV-SIF), իսկ մնացած 459,918 հատ սովորական բաժնետոմսերը ձեռք են բերվել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը 2016 թվականի նոյեմբերի 8-ին հաստատել է տեղաբաշխման արդյունքները և Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները, որոնք էլ 2016 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցվել են, որից սկսած ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կապիտալը փաստացիորեն համալրվել է 8.5 մլրդ. ՀՀ դրամով՝ ապահովելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվային կապիտալի պահանջը: Կապիտալի համալրման արդյունքում Կանոնադրական կապիտալը համալրվել է 2.42 մլրդ. ՀՀ դրամով, իսկ էմիսիոն եկամուտն ավելացել է 6.08 մլրդ. ՀՀ դրամով: Արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կազմել է 8,803,655 հազ. ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից: 31.03.2019թ. դրությամբ Բանկի էմիսիոն եկամուտը կազմել է 8,031,745 հազ. ՀՀ դրամ:

2016 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշում է կայացրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը, որպես պահպանվող բանկ, «Զարգացման Հայկական Բանկ» բաց բաժնետիրական ընկերության հետ վերակազմակերպվելու ձևով միանալու վերաբերյալ: ՀՀ ԿԲ-ն 2016 թվականի դեկտեմբերի 15-ին հաստատել և գրանցել է ընկերությունների միջև կնքված միացման պայմանագիրը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել երկու բանկերի բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է երկու ընկերությունների միացման փոխանցման ակտը և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, որպես պահպանվող բանկ կանոնադրության մեջ փոփոխությունների կատարումը:

2017 թվականին Բանկն ավարտեց «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ ինտեգրման գործընթացը:

2018թ. Բանկը ներգրավել է 20 մլն ԱՄՆ դոլար վարկ Հոլանդական զարգացման բանկից (FMO)՝ ՓՄՁ ոլորտի, ձեռնարկատեր կանանց և մինչև 35 տարեկան երիտասարդների բիզնես ծրագրերի, ինչպես նաև վերջիններիս մանրածախ վարկավորման նպատակով:

2021 թվականի հունվարի 26 –ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը և «Blue Orchard»-ի՝ Covid-19 Emerging and Frontier Markets MSME Support Fund հիմնադրամը («Blue Orchard»-ի՝ Զարգացող և

սահմանային շուկաներում Covid-19 պայմաններում ՄՓՄՁ-ների աջակցման հիմնադրամ) 5 մլն դոլարի երկկողմ վարկային պայմանագիր են կնքել՝ Հայաստանում Covid-19 համավարակի հետևանքով տուժած ՄՓՄՁ-ներին աջակցելու համար:

2021 թվականի մարտի 30-ին ԱրարատԲանկը 3 մլն եվրո է ներգրավել Incofin Investment Management ֆինանսական հաստատության կողմից երաշխավորված երկու հիմնադրամներից՝ 1,5 միլիոն եվրո Volksvermogen NV-ից և 1,5 միլիոն եվրո Incofin CVSO-ից՝ ապահովելով փոքր վարկերի հասանելիությունը միկրո ձեռնարկատերերի համար:

2021 թվականի մայիսի 17-ին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն ու FMO հոլանդական զարգացման բանկը, կարևորելով ֆինանսավորման հասանելիությունը, 25 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանգիր են կնքել:

2021 թվականի մայիսի 18-ին «Սիմբիոտիքս» ներդրումային ընկերության նախաձեռնությամբ կայունության պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 14.5 մլն. ԱՄՆ դոլարի միջոցներն ուղղվել են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ին:

2021թ. հուլիսին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի և Նիդերլանդական զարգացման բանկի (FMO) միջև կնքվել է 10 մլն ԱՄՆ դոլարի երաշխիքի պայմանագիր՝ որի շրջանակներում Բանկի համար առավել դյուրին կլինի փախստականների, երիտասարդ և/կամ կին ձեռներեցների, ինչպես նաև COVID-19 համավարակից տուժած բիզնեսների ֆինանսավորումը, քանի որ տվյալ պորտֆելի վարկային ռիսկը ստանձնելու են երկու ֆինանսական կառույցները համատեղ:

3.12 Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Ներկայացվող Ազդագրում վերը նշված անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:

3.13 Այլ տեղեկատվություն

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրողների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն-վերլուծությունները մշտապես մատչելի են հանրությանն ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.araratbank.am հասցեով, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ:

AraratBank

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
“ՀԱՅԿԱՊ” առևտրային բանկի
մասնակիցների ժողովի
02.09.1991թ. թիվ 1 արձանագրությամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” փայատիրական
բանկի փայատերերի ժողովի
19.02.1994թ. թիվ 5 արձանագրությամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” փայատիրական
բանկի փայատերերի ժողովի
29.07.1995թ. թիվ 5 արձանագրությամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” փայատիրական
բանկի փայատերերի ժողովի
30.03.1996թ. թիվ 12 արձանագրությամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” բանկ ՓԲԸ
ժամանակավոր ադմինիստրացիայի
27.12.2002թ. թիվ Մ-06 որոշմամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” բանկ ՓԲԸ
ժամանակավոր ադմինիստրացիայի
23.10.2004թ. թիվ Մ-03 որոշմամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” ԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
25.04.2005թ. թիվ 03 որոշմամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” ԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
14.06.2005թ. թիվ 05 որոշմամբ

Փոփոխված է “ՀԱՅԿԱՊ” ԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
30.09.2005թ. թիվ 07/2 որոշմամբ

Փոփոխված է “ԱՐԱՐԱՏ” ԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
07.02.2006թ. թիվ 02/1 որոշմամբ

Փոփոխված է “ԱՐԱՐԱՏ” ԲԱՆԿ ՓԲԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____
(ստորագրություն)

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2020.03.12 14:30:42 AMT
Reason: Գրանցված է
11.03.2020թ.

բաժնետերերի ընդհանուր ժողովի
30.05.2006թ. թիվ 02 որոշմամբ

Փոփոխված է "ԱՐԱՐԱՏ" ԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
22.12.2006թ. թիվ 04/1 որոշմամբ

Փոփոխված է "ԱՐԱՐԱՏ" ԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
22.12.2006թ. թիվ 04/2 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
06.04.2007թ. թիվ 01 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
29.06.2007թ. թիվ 05 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
26.11.2007թ. թիվ 03/1 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
14.01.2008թ. թիվ 01/1 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
27.06.2008թ. թիվ 04 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
29.12.2008թ. թիվ 04/01 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
31.05.2010թ. թիվ 05 որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
27.11.2012թ. թիվ 02/1Լ որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

բաժնետերերի ընդհանուր ժողովի
08.11.2016թ. թիվ 02/03Լ որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ և
«ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի
համատեղ ընդհանուր ժողովի
27.12.2016թ. թիվ 04/01Լ որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
27.09.2019թ. թիվ 02/02Լ որոշմամբ

Փոփոխված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
բաժնետերերի ընդհանուր ժողովի
10.02.2020թ. թիվ 1/01Լ որոշմամբ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի
ընդհանուր ժողով

Բաժնետերերի ընդհանուր ժողովի
նախագահ

Արզիկ Սուվարյան_____

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունն (այսուհետ՝ Բանկ) առևտրային իրավաբանական անձ է, որն իրավունք ունի "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

1.2. Բանկը ստեղծվել է 20.09.1991թ.-ին գրանցված "ՀԱՅԿԱՊ" բանկ փակ բաժնետիրական ընկերությունից՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ փակ բաժնետիրական ընկերության անվանափոխվելու, հետագայում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության վերակազմավորվելու, իսկ դրանից հետո, որպես պահպանվող բանկ, «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության հետ միանալու եղանակով վերակազմակերպվելու միջոցով և հանդիսանում է դրանց իրավահաջորդը:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.4. Բանկը ստեղծվել և ձեռք է բերել իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու օրվանից՝ գրանցման վկայական թիվ 0153, գրանցման համարը 4, գրանցման ամսաթիվ 20.09.1991թ.:

1.5. Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ՝ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու օրվանից՝ բանկային գործունեության լիցենզիա թիվ 4, լիցենզիան տրվել է 20.09.1991թ.:

1.6. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.7. Հայաստանի Հանրապետությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, Կենտրոնական բանկը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե այդպիսիք չեն ստանձնել:

1.8. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ և կնիքներ՝ այդ թվում համարային:

1.9. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.10. Բանկի իրավաբանական հասցեն է՝ Երևան, Կենտրոն, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85:

1.11. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ *АРАРАТБАНК открытое акционерное общество*
անգլերեն՝ ARARATBANK Open Joint Stock Company

1.12. Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ռուսերեն՝ ОАО *АРАРАТБАНК*
անգլերեն՝ ARARATBANK OJSC

1.13. Բանկն երաշխավորում է Բանկում սպասարկվող անձանց բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը՝ օրենքով սահմանված կարգով:

1.14. Բանկն ապահովում է "Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումն երաշխավորելու մասին" ՀՀ օրենքի պահանջների կատարումը:

1.15. Բանկն ապահովում է "Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին" ՀՀ օրենքի և դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած իրավական ակտերի պահանջների կատարումը:

1.16. Բանկը պատասխանատվություն չի կրում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով Բանկում սպասարկվող անձանց հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով տվյալ անձանց կրած վնասների համար:

2. Բանկի առանձնացված ստորաբաժանումները

2.1. Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ (այսուհետ՝ առանձնացված ստորաբաժանումներ) որոնք, Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում, գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2.2. Բանկի առանձնացված ստորաբաժանումը գործում է Բանկի կողմից հաստատված և Կենտրոնական բանկում գրանցված կանոնադրության հիման վրա:

2.3. Բանկի առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և լուծարումն իրականացվում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.4. Մասնաճյուղը Բանկի անունից իրականացնում է բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությունով նախատեսված ֆինանսական գործառնություններ:

2.5. Ներկայացուցչությունը ներկայացնում է Բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն կամ "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի:

2.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:

3. Բանկի ֆինանսական գործառնություններն ու այլ գործարքները

3.1. Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է

իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները՝

1) ընդունել ավանդներ.

2) տրամադրել վարկեր.

3) իրականացնել դրամական պահանջների զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ).

4) տրամադրել բանկային երաշխիքներ, բացել կամ իրականացնել հաշվարկներ ակրեդիտիվներով.

5) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ, այդ թվում՝ բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ բանկերի թղթակցային հաշիվները.

6) թողարկել, սպասարկել արժեթղթեր, իր անունից և իր հաշվին արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել.

7) մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

8) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.

9) կառավարել այլ անձանց միջոցները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում), բացառությամբ արժեթղթերի փաթեթի, որի կառավարումն իրականացվում է սույն մասի 7-րդ կետի համաձայն.

10) գնել, վաճառել, կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

11) գնել, վաճառել, փոխանակել արտարժույթ.

12) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

13) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, ոսկերչական իրեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

14) մատուցել ֆինանսական խորհրդատվություն, բացառությամբ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության, որն իրականացվում է սույն մասի 7-րդ կետի համաձայն.

15) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ.

16) իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ.

17) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ.

18) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ:

3.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն և սույն կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

3.3. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

4. Բանկի կանոնադրական կապիտալը, այլ հիմնադրամներ

4.1. Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 8,803,655,000 (ութ միլիարդ ութ հարյուր երեք միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որը կազմված է 1,760,731 (մեկ միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր երեսունմեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափը սահմանված է 3,000,000 (երեք միլիոն) հատ բաժնետոմս:

4.2. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ հայտարարված բաժնետոմսերի ծավալի շրջանակներում լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով, եթե փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերն ամբողջությամբ վճարվել են:

4.3. Բանկը, իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո, կարող է շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ բաժնետերերին տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

4.4. Բանկի կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ժողով) կողմից:

4.5. Բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևով արգելվում է, բացառությամբ, երբ "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի համաձայն Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք են ձեռք բերում Բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում՝ Կենտրոնական բանկի համաձայնությամբ:

4.6. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում, կանոնադրական կապիտալի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է Ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

4.7. Բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցության ձեռքբերումը կարող է կատարվել "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով, Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Սույն կետով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում "Արժեթղթի շուկայի մասին" ՀՀ օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող նշանակալից մասնակցից մասնակցություն ձեռք բերելու դեպքերի վրա, եթե դա կատարվել է Ֆոնդային բորսայում և չի գերազանցում Բանկի կանոնադրական հիմնադրամի 20 %-ը:

4.8. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ

գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.9. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամն այլ նպատակների համար չի կարող օգտագործվել:

4.10. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սույն կանոնադրության 4.9 կետով սահմանված չափից փոքր մեծություն, ապա մասհանումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի առնվազն 5%-ի չափով:

4.11. Բանկն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է ստեղծել հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման և այլ պահուստներ, ինչպես նաև հիմնադրամներ, այդ թվում՝ աշխատակիցների բաժնետիրացման հատուկ հիմնադրամ:

4.12. Բանկի հիմնադրամների ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Բանկի խորհրդի կողմից:

5. Բանկի բաժնետոմսերը

5.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են բաց կամ փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Բանկի խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը, որը չի կարող պակաս լինել անվանական արժեքից, բացառությամբ սույն կանոնադրության 5.4 կետով նախատեսված դեպքերի: Բաց բաժանորդագրության ձևով Բանկի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում Բանկի խորհրդի կողմից հաստատվում է բաժնետոմսերի թողարկման ազդագիր, որը գրանցվում է Կենտրոնական բանկի կողմից:

5.2. Բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց, որպես վճարման միջոց, կարող է հանդիսանալ միայն ՀՀ դրամը: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռքբերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

5.3. Բանկը չի կարող իր բաժնետոմսերը զեղչել, գնել կամ հատուցմամբ այլ կերպ ձեռք բերել, դրանք գրավ ընդունելով վարկ տալ, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրության 7.6 կետի ժա) ենթակետում նշված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Բանկի բաժնետոմսերը գրավ ընդունելը կամ ձեռք բերելն անհրաժեշտ է Բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ

պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար, ընդ որում, Բանկը պարտավոր է տվյալ բաժնետոմսերը սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից, օրենքով սահմանված ժամկետում, իրացնել դրանք:

5.4. Բանկն իրավունք ունի լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխել դրանց շուկայական արժեքից ցածր, եթե՝

ա) տեղաբաշխումն իրականացվում է Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բոլոր բաժնետերերի կողմից նման բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքն իրականացնելու ձևով.

բ) բաժնետոմսերի տեղաբաշխման համար Բանկն օգտվում է տեղաբաշխողի (միջնորդի) ծառայություններից: Տեղաբաշխման գինն այս դեպքում կարող է շուկայական արժեքից ցածր լինել միայն տեղաբաշխողին (միջնորդին) վճարվող վարձատրության չափով, որը սահմանվում է որպես տոկոսադրույք՝ տեղաբաշխվող բաժնետոմսի գնի նկատմամբ:

5.5. Բանկի մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.6. Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի բաժնետոմսեր են: Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրը, որում նշվում են յուրաքանչյուր բաժնետիրոջ մասին տեղեկություններ, ինչպես նաև գրառվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ, վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

5.7. Բանկի բաժնետերերը պարտավոր են Բանկին և Կենտրոնական դեպոզիտարիային օրենսդրությամբ սահմանված կարգով հայտնել իրենց վերաբերյալ տվյալների փոփոխության մասին:

5.8. Բանկի բաժնետիրոջ պահանջով Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է հաստատել Բանկի բաժնետիրոջ սեփականության իրավունքը՝ բաժնետիրոջը ռեեստրից համապատասխան քաղվածք տրամադրելով:

6. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

6.1. Բանկը կարող է թողարկել անվանական կամ ըստ ներկայացնողի պարտատոմսեր և օրենքով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Բանկի խորհրդի որոշմամբ, որով սահմանվում են արժեթղթի տեսակը, անվանական արժեքը, մարման ձևը, ժամկետները և մյուս պայմանները:

6.3. Բանկի կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չի կարող գերազանցել Բանկի կանոնադրական կապիտալը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկին պարտատոմսեր թողարկելու համար:

6.4. Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

7. Բանկի բաժնետերերը

7.1. Բանկի բաժնետեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ հաշվի առնելով օրենքով ու սույն կանոնադրության 4.7 և 4.8 կետերով բաժնետերերի համար նախատեսված սահմանափակումները:

7.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

7.3. Բանկի բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

7.4. Եթե Բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Բանկին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Բանկի գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Բանկին պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Բանկի պարտավորությունների համար:

Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Բանկի անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Բանկին որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Բանկը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

7.5. Բանկի կողմից բաց բաժանորդագրության միջոցով քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքում Բանկի բաժնետերերը չունեն քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

7.6. Բանկի յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներն, այն է՝

ա) մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ՝ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին.

ե) հանդես գալ առաջարկություններով ժողովներում և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

զ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքով և

սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,

է) Բանկի լուծարման դեպքում, ստանալ Բանկի գույքի (միջոցների)՝ իրեն հասանելիք մասը.

ը) սույն կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով, օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

թ) դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին, սույն կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և նա քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարքը կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.

- սույն կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նրա իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ քվեարկությանը չի մասնակցել.

ժա) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

ժբ) օգտվել օրենսդրությամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

7.7. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) չհրապարակել Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, այդ թվում՝ բանկային գաղտնիքը.

գ) Բանկի ձայնի իրավունքով 10 և ավելի տոկոսի հասարակ (սովորական) բաժնետոմսերի տիրապետման դեպքում Բանկին հայտարարություն ներկայացնել իր հետ փոխկապակցված անձանց մասին.

դ) Բանկին հայտարարություն ներկայացնել իր մասնակցության միջոցով որևէ այլ անձի կողմից Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ նման մասնակցության բացակայության մասին: Բաժնետիրոջ մասնակցության արդյունքում որևէ այլ անձի կողմից Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում՝ ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը՝ նախնական համաձայնություն ստանալու համար.

ե) կատարել օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջները:

8. Բանկի շահույթի բաշխումը: Շահութաբաժինները

8.1. Տարեկան գործունեության արդյունքում, Բանկի ստացած համախառն եկամտի

և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

8.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

8.3. Զուտ շահույթից ձևավորվում են Բանկի պահուստային հիմնադրամը, սույն կանոնադրությամբ և Ժողովի կողմից սահմանված այլ հիմնադրամներն ու վճարվում են տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները:

8.4. Տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել զուտ շահույթից՝ ՀՀ դրամով, եռամսյակային և կիսամյակային՝ Բանկի խորհրդի որոշմամբ, ինչպես նաև տարեկան՝ Բանկի ժողովի որոշմամբ:

8.5. Տարեկան շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Բանկի խորհրդի առաջարկությամբ, սահմանելով նաև վճարման ժամկետը:

8.6. Բանկն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

ա) Բանկը հետ չի գնել բաժնետոմսերը սույն կանոնադրության 7.6 կետի ժա) ենթակետում նշված դեպքերում.

բ) շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ, Բանկի վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշերին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

գ) այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված շահույթի գումարը:

9. Բանկի կառավարման մարմինները

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (Ժողով).
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ).
- Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գործադիր տնօրեն (Վարչության նախագահը) (այսուհետ՝ Գործադիր տնօրեն) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն), (Գործադիր տնօրենը և Վարչության անդամները համատեղ այսուհետ՝ գործադիր մարմնի անդամներ):

10. Ժողովը: Իրավասությունները: Որոշումների ընդունումը

10.1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան Ժողով: Տարեկան Ժողովը գումարվում է Բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև Ժողովի

անցկացման մասին ծանուցման կարգը և բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Բանկի Խորհուրդը՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

10.2. Ժողովի իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ) Ժողովի վարման կարգի հաստատումը և հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ժա) բաժնետոմսերի համախմբումն (կոնսոլիդացիա) ու բաժանումը.

ժբ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.

ժգ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժդ) Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.

ժե) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին.

ժզ) գործարք և (կամ) փոխկապված գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը, որի նպատակն է Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի տեղաբաշխումը, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից, գործարք, որով վճարման ենթակա գումարը կամ գույքի շուկայական արժեքը գերազանցում են Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 2 տոկոսը և

որոնցում առկա է շահագրգռվածություն, ինչպես նաև գործարք, որում շահագրգիռ են ճանաչվել Խորհրդի բոլոր անդամները.

ժէ) Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

ժը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավասություններ:

10.3. Սույն կանոնադրության 10.2 կետում նշված իրավասությունները, բացառությամբ դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծման, դրանցում մասնակցության, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրման, դրանցում մասնակցության, բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացման, օրենքով և/կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերման և հետգնման վերաբերյալ որոշումների կայացման իրավասությունների, որոնք սույն դրույթի ուժով փոխանցվում են Խորհրդի իրավասությանը, հանդիսանում են Ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Խորհրդին, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնին կամ այլ անձանց:

10.4. Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքով կամ սույն կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

10.5. Տարեկան Ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ Ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.6. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

10.7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթերը.

բ) Խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

դ) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է Ժողովի օրակարգի հարցերում).

ե) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

զ) Բանկի մյուս ղեկավարները և աշխատողները՝ Խորհրդի որոշմամբ:

10.8. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են Ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ երկու պահանջները.

ա) այն չպետք է նախորդի Ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,

բ) ցուցակը կազմելու օրվա և Ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:

Եթե Ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

Խորհրդի որոշմամբ, Բանկի ղեկավարների և աշխատողների Ժողովի գումարման մասին ծանուցումը կարող է կատարվել այլ ձևով:

Տարեկան Ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակվում է մամուլում և ինտերնետում՝ Բանկի տնային էջում:

10.9. Բաժնետերերին Ժողովի գումարման մասին ծանուցումը կատարվում է Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

10.10. Բանկի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր բաժնետերը Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 60 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի անդամության թեկնածուներ:

Խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկները և որոշում է ընդունում դրանք տարեկան Ժողովի օրակարգում ընդգրկելու կամ մերժելու մասին՝ սույն կետում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում:

10.11. Քվեարկությունը Ժողովում իրականացվում է "Բանկի մեկ քվերակող բաժնետոմս՝ մեկ ձայն" սկզբունքով:

10.12. Սույն կանոնադրության 10.2 կետի բ), ժա), ժգ), ժե), ժզ) և ժէ) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է միայն Խորհրդի ներկայացմամբ:

10.13. Սույն կանոնադրության 10.2 կետի ա), բ), դ), զ) և ժե) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

10.14. Սույն կանոնադրության 10.2 կետի գ) և ժդ) ենթակետերում նշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

10.15. Սույն կանոնադրության 10.13 և 10.14 կետերում չնշված հարցերով որոշումները Ժողովն ընդունում է դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

10.16. Սույն կանոնադրության 10.2 կետի բ), գ) և ը) ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումները չեն կարող ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով:

10.17. Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ երկու օրինակից, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Ժողովի արձանագրության մեջ նշվում են՝

ա/ Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

բ/ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,

գ/ Ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը,

դ/ Ժողովի նախագահը և քարտուղարը, Ժողովի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի Ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ժողովի ընդունած որոշումները:

10.18. Ժողովի վարման կարգի (ներառյալ՝ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով ընդունվող որոշումները) մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է Ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով

10.19. Բանկն ունի հաշվիչ հանձնաժողով, որի անդամներն ընտրվում են և լիազորությունների ժամկետը սահմանվում է բաժնետերերի Ժողովի որոշմամբ՝ Խորհրդի ներկայացմամբ:

Հաշվիչ հանձնաժողովը բաղկացած է 3 անդամից, որոնք չեն կարող լինել Բանկի խորհրդի անդամներ, Բանկի Վարչության նախագահ կամ Բանկի Վարչության անդամներ, ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

Հաշվիչ հանձնաժողովը որոշում է Ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություն է տալիս Ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի քվեարկությանը մասնակցելու իրավունքը, ամփոփում է քվեարկության արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն և Բանկի արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

10.20. Եթե Բանկի բաժնետերերին օրենքով սահմանված կարգով քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար Բանկի կողմից հաշվի են առնվում նաև Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

10.21. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր Ժողովի գումարման դեպքում

օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Չկայացած Ժողովի փոխարեն գումարվող նոր Ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

10.22. Բանկի բաժնետերերի ծանուցումը նոր Ժողովի գումարման մասին կատարվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, բայց Ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ: Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած Ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

10.23. Քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը հաստատվում է Խորհրդի որոշմամբ: Քվեաթերթիկները տրվում են Ժողովին մասնակցելու համար գրանցված բաժնետիրոջը (նրա ներկայացուցչին)՝ Ժողովի քվորումի առկայության դեպքում:

10.24. Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա/ Բանկի անվանումը,

բ/ Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

գ/ քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,

դ/ քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ "կողմ", "դեմ", "ձեռնպահ": Գումարային (կումուլյատիվ) քվեարկության անցկացման դեպքում քվեաթերթիկը պետք է նախատեսի քվեարկության կարգի առանձնահատկությունները,

ե/ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, եթե բաժնետերը քվեարկում է հեռակա կարգով,

զ/ ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (ներկայացուցչի) կողմից,

է/ քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

10.25. Խորհրդի ընտրության դեպքում քվեաթերթիկը պետք է թեկնածուների անունից բացի նրանց մասին պարունակի նաև անհատականացնող այլ տվյալներ:

10.26. Քվեարկությունը Ժողովում իրականացվում է "Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն" սկզբունքով, բացառությամբ՝ Խորհրդի անդամների ընտրության, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:

10.27. Սխալ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարցեր, ապա նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում անբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը:

10.28. Քվեարկության արդյունքներով Բանկի հաշվիչ հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի անդամները:

10.29. Արձանագրությունը կազմելուց և այն ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմռսում է հաշվիչ հանձնաժողովը և հանձնում Բանկի արխիվ՝ պահպանության համար:

10.30. Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Ժողովում, կամ Ժողովի ավարտից հետո բաժնետերերը տեղեկացվում են քվեարկության արդյունքներին՝ հաշվետվության հրապարակման կամ այն բաժնետերերին ուղարկելու միջոցով:

11. Խորհուրդը

11.1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

11.2. Խորհուրդը կազմվում է առնվազն 5, իսկ առավելագույնը՝ 15 անդամից:

11.3. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում՝ Բանկի ներկա բաժնետերերի կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ: Եթե մեկ երրորդը բնական թիվ չէ, ապա Խորհրդի անկախ անդամների թիվ է համարվում մեկ երրորդին առավել մոտ ամբողջ թիվը:

Խորհրդի անկախ անդամ կարող է ընտրվել այն անձը, որը՝

ա) վերջին երեք տարվա ընթացքում Բանկում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Բանկում կամ Բանկի հետ փոխկապակցված այլ անձի մոտ.

բ) վերջին երեք տարվա ընթացքում Բանկից կամ Բանկի հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես Խորհրդի անդամ ստացած վարձատրության.

գ) վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, Խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն Բանկի և (կամ) Բանկի հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ.

դ) վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի և (կամ) դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և (կամ) աշխատող.

ե) վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Բանկի Խորհրդի անդամ.

զ) չի հանդիսանում Բանկի նշանակալից բաժնետեր.

է) վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել Բանկի նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.

ը) չի հանդիսանում սույն մասի «ա-է» կետերում նշված անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

Սույն մասի «գ» կետի իմաստով նշանակալից է համարվում Բանկի 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերը:

Խորհրդի անկախ անդամին վերաբերող սահմանափակումները գործում են նաև Խորհրդի անկախ անդամի պարտականությունները կատարելու ժամանակահատվածում:

Անձը Խորհրդի անդամ ընտրվելիս պարատվոր է բացահայտել իր մոտ սույն 11.3. կետի 3-րդ պարբերության ա)-ից ը) ենթակետերում նշված հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ, իսկ Խորհրդի անդամներն իրենց պաշտոնավարման ընթացքում իրենց մոտ սույն 11.3. կետի 3-րդ պարբերության ա)-ից ը) ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուն պես նույնպես պարտավոր են անհապաղ բացահայտել դրանք:

11.4. Ժողովին՝ Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը և Խորհուրդը:

11.5. Բանկի այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

11.6. Բանկի այն բաժնետերերը, որոնք Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են, օրենքով սահմանված կարգով, բաժնետերերի խումբ ստեղծելու մասին պայմանագիր կնքելով, միավորել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում առանց Ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում:

11.7. Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում:

Սույն մասի կիրառման առումով Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կետի երրորդ մասում նշված պայմանագիրը: Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի Խորհրդի կազմում առանց Ժողովի կողմից ընտրության:

Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն Ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կետի երրորդ մասում նշված պայմանագիրը կնքած Բանկի մասնակիցները:

11.8. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որի տվյալները բավարարում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և Կենտրոնական

բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին:

11.9. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը մեկ տարի է: Խորհրդի անդամների ընտրությանը հաջորդող հերթական տարեկան ժողովը մեկ օրացուցային տարուց ավելի շուտ կայանալու և խորհրդի նոր կազմ ընտրվելու դեպքում Խորհրդի գործող անդամների լիազորությունները չեն համարվում վաղաժամկետ դադարեցված: Խորհրդի անդամների ընտրությանը հաջորդող հերթական տարեկան ժողովը մեկ օրացուցային տարուց ավելի ուշ կայանալու դեպքում, Խորհրդի անդամը պաշտոնավարում է մինչև այդ օրը, իսկ Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում արտահերթ Ժողովի կողմից ընտրված Խորհրդի անդամը պաշտոնավարում է մինչև առաջիկա տարեկան Ժողովի կայանալու և Խորհրդի նոր կազմ ընտրվելու օրը: Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրվելը չի սահմանափակվում:

11.10. Խորհրդի անդամի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու հիմք է հանդիսանում Ժողովի որոշումը:

11.11. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատողներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

11.12. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից:

Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է Ժողովում.

ե) Բանկի անունից ստորագրում է Բանկի գործադիր տնօրենի և Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի հետ աշխատանքային պայմանագրերը:

11.13. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երկու ամիսը մեկ: Խորհրդի նիստի մասին ծանուցումը խորհրդի անդամներին ուղարկվում է նիստից առնվազն յոթ օր առաջ՝ էլեկտրոնային եղանակով, ֆաքսի միջոցով, փոստով կամ կապի այլ միջոցի օգտագործմամբ, այդ թվում հնարավոր է նաև հեռախոսագրերի կիրառումը: Հրատապ որոշումներ կայացնելու անհրաժեշտության դեպքում ծանուցումը կարող է ուղարկվել սույն կետում նշված ժամկետից ավելի կարճ ժամկետում:

11.14. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև, Խորհրդի անդամի, Գործադիր տնօրենի, Վարչության, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես

նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

11.15. Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ժողովի կողմից հաստատված Խորհրդի կանոնակարգով: Հեռակա կարգով նիստերի անցկացման դեպքում Խորհրդի որոշումներն ընդունվում են հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, ընդ որում հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստի բոլոր մասնակիցների միմյանց հետ հաղորդակցման դեպքում նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում: Հեռակա քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք Խորհրդի անդամներին են ուղարկվում էլեկտրոնային եղանակով, ֆաքսի միջոցով, փոստով կամ կապի այլ միջոցի օգտագործմամբ՝ քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան որոշում ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվության հետ միասին: Քվեաթերթիկի ուղարկումը համարվում է նաև Խորհրդի նիստի մասին ծանուցում: Խորհրդի անդամները լրացված քվեաթերթիկները Բանկ են ուղարկում էլեկտրոնային եղանակով, ֆաքսի միջոցով, փոստով կամ կապի այլ միջոցի օգտագործմամբ: Լրացված քվեաթերթիկների արդյունքներն, ամփոփվում և համապատասխան արձանագրության (լրացված քվեաթերթիկները պարտադիր կցվում են արձանագրությանը) տեսքով Խորհդրի նախագահին են ներկայացվում Խորհրդի քարտուղարի կողմից:

11.16. Խորհրդի նիստն իրավասու է (քվորում ունի), եթե Խորհրդի նիստին մասնակցում են Խորհրդի անդամների կեսը: Հեռակա քվեարկության դեպքում, եթե քվեարկել են խորհրդի անդամների մեծամասնությունը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Ձայների և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում, ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, ընդ որում՝ Խորհրդի նախագահը պարտավոր է իր կարծիքը հայտնել վերջինը:

11.17. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

11.18. Խորհրդի նիստերին հրավիրվում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը: Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Սույն կանոնադրության 12.1 կետի գ) ենթակետով նախատեսված հարցերի քննարկմանը Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է չհրավիրվել:

11.19. Խորհրդի նիստերին այլ անձանց մասնակցության իրավունքը որոշում է Խորհրդի նախագահը՝ ըստ անհրաժեշտության:

11.20. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը

կազմվում է նիստից հետո 10-օրյա ժամկետում:

Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է պատշաճ մանրամասնությամբ: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

11.21. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

12. Խորհրդի իրավասությունները

12.1. Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ) Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատողների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

է) Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը.

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում, անհրաժեշտության դեպքում՝ բացահայտված թերությունների վերացմանն ուղղված

միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժգ) Բանկի կողմից օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժդ) Բանկի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների ու կանոնակարգերի հաստատումը.

ժե) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը և (կամ) դրանցում մասնակցությունը, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը, դրանցում մասնակցությունը.

ժզ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և (կամ) դրանցում մասնակցությունը.

ժէ) սույն կանոնադրության 10.2 կետի բ), ժա), ժգ), ժե), ժզ) և ժէ) ենթակետերում նշված հարցերի ներկայացումը Ժողովին.

ժը) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը, բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը, օրենքով և/կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Բանկի կողմից բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը.

ժթ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ի) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

իա) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների և կարգերի սահմանումը.

իբ) խոշոր գործարք կնքելու մասին որոշման ընդունումը, որի առարկա է հանդիսանում Բանկի գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը.

իգ) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքներ կնքելու մասին որոշման ընդունումը.

իդ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը.

իե) Բանկի առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկի հաստատումը.

իզ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

12.2. Սույն կանոնադրության 12.1 կետում նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահված է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Գործադիր մարմնին կամ այլ անձանց:

12.3. Սույն կանոնադրության 12.1 կետի իբ) ենթակետում նշված հարցերի մասին որոշումը Խորհուրդը պետք է ընդունի միաձայն, իսկ օրենքով սահմանված դեպքերում հարցի քննարկումը ներկայացնել Ժողովին:

12.4. Սույն կանոնադրության 12.1 կետի իգ) ենթակետում նշված հարցերի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող Խորհրդի անդամների մեծամասնությամբ:

12.5. Առնվազն տարին մեկ անգամ, Խորհուրդն իր նիստում քննարկում է Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում՝ վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

Առնվազն եռամսյակը մեկ անգամ, Խորհուրդն իր նիստում քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, Գործադիր տնօրենի և Բանկի գլխավոր հաշվապահի հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

12.6. Բանկի Գործադիր տնօրենի հաշվետվությունը պետք է առնվազն ներառի Բանկի, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, ֆինանսատնտեսական գործունեության ծրագրերի, Ժողովի և Խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարման, Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման Բանկի առաքելության իրականացման, այլ գործառույթների ու ցուցանիշների կատարման գնահատականը:

12.7. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման հաշվետվությունը պետք է առնվազն ներառի սույն կանոնադրության 16.3 կետում նշված հաշվետվությունները, ինչպես նաև ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի կառավարման, օրենքների, այլ իրավական ակտերի ու Բանկի ներքին ակտերի, Խորհրդի կողմից Բանկի գործադիր մարմնին տրված հանձնարարականների և Բանկի ներքին հսկողության համակարգի գնահատականները:

12.8. Բանկի գլխավոր հաշվապահի հաշվետվությունը պետք է առնվազն ներառի Բանկի հաշվապահական հաշվառման վարման վիճակի և հավաստիության, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների և վիճակագրական հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև Բանկի մասին տեղեկատվության հրապարակման հավաստիության գնահատականը:

13. Խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմքերը

13.1. Ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ) նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն ենթակետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և հեռակա (հարցմամբ) մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն.

դ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

13.2. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

14. Գործադիր մարմինը

14.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար: Վարչության կազմը ձևավորվում է Խորհրդի որոշմամբ, ընդ որում Վարչության կազմում պարտադիր ընդգրկվում են Գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը:

14.2. Բանկի Վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված՝ Վարչության կանոնակարգի հիման վրա, որը սահմանում է Բանկի Վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

14.3. Բանկի Վարչությունը՝

ա/ սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, վարկերի, ավանդների և այլ տոկոսադրույքները.

բ) հաստատում է Բանկի աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները.

գ) քննարկում է սույն կանոնադրության 14.9 կետի ա), զ), թ), ժգ), ժդ) ենթակետերով նախատեսված հարցերը, որոշումներ է ընդունում դրանց վերաբերյալ.

դ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստուգումների, ստուգումների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ.

ե) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գույքի օտարման գործարքների վերաբերյալ.

զ) քննարկում և որոշումներ է ընդունում վարկերի տրամադրման վերաբերյալ.

է) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահամարության մասին.

ը) քննարկում և որոշումներ է ընդունում Բանկի գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ամսական և (կամ) եռամսյակային

կատարողականների մասին.

թ) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության տարեկան պլանները և հաշվետվությունները.

14.4. Բանկի Վարչության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Վարչության անդամների կեսը: Բանկի Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Վարչության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Վարչության այլ անդամի) չի թույլատրվում:

Գործադիր տնօրենն ունի որոշիչ ձայնի իրավունք և պարտավոր է իր կարծիքը ներկայացված հարցի վերաբերյալ հայտնել վերջինը:

14.5. Բանկի Վարչության նիստերը գումարում է Գործադիր տնօրենը՝ առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

Վարչության նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում է Բանկի ներքին աուդիտի ղեկավարը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել այլ անձինք:

14.6. Վարչության նիստերն արձանագրվում են: Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Բանկի Խորհրդին, Բանկի ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքներն ըստ նիստին մասնակցած՝ Վարչության յուրաքանչյուր անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Վարչության անդամների և Վարչության նիստին մասնակցած այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

Վարչության նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը, որը ստորագրում է նիստերի որոշումները: Վարչության նախագահը պատասխանատվություն է կրում որոշումների մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

14.7. Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

14.8. Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

14.9. Գործադիր տնօրենը՝

ա) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող Բանկի՝ ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, վարչակազմակերպական կառուցվածքը.

բ) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, վերահսկում է դրանց կատարումը, գործարքներ է կնքում Բանկի անունից, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում, գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.

գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին.

դ) Բանկի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

ե) ապահովում է Ժողովի, Խորհրդի և Վարչության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարումը.

զ) ըստ Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի, իրականացնում է իրավասությունների և պարտականությունների, այդ թվում՝ Գործադիր տնօրենի տեղակալների, բաշխումը աշխատողների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերությունները.

է) վերահսկում է միջին և ստորին օղակների ղեկավարների գործողությունները.

ը) պահանջում է ստորաբաժանումների ղեկավարներից՝ վերահսկել իրենց աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետությունը.

թ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում կազմակերպական կառուցվածքը կատարելագործելու վերաբերյալ.

ժ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններ, հայցադիմումներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր.

ժա) պարբերաբար իրականացնում է Բանկի անձնակազմի վերապատրաստումը.

ժբ) իրականացնում է Վարչության նախագահի գործառույթները՝

1) կազմակերպում է Վարչության աշխատանքները.

2) գումարում և նախագահում է Վարչության նիստերը.

3) կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը.

4) ներկայացնում է Վարչությունը Խորհրդի նիստերին.

5) ստորագրում է Վարչության նիստերի որոշումները.

ժգ) անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում ներքին հսկողության համակարգի համարժեքության և մոնիտորինգի արդյունավետության

վերաբերյալ.

ժդ) իր իրավասություններին պատկանող ցանկացած հարց կարող է քննարկել Վարչության նիստին.

ժե) իրականացնում է սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

14.10. Այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ժողովի, Խորհրդի կամ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Գործադիր տնօրենի իրավասությանը:

14.11. Գործադիր տնօրենը Խորհրդին առնվազն եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի կողմից սահմանված կարգով և ձևով:

14.12. Գործադիր տնօրենի իրավասությանն ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ՝ եթե Գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

14.13. Խորհրդի կողմից Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի գործադիր տնօրեն (բանկի ղեկավար).

գ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

14.14. Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի Գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջել սույն ենթակետով նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Գործադիր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

15. Գլխավոր հաշվապահը

15.1. Բանկի գլխավոր հաշվապահը (այսուհետ՝ Գլխավոր հաշվապահ) նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Գլխավոր հաշվապահ կամ նրա տեղակալ չի կարող լինել այն անձը, որը չի

համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել բանկի ղեկավար:

15.2. Գլխավոր հաշվապահն իրականացնում է Բանկի հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը՝ "Հաշվապահական հաշվառման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների և Կենտրոնական բանկի նորմատիվային իրավական ակտերի համաձայն:

15.3. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Բանկի բոլոր աշխատողների համար:

15.4. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում, Գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրենի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրենը: Սույն կետում նշված գործառնությունների մասին Գործադիր տնօրենը տեղեկացնում է Խորհրդին՝ եռամսյակային հաշվետվությունները ներկայացնելիս:

15.5. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

15.6. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

16. Ներքին աուդիտի ստորաբաժանումը

16.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (այսուհետ՝ Ներքին աուդիտ) ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներն ու աշխատողները, ինչպես նաև գործադիր մարմնի հետ փոխկապակցված անձինք:

16.2. Ներքին աուդիտը Խորհրդի հաստատած կանոնակարգի և ծրագրի համաձայն՝

ա) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ,

բ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

16.3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.

բ) արտահերթ, եթե բացահայտվել են Ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Բանկի գործադիր մարմնի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում, պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

17. Բանկի ղեկավարները

17.1. Բանկի ղեկավարներ են համարվում Խորհրդի նախագահը, նրա տեղակալը և Խորհրդի անդամները, գործադիր մարմնի անդամները, Գլխավոր հաշվապահի տեղակալը, Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը, ինչպես նաև Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով որևէ կերպ Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ Գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ Բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատողները:

17.2. Բանկի ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով

հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես Բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել Բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

զ) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

17.3. Խորհրդի նախագահը կամ Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Բանկի գործադիր մարմնի անդամ կամ Բանկի այլ աշխատող, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատող, բացառությամբ եթե Բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք:

17.4. Բանկի գործադիր մարմնի անդամները, Ներքին աուդիտի ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր մարմնի անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

17.5. Բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում, արգելվում է որևէ կերպ ներգործելը կամ Բանկի գործունեությանը միջամտելը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Բանկի ղեկավարների վրա ապօրինաբար ներգործելու կամ Բանկի ընթացիկ գործունեությանն ապօրինաբար միջամտելու հետևանքով Բանկին պատճառված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Տեղեկությունները և դրանց հրապարակումը

18.1. Բանկը ինտերնետում՝ Բանկի տնային էջում հրապարակում է՝

ա) Բանկի ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և արտաքին աուդիտի եզրակացության պատճենը՝ տարեկան հաշվետվությունների վերաբերյալ.

բ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված ժամկետում տարեկան Ժողովի գումարման մասին հայտարարությունը.

գ) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները.

դ) Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նրանց անվանումը (անունը), Բանկում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Բանկի կանոնադրական կապիտալում մասնակցություն՝ բաժնետոմս), նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում նաև՝ մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը.

ե) Խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները՝ նրանց անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, Խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, Բանկի համար

որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում՝ նաև մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը

զ) օրենքով և Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկատվությունը:

18.2. Սույն կանոնադրության 18.1. կետի "ա" և "բ" ենթակետերում նշված տեղեկատվությունն օրենքով և Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով Բանկը հրապարակում է մամուլում և հասարակությանը մատչելի այլ ձևով:

18.3. Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջն անվճար տրամադրվում է Բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

18.4. Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 2 տոկոսին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր բաժնետիրոջ (բաժնետերերի), Բանկն անվճար տրամադրում է հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք)՝

ա) Խորհրդի, Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի վերաբերյալ սույն կանոնադրության 18.7 կետում նշված տեղեկությունները.

բ) Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի և Գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում Բանկից ստացված ամբողջ վարձատրության չափը, նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից Բանկից ստացված վարկերի և այլ փոխառությունների (այդ թվում նաև՝ մարված) վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ չափը, տոկոսադրույքը և ժամկետը, ինչպես նաև Բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին սույն կանոնադրության 18.1 կետի դ) ենթակետում նշված տեղեկությունները.

գ) Բանկի հետ կապված անձանց հետ կնքված խոշոր գործարքների, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք կնքվել են այդ տեղեկությունները ստանալու վերաբերյալ պահանջը ներկայացնելուն նախորդող երկու տարվա ընթացքում և կապված են սույն կանոնադրության 3.1 կետի 1-4 և 10-12 ենթակետերով սահմանված գործառնություններից որևէ մեկի իրականացման հետ.

դ) Բանկի կողմից Բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին.

ե) Բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող բաժնետերերի խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի առկայության մասին, ինչպես նաև Բանկի՝ այդ պայմանագրերի կողմ հանդիսացող բաժնետերերի անունները (անվանումները).

զ) Բանկի հաշվեկշռում արտացոլված գույքի նկատմամբ Բանկի գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, Բանկի կառավարման մարմինների հաստատած Բանկի ներքին ակտերի, առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները և օրենքով սահմանված այլ փաստաթղթերի, ֆինանսական ու այլ հաշվետվությունների, ինչպես նաև Բանկի վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշումների պատճենները.

է) այն իրավաբանական անձանց ցանկը, որոնց կանոնադրական կապիտալում Բանկի ղեկավարները կամ նրանց հետ փոխկապակցված անձինք ունեն 20% և ավելի մասնակցություն կամ հնարավորություն՝ ներազդելու նրանց որոշումների վրա:

Բանկի բոլոր բաժնետերերին տրամադրվում են Ժողովի հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները:

18.5. Բանկի բաժնետիրոջը տրամադրված տեղեկությունները նրա կողմից չեն կարող փոխանցվել այլ անձանց, ինչպես նաև դրանք չեն կարող օգտագործվել Բանկի գործարար համբավը արատավորելու, Բանկի մասնակիցների կամ հաճախորդների իրավունքներն ու օրինական շահերը խախտելու կամ նմանատիպ այլ նպատակներով:

18.6. Բանկը ցանկացած անձի տրամադրում է օրենքով սահմանված այլ տեղեկատվություն:

18.7. Բանկի Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի, Գլխավոր հաշվապահի վերաբերյալ, ինչպես նաև Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Բանկի բաժնետերերին բացահայտվող տեղեկատվությունը ներառում է՝

ա) նրանց ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) մասնագիտությունը և կրթությունը.

գ) վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ) տվյալ պաշտոնում (ընտրվելու) նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը.

ե) տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը.

զ) Բանկի մասնակից հանդիսացող Խորհրդի անդամին, Գործադիր տնօրենին, Գլխավոր հաշվապահին կամ Խորհրդի անդամի թեկնածուին և նրանց հետ փոխկապակցված անձանց պատկանող՝ Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը.

է) տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը) փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

19. Հաշվառումը, հաշվետվությունը և վերահսկողությունը

19.1. Բանկը կազմում և արտաքին աուդիտի եզրակացության հետ հրապարակում ու Կենտրոնական բանկ է ներկայացնում տարեկան, ինչպես նաև՝ եռամսյակային ֆինանսական և այլ հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևերով և կարգով՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները:

19.2. Բանկն առնվազն տարին մեկ անգամ Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

ա) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

բ) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ այդ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների և նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին.

գ) Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց հայտարարություններն այն մասին, որ նրանց մասնակցության միջոցով որևէ նոր անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերել:

Եթե այլ անձ Բանկում ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցություն,

ապա Բանկը Կենտրոնական բանկին ներկայացնում է օրենքով սահմանված փաստաթղթեր այդ անձանց վերաբերյալ՝ Կենտրոնական բանկի համաձայնությունը ստանալու համար:

19.3. Բանկը հաշվապահական հաշվառումը վարում է Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ "Հաշվապահական հաշվառման մասին" ՀՀ օրենքին և Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:

19.4. Բանկի հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանն է:

19.5. Բանկը յուրաքանչյուր տարի, Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով ներգրավում է անկախ աուդիտ իրականացնող անձի՝ Կենտրոնական բանկի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումը Ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել Խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

Կենտրոնական բանկը կարող է պարտադրել Բանկին 4 ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը:

Կենտրոնական բանկն իրավունք ունի պահանջելու, որպեսզի Բանկը փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ:

19.6. Բանկի գործունեության նկատմամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող վերահսկողության արդյունքում հայտնաբերված՝ բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական տնտեսական նորմատիվների, հաշվապահական հաշվառման կանոնների, սույն կանոնադրության և բանկային գործունեությունը կարգավորող օրենքների պահանջների խախտումների համար, Կենտրոնական բանկը Բանկի և (կամ) Բանկի ղեկավարների նկատմամբ կիրառում է պատժամիջոցներ:

20. Բանկի լուծարումը

20.1. Բանկը լուծարվում է՝

ա) լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում.

բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.

գ) "Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին" ՀՀ օրենքով սահմանված դեպքերում.

դ) Ժողովի որոշմամբ.

ե) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:

Սույն կետի գ) ենթակետով սահմանված դեպքերում լուծարումն իրականացվում է “Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով:

20.2. Ժողովն իրավունք ունի որոշում կայացնել լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ՝ միայն Կենտրոնական բանկից նախնական համաձայնություն ստանալուց հետո:

20.3. Բանկի լուծարումն իրականացվում է Ժողովի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն 5 անդամից:

20.4. Բանկի լուծարման դեպքում, նրա բոլոր դրամական միջոցները, ներառյալ Բանկի գույքի իրացումից ստացված հասույթը, ուղղվում է Բանկի պարտատերերի պահանջների բավարարմանը, այնուհետև բաժնետերերին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

20.5. Բանկի լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը:

Կենտրոնական բանկն իրավունք ունի լուծարային հանձնաժողովից պահանջել ցանկացած տեղեկատվություն նրա գործունեության վերաբերյալ:

20.6. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ, պարբերաբար, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տեղեկություններ հրապարակել մամուլում:

20.7. Բանկը համարվում է լուծարված և դադարում է իրավաբանական անձ լինել՝ լուծարային հանձնաժողովի կողմից իր գործունեության արդյունքների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունը վերջինիս կողմից հաստատելուց և բանկերի գրանցումների մատյանում գրառում կատարելուց հետո, ինչի մասին լուծարային հանձնաժողովը տեղեկանք է հրապարակում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով:

Karen Sargsyan

Digitally signed by Karen Sargsyan
DN: c=AE, st=Yerevan, l=Yerevan, o= ARARATBANK OJSC, email= araratbank@araratbank.am, cn=Karen Sargsyan
Date: 2020.02.11 17:49:15 +04'00'

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ, ԼԻՑԵՆԶԻԱ

Գրանցված է 20.09.1991թ.

Փոփոխություն է կատարվել
ՀՀ ԿԲ նախագահի 12.06.2000թ. N350, 23.01.2003թ. թիվ 1/10Ա, 17.11.2005թ. թիվ 1/809Ա, 29.01.2007թ. 1/74Ա, 03.08.2007թ. թիվ 1/1024 Ա որոշումներով, 28.10.2019 թվականին

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ 0153

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
բաց բաժնետիրական ընկերությանը

Բանկի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի փողոց 87 շենք, 85 տարածք

Գրանցման համարը՝ 4

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ՝ 20.09.1991թ.

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02500518

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի
նախագահ՝ Ա. Ջավադյան

.... 2019թ.

Կ Տ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____ Տ.Սարգսյան

Լիցենզիան տրվել է 20 սեպտեմբերի, 1991թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 30 մարտի, 1994թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 31 հոկտեմբերի, 1996թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 13 նոյեմբերի, 2001թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 23 հունվարի, 2003թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 17 նոյեմբերի, 2005թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 29 հունվարի 2007թ.
Լիցենզիայում փոփոխություն է կատարվել 3 օգոստոսի 2007թ.

Բանկային գործունեության լիցենզիա թիվ 4

Սույն լիցենզիան տրվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությանը

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայկական դրամով և արտարժույթով բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Գրանցման թիվը 4

AMERICAN BANK NOTE COMPANY

AraratBank

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 -14/Լ-Հ
Դաս: » ՀՊ
«04» մարտի 2022թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժզ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Կանոնադրության 12.1 կետի ժը) ենթակետը, ինչպես նաև քննարկելով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ պարտատոմսերի շուկայի վերլուծության արդյունքները՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով գրանցելուց հետո մեկ տարվա ընթացքում թողարկել մինչև 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ ծավալով դրամային և մինչև 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշերով):
2. ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, իսկ արտարժույթով թողարկվող պարտատոմսերի համար սահմանել 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար:
3. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել ուղղակի վաճառքի (բաժանորդագրության) ձևով՝ Բանկի գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:
4. Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Բանկի Խորհրդի առանձին որոշումներով:
5. Պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև թողարկվող պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ, պարտատոմսերի ձեռքբերման քանակի և ազատ շրջանառության հետ կապված որևէ սահմանափակում չսահմանել՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
6. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24[00]-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին մինչև պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման աշխատանքային օրվա ժամը 14[00]-ը:
7. Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 24[00]-ի

դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշիվներին մինչև պարտատոմսերի մարման գումարի վճարման աշխատանքային օրվա ժամը 14^{00}-ը:

8. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրեն Մ"Անանյանին՝ պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ՝ գրանցման:
9. Պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումն իրականացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 38/Լ-Հ որոշմամբ հաստատված «Պարտատոմսեր թողարկման, տեղաբաշխման և սպասարկման կարգ»-ին համապատասխան:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

AraratBank

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

AraratBank

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

——— ————— 20—թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

(թողարկողի անվանումը)

Կորպորատիվ անվանական, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության պարտատոմսեր

(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է՝ —— ——— 20——թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում՝ ՀՀ ք. Երևան, Բյուզանդի 87 շենք, 85-րդ տարածքում գտնվող հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ

(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված):

1.	Թողարկողը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
2.	Երաշխավորողը՝	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)՝	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի	Մանրամասն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3.3 կետում՝ «Առաջարկվող պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն»:

	պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	
6.	Թողարկման արժույթը՝	ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար
7.	Առաջարկի գինը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
8.	Անվանական արժեքը՝	10,000 (տասը հազար) ՀՀ դրամ / 25(քսանհինգ) ԱՄՆ դոլար
9.	Քանակը՝	Համապատասխան Թողարկման ծավալի և անվանական արժեթի, այսինքն՝ Թողարկման ծավալի հարաբերությունը անվանական արժեքին
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
12.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր՝	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվելու են Բանկի խորհրդի 2022թ. մարտի 4-ի «Արժեկտրոնային պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» թիվ 14/Լ-Հ որոշմամբ սահմանված ընդհանուր պայմաններով և յուրաքանչյուր թողարկման դեպքում Խորհրդի առանձին որոշումներով:
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		

14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը՝	Արժեկտրոնի տոկոսադրույքը Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ, իսկ վճարումներն իրականացվելու են եռամսյակային պարբերականությամբ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը՝	փաստացի/փաստացի (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը՝	անվանական արժեքով
23.	Մարման արժեքի փոփոխությունը	Չի նախատեսվում
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն՝	«ոչ կիրառելի»

	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	Չի նախատեսվում
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն՝	«ոչ կիրառելի»
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	Չի նախատեսվում
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը՝	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի 87շենք, 85-րդ տարածք
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ
Այլ տեղեկություններ		

28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն՝	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկությունների այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))՝	Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Թողարկողը հնարավորինս սեղմ ժամկետում դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ: Հնարավոր է որոշակի հանգամանքներում կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի հայտը չբավարարվի: Տեղաբաշխման ավարտից հետո երեք ամսվա ընթացքում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ: Չեղյալ համարելու վերաբերյալ Կազմակերպության խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 2 օրվա ընթացքում ներդրողներին վերադարձվում են պարտատոմսերը ձեռք բերելու նպատակով վճարված և մինչ որոշման ուժի մեջ մտնելու օրն արժեկտրոնի հաշվեգրված գումարները:
30.	Արժեթղթերի վարկանիշը՝	«ոչ կիրառելի»
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը՝	Ենթակա է որոշման ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5(հինգ) աշխատանքային օր առաջ

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր

մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Պատասխանատու անձանց ստորագրություն

Գրիգոր Հովհաննիսյան	**Խորհրդի նախագահ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արզիկ Սուվարյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նարեկ Բեգլարյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կորյուն Աթոյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Բաբաջանյան	**Խորհրդի անդամ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Անանյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Սարգսյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բագրատ Ճզմաչյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միեր Գրիգորյան	**Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Գալստյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Զարուհի Մելքոնյան	**Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Հակոբյան	**Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Միեր Անանյան	**Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն**		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

AraratBank

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավելված 6.1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 -Ն որոշմամբ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«31» դեկտեմբերի 2021թ.

ԱրարատԲանկ ԲԲԸ ք.Երևան, Փ.Բուզանդ 87

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ		Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	**4,947,249**	**19,091,237**	**4,629,677**	**17,556,733**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	**(2,733,930)**	**(10,496,167)**	**(2,484,106)**	**(9,162,875)**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**2,213,319**	**8,595,070**	**2,145,571**	**8,393,858**
		-		-	
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	**622,688**	**2,196,181**	**496,282**	**1,786,030**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	**(360,422)**	**(1,258,326)**	**(128,924)**	**(795,693)**
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**262,266**	**937,855**	**367,358**	**990,337**
		-		-	
Եկամուտ շահաբաժիններից		-	-	-	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	**515,480**	**1,636,374**	**460,550**	**1,274,461**
Այլ գործառնական եկամուտներ	6	**94,520**	**1,198,819**	**217,777**	**664,738**
Գործառնական եկամուտներ		**610,000**	**2,835,193**	**678,327**	**1,939,199**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	**(2,333,973)**	**(2,732,475)**	**(1,878,942)**	**(2,264,031)**
Ընդհանուր վարչական ծախսեր	8	**(1,596,589)**	**(5,645,012)**	**(1,133,771)**	**(5,328,037)**
Այլ գործառնական ծախսեր	9	**(345,979)**	**(1,972,171)**	**(1,066,594)**	**(2,114,657)**
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10	-	-	-	
Շահույթ/ (վնասը) մինչև հարկումը		**(1,190,956)**	**2,018,460**	**(888,051)**	**1,616,669**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	**(46,192)**	**(319,303)**	**148,642**	**(275,975)**
Ժամանակաշրջանի շահույթ		**(1,237,148)**	**1,699,157**	**(739,409)**	**1,340,694**
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.01.2022թ.

Հավելված 6.2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 -Ն որոշմամբ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«31» դեկտեմբերի 2021թ.

ԱրարատԲանկ ԲԲԸ ք.Երևան, Փ.Բուզանդ 87

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ	Նախորդ ժամանակաշրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	(19,640)	(712,272)	(508,141)	(651,231)
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(19,640)	(712,272)	(508,141)	(651,231)
Դրամական հոսքերի հեջավորում	-	-	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	-	-	-	-
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորոստների պահուստում	28,977	86,139	5,398	63,925
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ	3,535	128,209	43,084	68,840
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	12,872	(497,924)	(459,659)	(518,466)
Համապարփակ ֆինանսական արդյունք	(1,224,276)	1,201,233	(1,199,068)	822,228
Այդ թվում՝				
Մայր կազմակերպության բաժնեմաս				
Չվերահսկվող բաժնեմաս				

Հավելված 7
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշման

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ7)
«31» դեկտեմբերի 2021թ.

ԱրարատԲանկ ԲԲԸ ք.Երևան, Բուզանդ 87

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված)
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	46,882,291	26,202,365
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ		-	-
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	14,618,428	19,975,710
1.4	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	15	-	-
1.5	Համախոդողներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ	16	147,756,084	148,222,018
1.6	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	17	32,970,740	27,705,847
1.7	Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	13,951,222	13,861,033
1.8	Ներդրումներ վերահսկվող աճծանց կանոնադրական կապիտալում	19	-	-
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		1,884,816	1,965,096
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	8,720,789	9,161,779
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	3	473,740	226,276
1.12	Այլ ակտիվներ	21	2,506,249	1,198,711
1.13	Գուդվիլ		362,602	362,602
	Ընդամենը՝ ակտիվներ		270,126,961	248,881,437
Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

2.4.16. Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մմիջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

2.4.17. Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները ("ռեպո") դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես "Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր" և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը ("հակադարձ ռեպո") չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

2.4.18. Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Չեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության "Զուտ առևտրային եկամուտ" հոդվածում:

2.4.19. Վարձակալություն

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե ,ինչպես և ինչ նպատակովե ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:
Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:
Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:
Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:
Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:
Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

2.4.20. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-5	20-100
Տրանսպորտային միջոցներ	8	20
Այլ հիմնական միջոցներ	1-8	20-100

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են

որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

2.4.21. Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է որպես փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերություն:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Բանկի դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև, որոնք ակնկալվում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ՝ անկախ այն բանից, թե ձեռքբերված կազմակերպության այլ ակտիվներն ու պարտականությունները վերագրվում են այդ դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերին, թե՝ ոչ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը, պետք է

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Բանկի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր

- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտի սահմանումը համաձայն ՖՀՄՍ 8 "Գործառնական սեգմենտներ" ստանդարտի:

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

2.4.22. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

2.4.23. Վաճառքի համար պահվող ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են վաճառքի համար պահվող, երբ հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման ոչ թե դրանց հետագա շահագործման, այլ վաճառքի միջոցով: Դրանց վաճառքը ենթադրվում է իրականացնել վաճառքի համար պահվող դասակարգումից հետո մեկ տարվա ընթացքում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները ճանաչվում են հաշվեկշռային արժեքի կամ իրական արժեքի՝ հանած վաճառքի ծախսերը, նվազագույնով: Եթե վերջինս ավելի փոքր է, քան հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկումից կորուստ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքի՝ հանած վաճառքից ծախսերը, հետագա ցանկացած աճ ճանաչվում է միայն տվյալ ակտիվի նախկինում արժեզրկված գումարների չափով:

2.4.24. Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

2.4.25. Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

2.4.26. Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

2.4.27. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

2.4.28. Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՍ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտներից և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում: Բանկի եկամուտը բխում է հայկական աղբյուրներից:

2.4.29. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և

պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը, ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների:

Գուդվիլի արժեզրկում

Բանկը գնահատում է գուդվիլը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների փոխհատուցվող արժեքի հիման վրա:

Ծանոթագրություն 3 Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Տոկոսային եկամուտ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	160,614	120,573
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերից և փոխառություններից	15,154,072	14,021,910
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	3,257,321	3,112,634
Տոկոսային եկամուտ "Ռեպո" պայմանագրերից	511,280	270,607
Այլ տոկոսային եկամուտ	7,950	31,009
Ընդամենը	**19,091,237**	**17,556,733**

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	4,422,102	4,948,462
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	3,893,726	2,978,900
Տոկսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց	790,271	808,345
Տոկոսային ծախսեր "Ռեպո" պայմանագրերի դիմաց	1,085,059	145,442
Այլ տոկոսային ծախսեր	305,009	281,726
Ընդամենը	**10,496,167**	**9,162,875**

Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**8,595,070**	**8,393,858**

Ծանոթագրություն 4 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Դրամարկղային գործառնություններից	238,307	170,042
Հաշվարկային ծառայություններից	795,119	774,359
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնություններից	26,773	31,272
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	228,567	148,859
Վճարային քարտերի սպասարկումից	907,415	661,498
Լոմբարդային վարկերի տրամադրումից եկամուտ	-	-
Այլ կոմիսիոն վճարներ	-	-
Ընդամենը	**2,196,181**	**1,786,030**

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	83,028	149,537
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	853,400	581,377
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	70,411	13,372
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	66,092	30,908
Այլ կոմիսիոն վճարներ	185,395	20,499
Ընդամենը	**1,258,326**	**795,693**

Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**937,855**	**990,337**

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Եկամուտ շահաբաժիններից	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 5 Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

Շահութ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումներ

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Շահութ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝	-	-
`բաժնետոմսերից	-	-
պարտքային արժեթղթերից	-	-
ածանցյալներից	-	-
Շահութ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(27,937)	6,420
`բաժնետոմսերից	-	-
պարտքային արժեթղթերից	-	-
ածանցյալներից	(27,937)	6,420
Ընդամենը	(27,937)	6,420

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներից զուտ եկամուտ

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝	14,485	29,984
բաժնետոմսերից	-	-
պարտքային արժեթղթերից	14,485	29,984

ածանցյալներից	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	53,832	121,030
բաժնետոմսերից	-	-
պարտքային արժեթղթերից	53,832	121,030
ածանցյալներից	-	-
Ընդամենը	**68,317**	**151,014**

Արտարժութային գործառնություններից

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	1,559,619	1,085,494
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(10,068)	23,612
Ընդամենը	**1,549,551**	**1,109,106**

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներից և հուշադրամներից

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	40,628	10,342
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	5,815	(2,421)
Ընդամենը	**46,443**	**7,921**

Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**1,636,374**	**1,274,461**

Ծանոթագրություն 6 "Այլ գործառնական եկամուտներ"

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	333,394	480,856
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	-	1,151
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	804,772	(718)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից և արժեզրկման հակադարձումից զուտ եկամուտներ	-	-
Այլ եկամուտներ	60,653	183,449
Ընդամենը	**1,198,819**	**664,738**

Ծանոթագրություն 7 "Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ"

Բանկերի նկատմամբ պահանջների գծով	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Սկզբնական մնացորդ	9,416	9,326
Պահուստին կատարված մասնահանումներ	16,203	49,708
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(4,707)	(70,638)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	11,496	(20,930)
Նախկինում հաշվեկշռից դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	2,658	21,020
Վերջնական մնացորդ	**23,570**	**9,416**

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Սկզբնական մնացորդ	112,679	30,429
Պահուստին կատարված մասնահանումներ	49,967	106,085
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(35,349)	(38,772)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	14,618	67,313
Նախկինում հաշվեկշռից դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	(15,263)	14,937
Վերջնական մնացորդ	**112,034**	**112,679**

Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխատվությունների գծով	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Սկզբնական մնացորդ	5,228,822	3,377,433
Պահուստին կատարված մասնահանումներ	9,061,616	5,964,291
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(6,312,566)	(3,984,066)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	2,749,050	1,980,225
Նախկինում հաշվեկշռից դուրս գրված գումարների վերադարձ	(4,514,026)	358,741
Պահուստի օգտագործում	(268,334)	(487,577)
Վերջնական մնացորդ	**3,195,512**	**5,228,822**

Ներդրումների գծով	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Սկզբնական մնացորդ	658,288	204,864
Պահուստին կատարված մասնահանումներ	(6,597)	280,396
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(26,005)	(94,452)
Պահուստին կատարված զուտ	(32,602)	185,944

մասհանումներ		
Նախկինում հաշվեկշռից դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	(579,821)	267,480
Վերջնական մնացորդ	**45,865**	**658,288**

Այլ ակտիվների գծով	**01.01.2021-31.12.2021**	**01.01.2020-31.12.2020**
Սկզբնական մնացորդ	17,077	15,183
Պահուստին կատարված մասնահանումներ	851,685	776,745
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(838,232)	(736,186)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	13,453	40,559
Նախկինում հաշվեկշռից դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	6,354	(38,665)
Վերջնական մնացորդ	**36,884**	**17,077**

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	**01.01.2021-31.12.2021**	**01.01.2020-31.12.2020**
Սկզբնական մնացորդ	27,887	16,661
Պահուստին կատարված մասնահանումներ	489,733	623,756
Պահուստին կատարված մասնահանումների վերադարձ	(513,273)	(612,836)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(23,540)	10,920
Նախկինում հաշվեկշռից դուրս գրված գումարների վերադարձ	-	-
Պահուստի օգտագործում	-	306
Վերջնական մնացորդ	**4,347**	**27,887**

Ընդամենը զուտ մասանումներ պահուստներին	**2,732,475**	**2,264,031**

Ծանոթագրություն 8 Ընդհանուր վարչական ծախսեր

	01.01.2021-31.12.2021	**01.01.2020-31.12.2020**
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	4,152,632	4,055,415
Ծախսեր սոցիալական ապահովության պետական հիմնադրամին հատկացումների գծով	-	-
Վերապատրաստման և ուսուցման գծով ծախսեր	216	305
Գործուղման ծախսեր	11,046	7,293
Ապահովագրության ծախսեր	92,452	24,288
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	264,414	234,849
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և	397,098	402,732

անվտանգության գծով ծախսեր		
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	45,422	27,758
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	116,706	122,302
Տրանսպորտային ծախսեր	26,190	19,556
Ծախսեր հարկերի (բացառությամբ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	226,627	212,759
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	74,758	72,565
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	22,563	3,523
Այլ վարչական ծախսեր	214,888	144,692
Ընդամենը	**5,645,012**	**5,328,037**

* 2021թ. չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1014, և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝334.16 հազ.դրամ:
* 2020թ. չորրորդ եռամսյակում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 1016, և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝332.96 հազ.դրամ:

Ծանոթագրություն 9 Այլ գործառնական ծախսեր

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Վճարված տուգանքներ և տույժեր	48,537	6,625
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	119,997	87,917
Գովազդային և ներկայացուցչական ծախսեր	18,087	42,038
Ֆակտորինգի գծով ծախսեր	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	1,350,219	1,508,840
Կորուստներ նյութական ակտիվների արժեզրկումից	-	-
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	160,012	165,952
Այլ ծախսեր*	275,319	303,285
Ընդամենը	**1,972,171**	**2,114,657**

Ծանոթագրություն 10 Վերահսկվող միավորումներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից	-	-
Համատեղ վերահսկվող միավորներում ներդրումներից	-	-
Դուստր բանկերում ներդրումներից	-	-
Այլ դուստր ընկերություններում ներդրումներից	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 11 Շահութահարկի գծով ծախս

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	418,000	249,324
Տվյալ ժամանակաշրջանում ճանաչված՝ նախորդ ժամանակաշրջանների ընթացիկ հարկի ճշգրտումները	-	-
Հետաձգված հարկի գծով ծախս	(98,697)	26,651
Ընդամենը	**319,303**	**275,975**

	01.01.2021-31.12.2021	Արդյունավետ դրույքաչափ (%)	01.01.2020-31.12.2020	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	2,018,460	-	1,616,669	-
Շահութահարկ՝ դրույքաչափով	363,323	18	291,000	18
Հարկման նպատակով եկամուտների և ծախսերի ճշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով	-	-	-	-
Չհարկվող եկամուտներ	-	-	-	-
Չնվազեցվող ծախսեր	(766)	-	(4,238)	-
Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի ճշտում	-	-	123,070	-
Շահութահարկի գծով ծախս	(43,254)	-	(133,857)	-
Ընդամենը	**319,303**	-	**275,975**	-

	Մնացորդը 31.12.2020թ. դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը 31.12.2021թ. դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	**535,543**	**30,612**	**56,458**	**622,613**
Շահութ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի գծով		-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի գծով	11,299	123,556	56,458	191,313
Ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերի գծով	22,199	(13,944)	-	8,255
Հիմնական միջոցների գծով	131,496	(131,496)	-	-
Այլ ակտիվների գծով	362,719	41,049	-	403,768
Ստեղծված պահուստների գծով	-	-	-	-
Այլ պարտավորությունների գծով	7,830	11,447	-	19,277
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	**309,267**	**(160,394)**	**-**	**148,873**
Շահութ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի գծով	-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի գծով	-	-	-	-
Ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերի գծով	15,671	(3,571)		12,100
Հիմնական միջոցների գծով	102,840	(102,840)	-	-
Այլ ակտիվների գծով	134,224	(29,628)	-	104,596
Այլ պարտավորությունների գծով	56,532	(24,355)	-	32,177
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորոթյուն	**226,276**	**191,006**	**56,458**	**473,740**

Ծանոթագրություն 12 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	1,699,157	1,340,694
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով		
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	1,699,157	1,340,694
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,760,731	1,760,731
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0.97	0.76

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող համապարփակ ֆինանսական արդյունք	01.01.2021-31.12.2021	01.01.2020-31.12.2020
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	1,201,233	822,228
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս)	1,201,233	822,228
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	1,760,731	1,760,731
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող համապարփակ ֆինանսական արդյունք	0.68	0.47

Ծանոթագրություն 13
Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	31.12.2021	31.12.2020
Կանխիկ դրամական միջոցներ	6,853,501	6,004,754
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	4,517,708	3,179,509
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	34,700,392	16,282,018
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	827,000	745,500
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Դրամական միջոցների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ.7)	(16,310)	(9,416)
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	**46,882,291**	**26,202,365**

*31.12.21թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը,որը կազմում է 26 129 626 հազ.ՀՀ դրամ:
*31.12.20թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը ներառում է Բանկի կողմից ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման ենթակա գումարը,որը կազմում է 11 115 234 հազ.ՀՀ դրամ:
**31.12.21թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 827 000 հազ.ՀՀ դրամ:

**31.12.20թ. դրությամբ Բանկի ՀՀ ԿԲ-ում դեպոնացված միջոցները հանդիսանում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ և կազմում են 745 500 հազ.ՀՀ դրամ:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում/վերջում

	01.01.2021	31.12.2021	01.01.2020	31.12.2020
Կանխիկ դրամական միջոցներ	6,004,754	6,853,501	7,934,729	6,004,754
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	3,179,509	4,517,708	1,784,185	3,179,509
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	16,282,018	34,700,392	12,823,585	16,282,018
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	-	-	-	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	745,500	827,000	944,000	745,500
Թղթակցային հաշիվներ ՀՀ բանկերում	50,009	12,000	50,009	50,009
Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում	5,947,440	4,204,885	1,799,086	5,947,440
Դրամական միջոցների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ.7)	(9,416)	(16,909)	(6,555)	(9,416)
Ընդամենը	**32,209,230**	**51,098,577**	**25,335,594**	**32,209,230**

Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ

	31.12.2021	31.12.2020
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	-	-
Հուշադրամներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 14 Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	31.12.2021	31.12.2020
ՀՀ բանկերում	12,000	50,009
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում	3,699,793	4,848,401
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում	505,092	1,099,039
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	**4,216,885**	**5,997,449**
Միջբանկային վարկեր և ավանդներ	-	-
ՀՀ ԿԲ-ում՝	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
-այլ	-	-
ՀՀ բանկերում՝	491,894	3,836,148
- վարկեր և ավանդներ	288,050	313,547
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	3,318,170
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ*	203,844	204,431
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերում՝	277,327	857
- վարկեր և ավանդներ	263,220	-
- ֆակտորինգ	-	-

- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ*	14,107	857
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերում՝	-	-
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	-	-
Հաշվեգրված տոկոսներ	4,804	4,677
Ընդամենը	**774,025**	**3,841,682**
Բանկերի նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	**(7,260)**	**(12,190)**
Զուտ պահանջներ բանկերի նկատմամբ	**4,983,650**	**9,826,941**

Ֆինանսական կազմակերպություններում վարկեր և ավանդներ, այլ պահանջներ		
ՀՀ ֆինանսական կազմակերպություններում՝	**8,911,485**	**9,763,338**
- վարկեր և ավանդներ	2,212,226	1,184,800
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	6,588,250	8,578,051
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	111,009	487
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական կազմակերպություններում՝	282,480	87,876
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
-այլ	282,480	87,876
ԲԲԲ-(Բաա3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող ֆինանսական կազմակերպություններում	535,882	385,256
- վարկեր և ավանդներ	-	-
- ֆակտորինգ	-	-
- ֆինանսական վարձակալություն	-	-
- ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	-
- ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
այլ*	535,882	385,256
Հաշվեգրված տոկոսներ	16,965	12,788
Զուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**9,746,812**	**10,249,258**
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ	(112,034)	(100,489)
Զուտ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**9,634,778**	**10,148,769**
Զուտ պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**14,618,428**	**19,975,710**

*31.12.21թ. դրությամբ այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ տողում արտացոլվել են բանկոմատներով կատարված գործարքների գծով այլ բանկերից ստացվելիք 203 844 հազ.ՀՀ դրամ:
*31.12.20թ. դրությամբ այլ պահանջներ ՀՀ բանկերի նկատմամբ տողում արտացոլվել են բանկոմատներով կատարված գործարքների գծով այլ բանկերից ստացվելիք 199 540 հազ.ՀՀ դրամ:
**31.12.21թ. դրությամբ դեպոնացված է Ֆինանսական կազմակերպությունում 79 637.2 հազ.ՀՀ դրամ (165,8 հազ ԱՄՆ դոլար) գումար Մաստեր քարտ, 201 667,3 հազ.ՀՀ դրամ (420,0 հազ ԱՄՆ դոլար) գումար Վիզա քարտ համակարգով գործարքներ իրականացնելու համար:
**31.12.20թ. դրությամբ դեպոնացված է Ֆինանսական կազմակերպությունում 86 678,1 հազ.ՀՀ դրամ (165,8 հազ ԱՄՆ դոլար) գումար Մաստեր քարտ համակարգով գործարքներ իրականացնելու համար:

Ծանոթագրություն 16
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ	31.12.2021	31.12.2020
Վարկեր,այդ թվում՝	118,877,557	119,777,105
ՀՀ Կառավարությանը	-	1,822,688
տեղական ինքնակառավարման մարմիններին		
հիպոթեքային	22,857,457	21,300,570
Օվերդրաֆտ	3,991,385	6,289,311
Վարկային քարտեր	26,733,722	26,021,690
Ֆակտորինգ	-	-
Ֆինանսական լիզինգ	26,374	102,508
Հետգնման պայմանագրեր	-	-
Ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ	-	-
Այլ	-	-
Նշված հոդվածների գծով հաշվեգրված տոկոսներ և ստացվելիք վճարներ	1,322,558	1,264,572
Ընդամենը վարկեր	**150,951,596**	**153,455,186**
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ.7)	(3,195,512)	(5,233,168)
Ընդամենը զուտ վարկեր	**147,756,084**	**148,222,018**

31.12.21. դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված, ինչպես նաև Բանկի և վերջիններիս հետ համատեղ ծրագրերի միջոցներով տեղաբաշխվել է 39 610 566 հազ. ՀՀ դրամ գումարի 1 560 հատ վարկ:
31.12.20. դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված, ինչպես նաև Բանկի և վերջիններիս հետ համատեղ ծրագրերի միջոցներով տեղաբաշխվել է 56 712 757 հազ. ՀՀ դրամ գումարի 1 808 հատ վարկ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների	31.12.2021		31.12.2020	
	գումար	քանակ	գումար	քանակ
Բանկեր	551,270	2	3,631,717	4
Ֆինանսական կազմակերպություններ	8,800,476	66	9,762,851	68
Պետական ձեռնարկություններ	6,386	2	1,822,688	1
Մասնավոր ձեռնարկություններ, այդ թվում՝	67,622,902	1,326	73,267,896	1,319
խոշոր ձեռնարկություններ	12,346,663	153	10,671,287	121
փոքր և միջին ձեռնարկություններ*	55,276,239	1,173	62,596,609	1,198
Ֆիզիկական անձինք, այդ թվում՝	72,040,661	40,154	68,425,758	40,587
սպառողական վարկեր	17,866,159	25,458	16,407,404	25,407

հիփոթեքային վարկեր	22,857,457	1,586	21,300,570	1,514
վարկային քարտեր	26,636,858	11,025	26,015,000	11,235
այլ վարկեր	4,680,187	2,085	4,702,784	2,431
Անհատ ձեռնարկատերեր	9,959,089	981	8,674,272	943
Հաշվեգրված տոկոսներ	1,344,327	-	1,282,037	-
Ընդամենը	**160,325,111**	**42,531**	**166,867,219**	**42,922**
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ.7)	(3,306,374)	-	(5,128,539)	-
Ընդամենը զուտ վարկեր	**157,018,737**	**42,531**	**161,738,680**	**42,922**

31.12.2021թ. դրությամբ բանկի խոշոր փոխառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 30 817 502 հազ դրամ, որը կազմել է վարկային և պայմանական պարտավորությունների պորտֆելի 20.42%-ը և նորմատիվային կապիտալի 81.79%-ը:

31.12.2020թ. դրությամբ բանկի խոշոր փոխառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի և պայմանական պարտավորությունների ընդհանուր գումարը կազմել է 37 824 587 հազ դրամ, որը կազմել է վարկային և պայմանական պարտավորությունների պորտֆելի 18.8%-ը և նորմատիվային կապիտալի 99.82%-ը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների	**31.12.2021**	**Տոկոսային հարաբերությունը**	**31.12.2020**	**Տոկոսային հարաբերությունը**
Արդյունաբերություն	9,190,906	6.14	10,544,598	6.93
Գյուղատնտեսություն	4,793,619	3.20	4,779,787	3.14
Շինարարություն	13,037,503	8.71	12,481,651	8.20
Տրանսպորտ և կապ	5,922,575	3.96	5,361,296	3.52
Առևտուր	26,315,637	17.59	28,691,768	18.85
Սպառողական	44,503,017	29.74	42,422,385	27.87
Հիփոթեքային վարկեր	22,857,457	15.28	21,300,570	14.00
Սպասարկման ոլորտ	11,284,360	7.54	11,720,816	7.70
Այլ	11,723,964	7.84	14,887,743	9.78
Հաշվեգրված տոկոսներ	1,322,558		1,264,572	
Ընդամենը	**150,951,596**	**100**	**153,455,186**	**100**

Վարկային պորտֆելի վերլուծությունը ըստ հաճախորդների ռեզիդենտության	**31.12.2021**	**Տոկոսային հարաբերությունը**	**31.12.2020**	**Տոկոսային հարաբերությունը**
ՀՀ ռեզիդենտներ	149,141,382	99.67	152,024,508	99.89
Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ*	129,580	0.09	16,997	0.01
ԲԲԲ-/Բաա3/-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող երկրների ռեզիդենտներ*	358,076	0.24	149,109	0.10
Հաշվեգրված տոկոսներ	1,322,558	-	1,264,572	-
Ընդամենը	**150,951,596**	**100.00**	**153,455,186**	**100.00**

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության	31.12.2021	31.12.2020
Անշարժ գույք	121,274,427	115,896,853
Շարժական գույք	447,819	529,007
Շրջանառու միջոցներ	793,336	727,264
Կազմակերպությունների և Ֆիզիկական անձանց երաշխիքներ	4,876,487	7,902,734
Թանկարժեք զարդեր, ոսկու ջարդոն	12,608,223	13,635,161
Դրամական հոսքեր	7,340,281	10,259,114
Դրամական միջոցներ	453,279	273,010
Արժեթղթեր	1,621,298	1,794,720
Այլ	213,888	1,172,751
Ընդամենը վարկեր	**149,629,038**	**152,190,614**

Ծանոթագրություն 17

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	31.12.2021	31.12.2020
ՀՀ Պետական պարտատոմսեր	18,615,002	16,222,578
- գանձապետական պարտատոմսեր	18,615,002	16,222,578
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
ԲԲԲ-(Բաա3) և բարձր վարկանիշ ունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում	-	-
- գանձապետական պարտատոմսեր	-	-
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
ԲԲ+(Բա1) և ցածր վարկանիշ ունեցող,ինչպես նաև վարկանիշ չունեցող երկրների պետական արժեթղթեր, այդ թվում	-	-
- գանձապետական պարտատոմսեր	-	-
- կենտրոնական բանկի պարտատոմսեր	-	-
-այլ	-	-
Պետական արժեթղթերի գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ.7)	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	**18,615,002**	**16,222,578**

ՀՀ ոչ պետական արժեթղթեր	31.12.2021		31.12.2020	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից "Գ -" և բարձր վարկանիշ ստացած թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-

- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	14,244,771	107,565	11,374,362	107,565
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	14,244,771	-	11,374,362	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	107,565	-	107,565
- այլ	-	-	-	-
Պետական արժեթղթերի գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ.7)	-	-	-	-
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	**14,244,771**	**107,565**	**11,374,362**	**107,565**

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	31.12.2021		31.12.2020	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի	-	-	-	-
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	-	-	-
- այլ	-	-	-	-
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	-	3,402	-	1,342
- երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	-	-
- ավանդային հավաստագրեր	-	-	-	-
- կապիտալի գործիքներ	-	3,402	-	1,342
- այլ	-	-	-	-
Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	**-**	-	**-**
Ընդամենը այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	-	**3,402**	-	**1,342**

Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթեր վերագնահատում	-	-
2021թ. չորրորդ եռամսյակում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջին կուտակային ճեղքվածքը բացասական է (6 386 469) հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի (12 985 856) հազ. դրամի դիմաց, այսինքն՝ բանկի զգայունությունը ըստ ակտիվների աճել է: Միջին կուտակային ճեղքվածքը 2021թ-ի չորրորդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ աճել է 6 598 006 հազ. դրամով:

31.12.2021թ-ի դրությամբ տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների հարաբերակցությունը 30.09.21թ.-ի համամատ աճել է 2.87 տոկոսային կետով՝ կազմելով դրական 97.06% նախորդ եռամսյակի 94.19% -ի դիմաց:

Տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքը և դրանց հարաբերակցության դինամիկան 2020թ.-2021թ.

ԱՄՍԱԹԻՎ	Կուտակային ճեղքվածք	Տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների հարաբերակցություն (%)
31.01.20.	14,994,887	108.58
28.02.20.	14,700,807	108.30
31.03.20.	12,243,293	106.86
30.04.20.	11,367,857	106.34
31.05.20.	15,196,276	108.72
30.06.20.	15,391,516	108.72
31.07.20.	17,268,877	109.50
31.08.20.	18,840,987	110.25
30.09.20.	16,386,780	108.58
31.10.20.	16,150,561	108.56
30.11.20	14,951,884	107.89
31.12.20	15,916,374	108.04
31.01.21.	13,551,877	106.63
28.02.21.	11,538,427	105.60
31.03.21.	6,496,810	103.04
30.04.21.	4,032,192	101.87
31.05.21.	(6,586,805)	96.96
30.06.21.	(17,147,446)	92.49
31.07.21	(13,923,657)	93.74
31.08.21	(13,995,225)	93.77
30.09.21	(11,038,687)	95.06
31.10.21	(6,846,469)	96.83
30.11.21	(5,212,831)	97.56
31.12.21	(7,104,249)	96.80

Բանկը յուրաքանչյուր ամսվա (միջին օրական կտրվածքով) հաշվարկում է ներգրավված միջոցների (ռեսուրսների) արժեքը՝ կիրառելով սեփական մեթոդաբանությունը: Հաշվարկը իրականացվում է նաև առանձին՝ ըստ ժամկետային և ցպահանջ ներգրավված միջոցների: Արդյունքները յուրաքանչյուր ամիս քննարկվում են Բանկի ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի կողմից, և կիրառում են տեղաբաշխված միջոցների արժեքի (տոկոսադրույքի) որոշման

31.12.2021

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ.նկ., այդ թվում`	5,209,872	5,314,143	-	84,472	111,560	-	-	-	1,361,380	292,747	-	751,880
-վարկեր	-	263,328		-	111,560	-	-	-	1,361,380	292,747	-	751,880
-ավանդ	-	3,752,539	-	-	-	-	-	-	-	-	-	-
-հետգն.պայման..	5,209,872	1,298,276	-	84,472	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ, այդ թվում`	-	940,026	725,919	93,253	2,227,006	210,072	5,921,272	3,126,924	15,747,550	13,408,589	33,037,685	75,513,300
- վարկեր	-	940,026	725,919	93,253	2,227,006	210,072	5,921,272	3,126,924	15,735,638	13,408,589	33,037,685	75,498,714
- ֆակտորինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- լիզինգ	-	-	-	-	-	-	-	-	11,912	-	-	14,586
- հետգնման պայման.	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ, այդ թվում`	-	49	-	9,854	51,015	547,421	176,414	387,017	16,220,006	6,493,365	8,437,907	536,725
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	-	49	-	9,854	51,015	547,421	176,414	387,017	11,890,749	6,493,365	6,793,036	536,725
-Հետգնման պայմ. գրավադրվ.արժեթղթ.	-	-	-	-	-	-	-	-	4,329,257	-	1,644,871	-
Ամորտիզացված արժեքով հաշվառվող	-	-	-	2,432	7,988	213,872	29,821	274,127	7,206,269	1,322,517	4,940,061	-

այլ ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝												
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	-	-	-	2,432	7,988	213,872	29,821	274,127	2,489,928	1,322,517	2,811,491	-
-հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-	4,716,341	-	2,128,570	-
Տեղաբաշխված այլ միջոցներ	25,304	7,726	-	-	-	-	-	-		-	-	-
Ընդամենը	**5,235,176**	**6,261,944**	**725,919**	**190,011**	**2,397,569**	**971,365**	**6,127,507**	**3,788,068**	**40,535,205**	**21,517,218**	**46,415,653**	**76,801,905**

Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	12,683,417	1,291,193	-	-	-	228,840	-	2,711,754	8,875,784	46,366,663	11,509,401	11,238,708
- վարկեր	-	-	-	-	-	228,840	-	2,711,754	1,348,088	45,352,239	11,509,401	11,238,708
- ավանդներ	675,398	1,291,193	-	-	-	-	-	-	7,527,696	1,014,424	-	-
-հետգնման պայմ.եր	12,008,019	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	29,760,481	20,547,320	6,430	26,102	67,946	27,473	44,820	63,930	22,735,012	41,647,312	105,555	132,681
- վարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
- ավանդներ	29,760,481	20,547,320	6,430	26,102	67,946	27,473	44,820	63,930	22,735,012	39,667,872	105,555	132,681
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	1,979,440	-	
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	12,998,487	-	-
- այլ պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	-	12,998,487	-	-
Ներգրաված այլ միջոցներ	6,763		-	-			-	-	-	-	-	-
Ընդամենը	**42,450,661**	**21,838,513**	**6,430**	**26,102**	**67,946**	**256,313**	**44,820**	**2,775,684**	**31,610,796**	**101,012,462**	**11,614,956**	**11,371,389**
Զուտ դիրք	**(37,215,485)**	**(15,576,569)**	**719,489**	**163,909**	**2,329,623**	**715,052**	**6,082,687**	**1,012,384**	**8,924,409**	**(79,495,244)**	**34,800,697**	**65,430,516**

31.12.2020

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով	դրամով	արտարժ-ույթով
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	8,279,834	5,630,994	-	2,867,209	-	-	214,188	-	490,104	683,887	-	17,567
-վարկեր	-	52,324	-	52,293	-	-	214,188	-	490,104	683,887	-	17,567
-ավանդ	-	4,771,750	-		-	-	-	-	-	-	-	-
- հետգն.պայմանագ.	8,279,834	806,920	-	2,814,916	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հաճախորդներին տրվ. ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ, այդ թվում՝	852,801	3,741	863,143	90,113	2,919,445	596,429	5,016,580	9,167,336	16,125,939	14,899,255	26,097,540	76,822,864
- վարկեր	852,801	3,741	863,143	90,113	2,919,445	596,429	5,016,580	9,167,336	16,120,803	14,899,255	26,079,468	76,742,985
- ֆատկորինգ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
-լիզինգ	-	-	-	-	-	-	-	-	5,136	-	18,072	79,879
- հետգն.պայմանագ.	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
-այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանս. արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝	239,995	250,966	450,020	-	5,037,588	599,862	343,343	1,214,539	11,090,368	3,642,900	4,350,344	-
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	239,995	250,966	450,020	-	2,242,973	599,862	343,343	1,214,539	8,874,952	3,642,900	4,350,344	-
-հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	2,794,615	-	-	-	2,215,416	-	-	-

Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝	-	-	881,457	-	672,444	312,892	334,440	572,953	7,541,990	948,893	2,530,460	-
- երկարաժամկետ պարտք. գործիքներ	-	-	224,989	-	672,444	312,892	334,440	572,953	4,662,996	948,893	923,259	-
-հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	656,468	-	-	-	-	-	2,878,994	-	1,607,201	-
Տեղաբաշխված այլ միջոցներ	19,949	10,130	-	-	-	-	-	-		-	-	-
Ընդամենը	**9,392,579**	**5,895,831**	**2,194,620**	**2,957,322**	**8,629,477**	**1,509,183**	**5,908,551**	**10,954,828**	**35,248,401**	**20,174,935**	**32,978,344**	**76,840,431**

Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	10,531,472	1,688,576	-	-	-	-	30,114	1,217,494	1,956,336	44,333,553	13,475,004	20,992,696
- վարկեր	-	-	-	-	-	-	-	1,217,494	295,111	43,461,008	13,475,004	20,992,696
- ավանդներ	520,832	983,239	-	-	-	-	30,114	-	1,661,225	872,545	-	-
-հետգնման պայամանգրեր	10,010,640	705,337	-	-	-	-	-	-	-	-	-	-
- այլ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	27,239,774	20,055,466	8,934	43,657	35,993	196,137	94,170	90,879	17,602,904	28,097,041	133,216	2,258,203
- վարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	57,292	-
- ավանդներ	27,239,774	20,055,466	8,934	43,657	35,993	196,137	94,170	90,879	17,602,904	28,097,041	75,924	103,760
-այլ	-									-		2,154,443
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	1,018,169	14,147,073	-	-
- այլ պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	1,018,169	14,147,073	-	-
Ներգրաված այլ միջոցներ	6,902		-	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	**37,778,148**	**21,744,042**	**8,934**	**43,657**	**35,993**	**196,137**	**124,284**	**1,308,373**	**20,577,409**	**86,577,667**	**13,608,220**	**23,250,899**
Զուտ դիրք	**(28,385,569)**	**(15,848,211)**	**2,185,686**	**2,913,665**	**8,593,484**	**1,313,046**	**5,784,267**	**9,646,455**	**14,670,992**	**(66,402,732)**	**19,370,124**	**53,589,532**

Տոկոսադրույքի ռիսկն իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով առաջացող ռիսկը:
Տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման համար կիրառվում է "Տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մոդելը" (GAP մոդել), որը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի նկատմաբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տարբերություն: Տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ բանկի զգայունությունը գնահատելու համար հաշվարկվում է "ճեղքվածքի հարաբերակցություն" (GAP/ASSETS) ցուցանիշը, որն իրենից ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների կուտակային ճեղքվածքի հարաբերությունը ակտիվներին:

Տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների միջին տոկոսադրույքներ

Հոդվածի անվանումը	31.12.2021		31.12.2020	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	-	-	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	12.43	7.38	7.12	4.34
- միջբանկային վարկեր	-	7.08	-	7.00
- միջբանկային ռեպո		-	-	2.63
- միջբանկային տոկոսային սվոպ	-	-	-	-
- միջբանկային ավանդ	-	-	-	-
Հաճախորդներին ամորտիզացված արժեքով հաշվառվող տրված վարկեր և փոխատվություններ	11.94	9.01	11.80	8.81
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող այլ ֆինանսական ակտիվներ	9.59	5.38	9.90	5.58
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	8.56	5.06	8.38	4.98
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	8.29	5.01	7.91	5.02
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9.06	4.27	9.01	4.58
Պարտավորություններ բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով	0.00	5.47	9.50	5.47

Գնային ռիսկ

Գնային ռիսկը շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների պատճառով Բանկի ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության և դրա հետևանքով ֆինանսական կորուստներ կրելու հավանականությունն է:

Ծանոթագրություն 32.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկի բանկի սեփական սահմանումը

Իրացվելիության ռիսկը Բանկի կորուստներ կրելու և/կամ ստանձնած պարտավորությունների չկատարելու հավանականությունն է, որն առաջանում է ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքի ճեղքվածքի կամ ակտիվների վաճառքի սահմանափակ կամ ոչ շահավետ հնարավորությունների արդյունքում:
Իրացվելիության ռիսկը պարունակում է ռիսկերի հետևյալ երկու տեսակները՝
1.Արժութային ռիսկ, որն առաջանում է արժույթի շուկայական փոխարժեքի տատանման հետևանքով և իրենից ներկայացնում է արժութային փոխարժեքների տատանումներից առաջացող դրամական կորուստների հավանականությունը:
2. Տոկոսադրույքի ռիսկ, որն իրենից ներկայացնում է տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով առաջացող ռիսկը:

Իրացվելիության ռիսկի չափման և գնահատման մոդելների նկարագրությունը

Իրացվելիության ռիսկի գնահատումն իրականացնում են Բանկի Վարչությունը, Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը և Գանձապետը՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված իրավասությունների շրջանակներում և կարգով:

Իրացվելիության ռիսկի գնահատման համար Բանկը կիրառում է հետևյալ մեթոդները՝
1. Վերլուծվում են իրացվելիության ռիսկի սահմանափակման նպատակով Բանկում սահմանված ցուցանիշները և գնահատվում են դրանց մակարդակները.
2. Պարբերաբար դիտարկվում են Բանկի հաշվեկշռի կառուցվածքի փոփոխման միտումները, դրամական հոսքերի փաստացի և կանխատեսվող ծավալները, որի հիման վրա գնահատվում է իրացվելության ռիսկը.
3. Իրացվելի միջոցների ավելցուկի տեղաբաշխման և պակասորդի ներգրավման գործընթացի արդյունավետության վերլուծություն և գնահատում.
4. Բանկի պարտավորությունների (այդ թվում՝ ավանդային բազայի) բազմազանեցման (դիֆերսիֆիկացիայի) մակարդակի վերլուծություն և գնահատում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը սահմանում է հետևյալ նորմատիվները՝
1.Բանկում կանխիկ դրամական միջոցների և ակտիվների նվազագույն հարաբերակցությունը (3%)
2. Բանկի արտարժութային բաց դիրքի առավելագույն սահմանաչափը.
3. Բանկի ընդհանուր իրացվելիության նվազագույն սահմանաչափը (25%)
4. Բանկի ընթացիկ իրացվելիության նվազագույն սահմանաչափը (65%)
5. Ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանափակումները.
6. Բանկի կողմից տրամադրվող վարկային գծերի ընդհանուր ծավալ և Բանկի ընդհանուր կապիտալ առավելագույն հարաբերակցությունը (60%):

Իրացվելիության ռիսկի թույլատրելի մակարդակի որոշումը՝ ռիսկի քանակական վերլուծություն և ռիսկի քանակական գնահատական

Իրացվելիության ռիսկի ընդհանուր կառավարումն իրականացվում է Վարչության կողմից, որը՝
1. Բանկի Խորհրդի կողմից հաստատված քաղաքականություններով և կանոնակարգերով տրված իրավասությունների սահմաններում ապահովում է իրացվելիության կառավարմանն առնչվող սահմանաչափերի պահպանումը.
2. Հսկողություն է սահմանում և միջոցներ ձեռնարկում Բանկի ռազմավարական զարգացման ծրագրերով և ամենամյա բյուջեներով պլանավորված ակտիվապասիվային համամասնությունների, նպատակային ցուցանիշների պահպանման նկատմամբ.
3. Քննարկում և Խորհրդի հաստատմանն է ներկայացնում իրացվելիության կառավարման վերաբերյալ ներքին իրավական ակտերը:
Բանկի իրացվելության ընթացիկ կառավարումն իրականացնում է Բանկի Վարչության կողմից ձևավորվող և վերջինիս հաշվետու Բանկի կոլեգիալ, մշտապես գործող մարմինը՝ Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը, որը՝
1 Ամսական կտրվածքով քննարկում է Բանկի իրացվելիության կառավարման խնդիրները, իրացվելի միջոցների ավելցուկի տեղաբաշխման, պակասորդի ներգրավման գործընթացը և ընդունում համապատասխան որոշումներ.
2. Կարճաժամկետ (մինչև 3 ամսվա կտրվածքով) ռեսուրսների ներգրավման և տեղաբաշխման փաթեթի կառուցվածքի փոփոխության հետ կապված ընդունում է որոշումներ՝ հիմնվելով Բանկի անցած ժամանակաշրջանի գործունեության վերլուծության, կարճաժամկետ և միջին ժամկետի կանխատեսումների արդյունքների վրա.
3. Ընդունում է որոշումներ Բանկի ընդհանուր դրամային և արտարժութային իրացվելիության ապահովման վերաբերյալ
4. Ապահովում է իրացվելիության ռիսկի կառավարման ոլորտում Բանկի քաղաքականության իրագործումը:
Բանկի իրացվելիության ռիսկի կառավարմանն առնչվող օպերատիվ, ամենօրյա խնդիրները յուրաքանչյուր օր Գանձապետի ներկայացմամբ քննարկվում են Բանկի Գործադիր տնօրենի մոտ՝պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների (Գլխավոր հաշվապահի, Դիլինգ կենտրոնի տնօրենի, Վարկավորման և միջոցների ներգրավման, Ռազմավարության, մեթոդոլոգիայի և ռիսկերի գնահատման վարչությունների պետերի) մասնակցությամբ խորհրդակցական ժողովի ժամանակ:
Բանկի իրացվելության ռիսկի ամենօրյա կառավարումն իրականացնում է Գանձապետը, որը
- համակարգում է Բանկի այն ստորաբաժանումների աշխատանքը, որոնց գործառնություններն ազդում են իրացվելիության մակարդակի վրա, հսկում է ներբանկային դրամաշրջանառությունը

- ամփոփում և վերլուծում է իրացվելիության մակարդակի, դրամարկղային գործառնությունների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանումների ամենօրյա տեղեկատվությունը և նախապատրաստում է միջոցների կառավերման վերաբերյան առաջարկություններ
- ապահովում է իրացվելիության ռիսկի կառավարման վերաբերյալ Բանկի Վարչության, Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի որոշումերի, Գործադիր տնօրենի հանձնարարականների կատարումը:
Իրացվելիության ռիսկի կառավարման համար վերահսկվում են հետևյալ ցուցանիշները՝
-ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների և պարտադիր պահուստների միջոցները և ներդրված ավանդները
-Թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորները
-ՀՀ պետական պարտատոմսերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով՝ բացառությամբ գրավադրված, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի
-ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվների մնացորդները
-միջոցների ներգրավումը
-տրամադրված վարկերի մարումը
- ակտիվների վաճառքը
-տոկոսային և ոչ տոկոսային եկամուտները
-նախկինում անհուսալի ճանաչված և Բանկի հաշվեկշռից դուրս գրված ակտիվների վերադարձը:
Բանկի իրացվելիության ընդհանուր կառավարումն իրականացվում է Բանկի Վարչության կողմից, որը վերահսկողություն է սահմանում և անհրաժեշտության դեպքում միջոցներ է ձեռնարկում Բանկի ռազմավարական զարգացման ծրագրերով և ամենամյա բյուջեներով պլանավորված ակտիվապասիվային համամասնությունների, նպատակային ցուցանիշների պահպանման նկատմամբ:
Բանկի իրացվելության ընթացիկ կառավարումն իրականացնում է Բանկի Վարչության կողմից ձևավորվող և վերջինիս հաշվետու Բանկի կոլեգիալ, մշտապես գործող մարմինը՝ Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը (այսուհետ՝ ԱՊԿՀ), որն ամսական կտրվածքով քննարկում է Բանկի իրացվելիության կառավարման խնդիրները, իրացվելի միջոցների ավելցուկի/պակասորդի, ներգրավման/տեղաբաշխման գործընթացը և ընդունում համապատասխան որոշումներ:
Բանկի իրացվելիության կառավարման ամենօրյա, ընթացիկ խնդիրները քննարկվում են Բանկի գործադիր տնօրենի մոտ՝ պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ խորհրդակցական ժողովի ժամանակ:
Բանկի իրացվելիության օպերատիվ, ամենօրյա կառավարումն իրականացնում է Գանձապետը՝ ղեկավարվելով սույն Կարգով, Բանկի Վարչության, ԱՊԿՀ-ի որոշումներով և հանձնարարականներով:
Ներգրավման գործառնություններ իրականացնելիս հաշվի են առնվում ամենամյա բյուջեով սահմանված ռեսուրսների ծավալային համամասնությունները, կանխատեսվում են ներգրավվող և տեղաբաշխվող միջոցներն ըստ ժամկետայնության, ըստ տեսակների՝ ձգտելով հնարավորինս տարբերակել և նվազեցնել ռիսկը:
Ակնթարթային իրացվելիությունը կառավարելիս նորմավորվում է նոստրո թղթակցային հաշիվների և դրամարկղի ռեսուրսների հարաբերակցությունը հաճախորդների ցպահանջ հաշիվների մնացորդների նկատմամբ /20%-ից ոչ պակաս/, որը գնահատվում է փաստացի և վիճակագրական տվյալների կանխատեսման հիման վրա , կարգավորվում է միջբանկային գործառնությունների միջոցով և հաշվարկվում է ամսվա կտրվածքով միջին օրեկան ցուցանիշի միջոցով: Ընթացիկ իրացվելիության ռիսկը կառավարելիս օգտվելով փաստացի և կանխատեսվող ցուցանիշների օրական շարժից՝ կիրառվում են համապատասխան վճարային օրացույցներ՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները.
-բանկի վճարահաշվարկային օրական պարտավորությունները,
- դրամական հոսքերի օրական շարժը,
- վարկերի, ավանդների, արժեթղթերի հետ կապված գործառնությունների օրական շարժը:
Ապահովվում է Բանկի ազատ ռեսուրսների վերաբաշխումը եկամուտ ձևավորող կենտրոնների միջև՝ հսկողություն սահմանելով և կառավարելով ներբանկային դրամաշրջանառությունը:
Բանկի վճարային դիրքի հսկումը՝ իրացվելի ակտիվների գումարի համապատասխանությունը վճարահաշվարկային պահանջարկին օրական և առաջիկա շաբաթվա կտրվածքով, իրականացնում է Գանձապետը:
Բանկի ընդհանուր իրացվելիության և ամենամյա բյուջեով հաստատված ակտիվապասիվային համամասնությունների պահպանման հսկողությունն իրականացվում է Բանկի Ռազմավարության, մեթոդոլոգիայի և ռիսկերի կառավարման վարչության կողմից, որը ամսական կտրվածքով վերլուծում է շեղումները և ներկայացնում Վարչության քննարկմանը:
Բանկի արտարժույթային դիրքի՝ գործող նորմատիվային դաշտին համապատասխանության հսկողությունն իրականացնում է Բանկի Դիլինգային կենտրոնը:
Բանկի իրացվելիության կառավարման նպատակով նոր գործիք կիրառելիս պատասխանատու ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով հաստատման են ներկայացվում անհրաժեշտ ընթացակարգերը և ներքին հսկողությունը, որով պետք է սահմանվեն գործիքի նկարագրությունը, նոր գործիքից հնարավոր կորուստների վերլուծությունը՝ հաշվի առնելով Բանկի իրացվելիության և ընդհանուր կապիտալի մակարդակները, ինչպես նաև այդ գործիքի գծով ռիսկերի գնահատման, հսկման և մոնիտորինգի գործընթացը:

31.12.2021թ.

Հոդվածի անվանումը	Մարմանը մնացել է							Անժամկետ	
Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ	պահանջվող	մինչև 1 ամիս	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6-ից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		Ընդամենը
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	46,059,680	-	-	-	-	-	-	822,611	**46,882,291**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,216,286	7,415,395	484,672	501,598	473,371	808,311	438,315	280,480	**14,618,428**
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ	-	9,194,351	10,827,320	12,304,249	15,128,241	67,639,591	32,662,332	-	**147,756,084**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	312,665	1,733,847	4,857,046	1,925,463	15,957,051	8,073,701	110,967	**32,970,740**
- Պետական արժեթղթեր	-	-	19,615	3,098,626	-	7,423,060	8,073,701	-	**18,615,002**
-Ոչ պետական արժեթուղթ	-	312,665	1,714,232	1,758,420	1,925,463	8,533,991	-	-	**14,244,771**
-Բաժնային ներդրումներ	-	-	-	-	-	-	-	110,967	**110,967**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	-	2,517	143,348	3,010,427	1,492,058	6,786,960	2,515,912	-	**13,951,222**
- Պետական արժեթղթեր	-	-	29,558	2,560,717	299,890	5,160,527	2,515,912	-	**10,566,604**
-Ոչ պետական արժեթուղթ	-	2,517	113,790	449,710	1,192,168	1,626,433	-	-	**3,384,618**
Այլ պահանջներ	668,693	2,310,796				362,602	10,605,605	500	**13,948,196**
ԸՆԴԱՄԵՆԸ	**50,944,659**	**19,235,724**	**13,189,187**	**20,673,320**	**19,019,133**	**91,554,515**	**54,295,865**	**1,214,558**	**270,126,961**
Այդ թվում՝		-	-	-	-	-	-	-	**-**
I խմբի արտարժույթով	31,429,258	7,456,627	7,429,384	7,929,017	8,561,171	52,626,149	19,689,714	280,480	**135,401,800**
II խմբի արտարժույթով	503,387	431,617	52	-	-	-	14,521.00	-	**949,577**

Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ								-	
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	2,383,622	13,319,488	3,029,926	4,340,449	13,140,011	53,235,324	5,874,876	-	**95,323,696**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	51,795,851	1,233,679	601,329	490,961	2,857,520	59,597,874	75,899	-	**116,653,113**
- ցպահանջ ավանդներ	50,307,800	-	-	-	-	-	-	-	**50,307,800**
- ժամկետային ավանդներ		1,222,811	601,329	490,961	2,857,520	57,629,302	75,899	-	**62,877,822**
- այլ	1,488,051	10,868	-	-	-	1,968,572	-	-	**3,467,491**
Պարտավորություններ բանկերի կողմից թողարկված արժեթղթերի գծով	-	2,487,260	2,418,600	3,841,120	1,440,420	2,811,087	-	-	**12,998,487**
Այլ պարտավորություններ	91,763	1,732,405	-	234,752	-	3,531,085	-	-	**5,590,005**
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	15,171,526	653,878	250,634	420,379	232,712	764,153	-	-	**17,493,283**
ԸՆԴԱՄԵՆԸ	**54,271,236**	**18,772,832**	**6,049,855**	**8,907,282**	**17,437,951**	**119,175,370**	**5,950,775**	**-**	**230,565,301**
Այդ թվում՝								-	
I խմբի արտարժույթով	21,363,072	5,210,673	4,784,512	8,278,683	14,874,671	82,690,238	48,507.00	-	**137,250,356**
II խմբի արտարժույթով	646,515	20,780	-	-	-	-	-	-	**667,295**
Զուտ իրացվելիության ճեղքվածք	(3,326,577)	462,892	7,139,332	11,766,038	1,581,182	(27,620,855)	48,345,090	1,214,558	**39,561,660**
Այդ թվում՝									
I խմբի արտարժույթով	10,066,186	2,245,954	2,644,872	(349,666)	(6,313,500)	(30,064,089)	19,641,207	280,480	**(1,848,556)**
II խմբի արտարժույթով	(143,128)	410,837	52	-	-	-	14,521	-	**282,282**

31.12.2020թ.

Հոդվածի անվանումը	Մարմանը մնացել է							Անժամկետ	Ընդամենը
	ցպահանջ	մինչև 1 ամիս	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6-ից մինչև 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ									
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	25,464,716	-	-	-	-	-	-	737,649	**26,202,365**
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,722,064	11,773,014	1,181,294	139,938	164,161	909,474	-	85,765	**19,975,710**
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և այլ փոխատվություններ	-	11,354,438	9,684,463	13,253,507	21,235,311	66,041,764	26,652,535	-	**148,222,018**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	319,150	378,583	5,673,969	2,141,626	14,733,269	4,350,343	108,907	**27,705,847**
- Պետական արժեթղթեր	-	-	69,124	4,624,104	343,244	6,835,763	4,350,343	-	**16,222,578**
-Ոչ պետական արժեթուղթ	-	319,150	309,459	1,049,865	1,798,382	7,897,506	-	-	**11,374,362**
-Բաժնային ներդրումներ	-	-	-	-	-	-	-	108,907	**108,907**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	-	1,043	18,425	2,036,158	907,393	8,367,554	2,530,460	-	**13,861,033**
- Պետական արժեթղթեր	-	-	9,763	1,015,524	-	6,019,376	2,530,460	-	**9,575,123**
-Ոչ պետական արժեթուղթ	-	1,043	8,662	1,020,634	907,393	2,348,178	-	-	**4,285,910**
Այլ պահանջներ	15,828	1,166,033	-	226,276	-	362,602	11,143,225	500	**12,914,464**
ԸՆԴԱՄԵՆԸ	**31,202,608**	**24,613,678**	**11,262,765**	**21,329,848**	**24,448,491**	**90,414,663**	**44,676,563**	**932,821**	**248,881,437**

Այդ թվում՝									
I խմբի արտարժույթով	17,980,388	7,666,108	4,880,454	9,914,075	14,968,386	51,629,662	20,698,743	85,765.00	**127,823,581**
II խմբի արտարժույթով	741,556	100,357	-	-	33	-	-	-	**841,946**

Պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ									
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	1,640,128	13,990,768	2,282,016	5,336,277	19,743,278	45,379,155	5,992,459	-	**94,364,081**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	47,609,472	1,952,930	1,822,248	1,907,199	4,648,418	38,158,324	72,015	-	**96,170,606**
- ցպահանջ ավանդներ	46,911,973	-	-	-	-	-	-	-	**46,911,973**
- ժամկետային ավանդներ	-	1,941,102	1,822,248	1,888,302	4,610,019	36,015,713	72,015	-	**46,349,399**
- այլ	697,499	11,828	-	18,897	38,399	2,142,611	-	-	**2,909,234**
Պարտավորություններ բանկերի կողմից թողարկված արժեթղթերի գծով	-	112,451	18,780	-	1,000,000	14,034,011	-	-	**15,165,242**
Այլ պարտավորություններ	78,651	1,614,956	-	-	-	3,261,337	-	-	**4,954,944**
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	14,810,778	1,559,503	1,643,578	73,355	97,255	80,897	44,646	-	**18,310,012**
ԸՆԴԱՄԵՆԸ	**49,328,251**	**17,671,105**	**4,123,044**	**7,243,476**	**25,391,696**	**100,832,827**	**6,064,474**	**-**	**210,654,873**
Այդ թվում՝									
I խմբի արտարժույթով	20,070,831	4,911,451	2,810,053	5,637,320	20,982,283	77,712,247	36,289	-	**132,160,474**
II խմբի արտարժույթով	624,352	48	-	-	-	-	-	-	**624,400**
Զուտ իրացվելիության ճեղքվածք	(18,125,643)	6,942,573	7,139,721	14,086,372	(943,205)	(10,418,164)	38,612,089	932,821	**38,226,564**
Այդ թվում՝									
I խմբի արտարժույթով	436,413	3,577,778	94,900	(3,934,286)	(3,152,822)	(18,006,140)	18,207,522	409,091	**(4,336,893)**
II խմբի արտարժույթով	(23,474)	18,846	-	-	-	-	-	-	**217,546**

Ծանոթագրություն 33 Կապիտալ և կապիտալի համարժեքություն

2021թ. չորրորդ եռամսյակում Բանկի բաժնետիրական կապիտալը չի ավելացել:
31.12.2021թ.դրությամբ Բանկի բաժնետիրական կապիտալը կազմված է 5 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, թվով 1 760 731 հատ սովորական բաժնետոմսերից, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 8 803 655 հազ. ՀՀ դրամ:

Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշներ

2021թ.	Ընդհանուր կապիտալ	Ռիսկով կշռված ակտիվներ	Ընդհ. կապ. համարժեք. փաստացի (%)	ՀՀ ԿԲ-ի սահմանաչափ (%)
1	2	3	4 (2/3)	5
Հունվար	36,345,581	251,816,816	14.43	12.0
Փետրվար	36,637,805	252,376,108	14.52	12.0
Մարտ	37,741,037	256,153,337	14.73	12.0
Ապրիլ	37,870,374	256,200,735	14.78	12.0
Մայիս	36,643,427	247,858,798	14.78	12.0
Հունիս	37,461,144	247,102,074	15.16	12.0
Հուլիս	37,483,424	239,518,676	15.65	12.0
Օգոստոս	37,471,616	240,147,876	15.60	12.0
Սեպտեմբեր	38,109,382	246,900,391	15.44	12.0
Հոկտեմբեր	38,337,094	249,683,986	15.35	16.0
Նոյեմբեր	38,036,891	247,587,002	15.36	17.0
Դեկտեմբեր	37,679,476	254,638,774	14.80	18.0

2020թ.	Ընդհանուր կապիտալ	Ռիսկով կշռված ակտիվներ	Ընդհ. կապ. համարժեք. փաստացի (%)	ՀՀ ԿԲ-ի սահմանաչափ (%)
1	2	3	4 (2/3)	5
Հունվար	36,027,362	234,894,733	15.34	12.0
Փետրվար	36,067,803	232,479,832	15.51	12.0
Մարտ	36,083,689	236,717,429	15.24	12.0
Ապրիլ	36,320,753	235,385,952	15.43	12.0
Մայիս	36,591,065	231,444,528	15.81	12.0
Հունիս	36,723,307	231,557,971	15.86	12.0
Հուլիս	37,189,665	242,208,412	15.35	12.0
Օգոստոս	37,497,262	246,432,648	15.22	12.0
Սեպտեմբեր	37,527,850	245,627,114	15.28	12.0
Հոկտեմբեր	37,774,165	247,562,441	15.26	12.0
Նոյեմբեր	37,636,058	243,763,510	15.44	12.0
Դեկտեմբեր	37,892,329	251,176,859	15.09	12.0

Ստորև ներկայացվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների վերջի դրությամբ ակտիվների և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների, անավարտ ժամկետային գործառնությունների ռիսկերի կշիռները՝ ըստ Բազելի ռիսկի կշիռների դասերի:

31.12.2021թ.

Ռիսկի կշիռը	Ակտիվներ	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	Անավարտ ժամկետային գործառնություններ	Ընդամենը վարկային ռիսկ
0%	77,347,409	545,755	-	-
10%	4,122,308	-	-	412,231
20%	2,759,633	-	-	551,927
30%	880,560	-	-	264,168
35%	9,913,990	-	-	3,469,897

50%	10,569,645	5,866	-	5,287,755
75%	15,699,730	-	-	11,774,797
100%	58,009,439	4,075,956	-	62,085,395
110%	-	-	-	-
150%	86,523,236	4,929,704	-	137,179,409
200%	2,024,560	-	-	4,049,121
225%	-	-	-	-
Ընդամենը	**267,850,511**	**9,557,280**	**-**	**225,074,700**

31.12.2020թ.

Ռիսկի կշիռը	Ակտիվներ	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ	Անավարտ ժամկետային գործառնություններ	Ընդամենը վարկային ռիսկ
0%	55,466,328	1,055,182	-	-
10%	5,858,536	764	-	585,930
20%	474,181	-	-	94,836
30%	112,223	-	-	33,667
35%	9,414,243	-	-	3,294,985
50%	11,637,241	4,347	-	5,820,794
75%	12,453,130	-	-	9,339,847
100%	56,239,910	4,953,059	-	61,192,969
110%	-	-	-	-
150%	89,421,079	4,927,345	-	141,522,635
200%	2,803,423	-	-	5,606,846
225%	-	-	-	-
Ընդամենը	**243,880,293**	**10,940,696**	**-**	**227,492,509**

Ծանոթագրություն 34 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ստորև ներկայացվում են ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքի վերաբերյալ բացահայտումներ՝ կատարված ՀՀՀՀՍ 32 "Ֆինանսական գործիքներ, բացահայտումը և ներկայացումը" պահանջների համաձայն:

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝
- հիմնականում ձեռք են բերվել ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար վկայություն կա կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ
- սկզբնական ճանաչման պահին կազմակերպության կողմից նախատեսվում են որպես իրավական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում՝ բացառությամբ անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ տրամադրվածներից:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

2020թ. և 2021թ. չորրորդ եռամսյակի դրությամբ բանկը չունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք հաշվառվում են իրական արժեքը գերազանցող գումարով:

Ծանոթագրություն 35 Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

2020թ. և 2021թ. չորրորդ եռամսյակի այս ծանոթագրության համար ներկայացվելիք տվյալները բացակայում են:

Ծանոթագրություն 36. Ապաճանաչում

2020թ. և 2021թ. չորրորդ եռամսյակում Բանկը չի ունեցել փոխանցված ակտիվներ, որոնք ամբողջությամբ կամ որոնց մի մասը չի բավարարում ապաճանաչման չափանիշներին, կամ երբ առկա է "շարունակվող մասնակցություն":

Ծանոթագրություն 37 Գրավադրված ակտիվներ

2020թ. և 2021թ. չորրորդ եռամսյակի դրությամբ Բանկը գրավադրված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 38. Ընդունված գրավ

2020թ. և 2021թ. չորրորդ եռամսյակի դրությամբ Բանկն ունի գրավ ընդունված ակտիվներ, որոնք Բանկն իրավունք ունի վաճառել կամ նորից գրավադրել հաճախորդի կողմից պարտավորությունների չկատարման, խախտման բացակայության դեպքում:

	31.12.2021	31.12.2020
Արժեթղթեր	402,233	533,421
Թանկարժեք մետաղներ, ոսկու ջարդոններ և թանկարժեք քարեր	14,718,757	16,112,905
Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ	294,755,359	275,518,142
Պատրաստի արտադրանք և ապրանքներ	5,078,109	4,766,702
Դրամական միջոցներ	1,833,918	1,728,215
Այլ գրավ	43,002,680	41,876,166
Երաշխավորություններ	2,224,352	3,499,234
Ընդամենը	**362,015,408**	**344,034,785**

Ծանոթագրություն 39 Պարտավորությունների չկատարում / խախտում

Բանկը 2020թ. և 2021թ. չորրորդ եռամսյակի ընթացքում չի ունեցել խախտումներ կամ պարտավորությունների չկատարման դեպքեր:



(եռամսյակային)

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

ԱրարատԲանկ ԲԲԸ

01/10/21 թ-ից 31/12/21 թ.

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Փաստացի մեծություն	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	8,803,655	50,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	37,679,476	30,000,000	Խախտում առկա չէ
Ն11 Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	14.56%	min9%	Խախտում առկա չէ
Ն12 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	14.80%	min12%	Խախտում առկա չէ
Ն21 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	27.28%	min15%	Խախտում առկա չէ
Ն211 Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	19.09%	min4%	Խախտում առկա չէ
Ն22 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	125.42%	min60%	Խախտում առկա չէ
Ն221 Բանկի առաջին խմբի արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	117.54%	min10%	Խախտում առկա չէ
Ն23 Բանկի բոլոր արժույթներով բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը	196.23%	min 100%	Խախտում առկա չէ
Ն23(FX) Բանկի առաջին խմբի նշանակալի արտարժույթներով բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը	205.70%	min 60%	Խախտում առկա չէ
Ն24 Բանկին բոլոր արժույթներով հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը	150.72%	min 100%	Խախտում առկա չէ
Ն24(FX) Բանկին առաջին խմբի նշանակալի արտարժույթներով հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը	129.22%	min 60%	Խախտում առկա չէ
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	10.65%	max20%	Խախտում առկա չէ
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	105.42%	max500%	Խախտում առկա չէ
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.51%	max5%	Խախտում առկա չէ
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	5.35%	max20%	Խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը`			
ՀՀ դրամով,	X	min4%	Խախտում առկա չէ
ԱՄՆ դոլարով,		min 10% ՀՀ դրամով,	Խախտում առկա չէ
	X	min 8% ԱՄՆ դոլարով,	Խախտում առկա չէ
Եվրոյով,		min 10% ՀՀ դրամով,	Խախտում առկա չէ
	X	min 8% Եվրոյով,	Խախտում առկա չէ
Այլ արժույթով		min 10% ՀՀ դրամով,	Խախտում առկա չէ
	X	min 8% ԱՄՆ դոլարով,	Խախտում առկա չէ
Արտաժութային դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	0.59%	max10%	Խախտում առկա չէ
Ըստ առանձին արտաժույթների յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը`			
ԱՄՆ դոլարով,	1.94%	max7%	Խախտում առկա չէ
Եվրոյով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով,	0.00%	max7%	Խախտում առկա չէ
Այլ արտարժույթ	0.38%	max7%	Խախտում առկա չէ

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2020թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	13
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	15
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	17

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9

Հ. + 374 10 500 964
Ֆ.+ 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia

T + 374 10 500 964
F + 374 10 500 961

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.5-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 38.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային

ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

- *Գուդվիլի արժեզրկման գնահատում*

2017թ.-ից ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձևավորվել է գուդվիլ: Ղեկավարությունը պետք է գնահատի գուդվիլի արժեզրկումը տարեկան կտրվածքով՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մոդելը՝ գուդվիլի օգտագործված մասի արժեքը որոշելու համար: Սա պահանջում է մի շարք առանցքային ենթադրությունների և դատողությունների կիրառում՝ ներառյալ կանխատեսվող ապագա դրամական հոսքերը, աճի երկարաժամկետ գործակիցները, շահութաբերության մակարդակը և կիրառվող զեղչման դրույքները: Ավելին, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ղեկավարությունը կիրառում է գուդվիլը համապատասխան դրամաստեղծ միավորների (CGUs) տեղաբաշխելու դատողություն:

Ղեկավարության արժեզրկման գնահատման հետ կապված մեր ընթացակարգերը ներառել են.

- մեթոդաբանության գնահատում,
- ձեռնարկատիրական գործունեության և ճյուղի վերաբերյալ մեր գիտելիքների հիման վրա առանցքային ենթադրությունների հիմնավորվածությունը,
- մուտքային տվյալների համադրում աջակցող հաշվետվությունների հետ, ինչպիսիք են հաստատված բյուջեները և այս բյուջեների հիմնավորվածության դիտարկումը:

Մեր կարծիքով օգտագործված մասի արժեքի հաշվարկների վերաբերյալ ղեկավարության հավաստումները՝ առկա վկայության հիման վրա, ողջամիտ են:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականնության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Բանկը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Բանկը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության

պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.6 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.7 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով ավանդները, վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են

շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.9 Վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.10 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ

ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.11 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.12 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.13 Վարձակալություն

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը

կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.14 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.15 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20-30	5-3.33
Համակարգիչներ և կապի միջոցներ	3-8	33.33-12.5
Տրանսպորտային միջոցներ	5-8	20-12.5
Այլ հիմնական միջոցներ	5-8	20-12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կիոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.16 Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է որպես փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերություն:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություն կամ հանգամանքի փոփոխություն վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով, ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Բանկի դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև, որոնք, ակնկալվում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ՝ անկախ այն բանից, թե ձեռքբերված կազմակերպության այլ ակտիվներն ու պարտականությունները վերագրվում են այդ դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերին, թե ոչ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը, պետք է.

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Բանկի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր,
- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտի սահմանումը համաձայն ՖՀՄՍ 8-ի (*«Գործառնական սեգմենտներ»*):

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

4.17 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 3-10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.18 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.19 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.20 Ֆինանսական երաշխավորություններ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխավորություն տրամադրողը փոխհատուցի երաշխավորությունը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.21 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.20 ծանոթագրությունում:

4.22 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են

կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.23 Հավատարմագրային գործառնություններ

Բանկն իրականացնում է հավատարմագրային գործառնություններ իր հաճախորդների համար: Բանկը նաև մատուցում է դեպոզիտարիոն ծառայություններ, ինչը ներառում է հաճախորդներին պատկանող արժեթղթերի դեպո հաշիվներով գործառնությունները: Բանկի կողմից կառավարվող ակտիվները, ինչպես նաև դրանցից ծագող պարտավորությունները չեն ներառվում Բանկի ֆինանսական հաշվետվություններում: Բանկը կրում է հավատարմագրային գործառնությունների գծով գործառնական ռիսկը, իսկ նշված գործառնությունների վարկային և շուկայական ռիսկը կրում են հաճախորդները:

Հավատարմագրային գործառնություններից ստացված վարձավճարները արտացոլվում են կոմիսիոն և այլ տեսքով եկամուտներում:

4.24 Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՍ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտներից և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում: Բանկի եկամուտը բխում է հայկական աղբյուրներից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ,

դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.5.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 35):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը:

Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես 34 ծանոթագրությունը):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տես՝ ծանոթագրություն 38), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես՝ ծանոթագրություն 4.5.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 33 ծանոթագրությունը:

Գուդվիլի արժեզրկում

Բանկը գնահատում է գուդվիլը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների փոխհատուցվող արժեքի հիման վրա:

6 Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Գուդվիլ ձեռք բերումից

Միացման պայմանագրի համաձայն Բանկը 2017թ. ձեռք է բերել «Հայկական զարգացման Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերը և վերահսկողություն, որի լիցենզիան ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հետ է կանչվել: Ձեռքբերման արդյուքնում ճանաչվել է գուդվիլ.

Հազար ՀՀ դրամ

Փոխանցված հատուցում	15,129,999
Որոշելի զուտ ակտիվների իրական արժեք	10,725,662
Գուդվիլ	4,404,337
Գուդվիլի արժեզրկում	(880,871)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2017թ. դրությամբ	3,523,466
Գուդվիլի արժեզրկում	(2,510,864)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2018թ. դրությամբ	1,012,602
Գուդվիլի արժեզրկում	(350,000)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ	662,602
Գուդվիլի արժեզրկում	(300,000)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2020թ. դրությամբ	362,602

7 Անցման բացահայտում

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Բանկն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Բանկը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ելնելով վերը նշվածից՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 1,214,134 հազար դրամի օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Հիմնական միջոցներ» տողում:
- 1,214,134 հազար դրամի լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ առանձին տողում:
- ՖՀՄՍ 16-ի ընդունումը որևէ ազդեցություն չի ունեցել Բանկի չբաշխված շահույթի վրա:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորությունների համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

Հազար ՀՀ դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	449,168
Վարձակալության երկարաձգման այլընտրանքի խելամիտ համոզմունք	1,303,267
Ճանաչումից ազատումներ.	
• փոքրարժեք գույքի վարձակալություն	(94,722)
• Վարձակալություն 12 ամսից կարճ ժամկետով	(49,747)
Գործառնական վարձակալության գծով պարտավորությունները մինչև զեղչումը	1,607,966
Զեղչումը՝ օգտագործելով լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը	(393,832)
2019թ. հունվարի 1-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	1,214,134

8 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	120,573	292,479
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,461,267	2,596,905
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	651,367	
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	14,050,287	12,519,893
Հակադարձ ռեպո գործառնություններ	270,607	688,468
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	17,554,101	16,097,745

Պարտավորություններ բանկերի նկատմամբ	71,264	100,382
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	3,081,205	2,551,176
Այլ փոխառություններ	4,645,578	5,340,705
Թողարկված պարտքային արժեթղթեր	808,345	812,904
Ստորադաս փոխառություն	130,688	128,015
Ռեպո գործառնություններ	145,442	97,396
Վարձակալության գծով պարտավորություններ	280,181	135,415
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	9,162,703	9,165,993

9 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Վճարահաշվարկային գործառնություններ	1,094,411	1,350,900
Վճարային քարտերով գործառնություններ	661,498	637,021
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	30,103	10,552
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,786,012	1,998,473

Վճարային քարտերով գործառնություններ	578,183	560,623
Վճարահաշվարկային գործառնություններ	178,172	205,713
Երաշխիքներ	13,372	3,078
Ֆոնդային բորսայի ծառայություններ	25,966	30,947
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	795,693	800,361

10 Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	1,085,494	1,044,426
Արտարժույթով ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների վերագանահատումից զուտ եկամուտ	23,612	16,590
Ընդամենը զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	1,109,106	1,061,016

11 Այլ գործառնական եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ստացված տույժեր և տուգանքներ	480,856	470,744
Այլ ակտիվների վաճառքից օգուտներ	21,969	-
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	7,921	50,371
Արժեթղթերի հաշվառման ծառայություններ	54,906	58,577
Այլ եկամուտ	129,712	70,506
Ընդամենը այլ գործառնական եկամուտներ	695,364	650,198
Ինկասացիայի գծով գործառնական ծախսեր	87,917	141,980
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	165,952	148,972
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	-	196,998
Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայություններ	39,785	40,161
Վճարային քարտերի գծով գործառնական ծախսեր	43,842	33,640
Վճարներ ֆինանսական համակարգի հաշտարարին	22,471	22,813
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	22,687	1,262
Այլ ծախսեր	34,788	32,415
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	417,442	618,241
Այլ գործառնական զուտ եկամուտ	277,922	31,957

12 Արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	2020 Ընդամենը
Դրամական միջոցներ	17	4,523	-	-	4,523
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	74,865	-	-	74,865
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	63,925	-	-	63,925
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	20	123,328	-	-	123,328
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	(1,524,911)	384,120	3,119,878	1,979,087
Այլ ակտիվներ	24	7,077	-	-	7,077
Ֆինանսական երաշխիքներ	33	11,226	-	-	11,226
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(1,239,967)	384,120	3,119,878	2,264,031

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	2019 Ընդամենը
Դրամական միջոցներ	17	(209)	-	-	(209)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	(75,016)	-	-	(75,016)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	78,642	-	-	78,642
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	(62,001)	919,986	(802,441)	55,544
Այլ ակտիվներ	24	(19,890)	-	-	(19,890)
Ֆինանսական երաշխիքներ	33	525	-	-	525
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(77,949)	919,986	(802,441)	39,596

13 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	4,055,415	3,630,910
Այլ	49,971	45,169
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	4,105,386	3,676,079

14 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերանորոգման և պահպանման ծախսեր	254,405	300,085
Անվտանգության ծառայություն	307,978	313,577
Գովազդ և շուկայավարում	135,081	118,801
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	212,759	183,573
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	122,302	137,137
Գործուղման ծախսեր	7,293	40,057
Գրասենյակային ծախսեր	72,565	74,280
Կոմունալ և գրասենյակի սպասարկման ծախսեր	94,754	82,831
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	27,758	24,969
Ներկայացուցչական ծախսեր	8,815	21,092
Ապահովագրություն	24,288	28,974
Անդամավճարներ	10,875	10,750
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	53,910	144,469
Այլ ծախսեր	100,932	91,534
Ընդամենը այլ ծախսեր	1,433,715	1,572,129

15 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ընթացիկ հարկի գծով ծախս	249,324	625,747
Հետաձգված հարկ	26,651	(59,069)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	275,975	566,678

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2019թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական

հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

2019թ. Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է շահութահարկի մասին նոր օրենք: Հետևաբար, 2020թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը նվազել է 20-ից 18% -ի: Այս փոփոխությունը հանգեցրել է 33,008 հազար ՀՀ դրամ վնասի, որը կապված է 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկի հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների վերահաշվարկման հետ:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2020	Արդյունավետ դրույքաչափ (%)	2019	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	1,616,669		2,830,325	
Շահութահարկ	291,000	18	566,065	20
Չնվազեցվող ծախսեր	(10,775)	(1)	(29,077)	(1)
Արտարժույթի դրական փոխարժեքային տարբերություն	(4,250)	-	(3,318)	-
Շահութահարկի դրույքաչափի փոփոխության ազդեցություն	-	-	33,008	1
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	275,975	17	566,678	20

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2020 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	(3,115)	4,142	-	1,027	1,027	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(15,059)	20,306	-	5,247	5,247	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(112,981)	11,506	68,840	(32,635)	-	(32,635)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	6,528	-	6,528	6,528	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	140,097	(68,817)	-	71,280	71,280	-
Հիմնական միջոցներ	71,821	79,270	-	151,091	151,091	-
Այլ ակտիվներ	(2,889)	(23,948)	-	(26,837)	-	(26,837)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	11,390	-	-	11,390	11,390	-
Վարձակալության գծով պարտավորություններ	(47,046)	(55,794)	-	(102,840)	-	(102,840)
Այլ պարտավորություններ	141,869	156	-	142,025	142,025	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	184,087	(26,651)	68,840	226,276	388,588	(162,312)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2019 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	279	(3,394)	-	(3,115)	-	(3,115)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(33,670)	18,611	-	(15,059)	-	(15,059)
Ներդրումներ արժեթղթերում	(132,971)	36,876	(16,886)	(112,981)	-	(112,981)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	117,882	22,215	-	140,097	140,097	-
Հիմնական միջոցներ	21,772	50,049	-	71,821	71,821	-
Այլ ակտիվներ	7,733	(10,622)	-	(2,889)	-	(2,889)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	12,656	(1,266)	-	11,390	11,390	-
Վարձակալության գծով պարտավորություններ		(47,046)	-	(47,046)		(47,046)
Այլ պարտավորություններ	148,223	(6,354)	-	141,869	141,869	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	141,904	59,069	(16,886)	184,087	365,177	(181,090)

16 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Տարվա շահույթ	1,340,694	2,263,647
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	1,760,731	1,760,731
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	0.76	1.29

17 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Կանխիկ դրամական միջոցներ	9,184,263	9,718,914
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	16,282,018	12,823,585
Թղթակցային հաշիվներ բանկերում	5,997,449	1,849,095
	31,463,730	24,391,594
Արժեզրկումից պահուստներ	(5,708)	(1,185)
Ընդամենը դրամական միջոցներ	31,458,022	24,390,409

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 2%-ի (2019թ՝ 2%) չափով և արտարժույթով ներգրաված միջոցների 18%-ի չափով: 2019թ. հունիսից բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 10%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 8%-ը՝ արտարժույթով: Այդ միջոցները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 11,415,036 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,544,938 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի նոստրո հաշիվ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	1,185	1,394
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	4,523	(209)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,708	1,185

18 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոպերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	522,590	-	152
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	2,623,264	857	1,050
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		857	1,202

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	479,613	-	87
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	2,589,184	689	7,633
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		689	7,720

19 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Պահանջներ բանկերի նկատմամբ		
Վարկեր	317,345	116,585
ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց	745,500	944,000
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,319,049	8,209,521
Այլ հաշիվներ	205,629	108,947
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	4,587,523	9,379,053
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		
Վարկեր	1,193,050	1,028,908
Հակադարձ հետգնման պայմանագրեր	8,582,621	-
Սառեցված ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	86,678	371,834
Ընդամենը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների համախառն գումար	9,862,349	1,400,742
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,449,872	10,779,795
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(108,337)	(32,154)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,341,535	10,747,641

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սառեցված ավանդները ֆինանսական կազմակերպություններում իրենցից ներկայացնում են Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդը 86,678 հազար դրամ գումարի չափով (2019թ.՝ Master Card վճարային համակարգում ՝ 79,161 հազար դրամ, Visa վճարային համակարգում՝ 189,002 հազար դրամ և Interactive Brokers LLC բրոքերային ընկերության հետ անդամակցության համար՝ 103,671 հազար դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ պայմանագրային կողմ հանդիսացող ֆինանսական կազմակերպություն (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020թ.	2019թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	32,154	107,170
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	74,865	(75,016)
Վերականգնում	1,318	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	108,337	32,154

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020		2019	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	11,766,962	11,752,881	8,529,870	8,209,521
Ոչ պետական պարտատոմսեր	165,512	148,789	-	-
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	11,932,474	11,901,670	8,529,870	8,209,521

20 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	10,374,818	23,498,663
Կորպորատիվ պարտատոմսեր	11,374,362	14,889,400
Բաժնային արժեթղթեր	108,907	87,122
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	21,858,087	38,475,185
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	5,847,760	-
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	5,847,760	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020	2019
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	204,864	126,222
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	63,925	78,642
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	268,789	204,864

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	4,404,287	-
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	4,361,367	-
Արժեզրկման գծով պահուստ	(98,015)	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	8,667,639	-
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	5,218,707	-
Արժեզրկման գծով պահուստ	(25,313)	-
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	5,193,394	-

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Բանկի կառուցվածքային տարբեր մակարդակներում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի վարչություն

Բանկի վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Խորհրդին կից աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման, բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար, իր լիազորությունների շրջանակներում որոշումներ է կայացնում վերոհիշյալ ռիսկերի գծով:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեները իրենց իրավասությունների շրջանակներում որոշումներ են ընդունում պարտքային ռիսկի ընդունման վերաբերյալ, պատասխանատվություն են կրում պարտքային ռիսկի զսպմանն ուղղված սահմանաչափերի պահպանման համար:

Ռիսկերի կառավարման վարչություն

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բանկային ռիսկերի բացահայտման, գնահատման, վերլուծության, մոնիտորինգի և հսկողության համար: Այն պատասխանատու է նաև ռիսկերի գնահատման համապատասխան հաշվետվությունների բազայի ստեղծման համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության

համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Խորհրդին կից Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ վարկային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արտարժութային ռիսկի, իրացվելիության ցուցանիշների և սթրես թեստերի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացումների: Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը և վարկային ռիսկերի գնահատման հանձնաժողովը ամսեկան կտրվածքով ստանում են ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև նիստ ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկը ներառյալ արժեքի ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, պարտքային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ

պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

38.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

38.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վարկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 38.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ				
Բարձր	31,463,730	-	-	31,463,730
Համախառն հաշվեկշռային արժեք	31,463,730	-	-	31,463,730
Արժեզրկումից պահուստ	(5,708)	-	-	(5,708)
Զուտ հաշվեկշռային արժեք	31,458,022	-	-	31,458,022
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	14,449,872	-	-	14,449,872
Համախառն հաշվեկշռային արժեք	14,449,872	-	-	14,449,872
Արժեզրկումից պահուստ	(108,337)			(108,337)
Զուտ հաշվեկշռային արժեք	14,341,535	-	-	14,341,535

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	27,596,940	-	-	27,596,940
Իրական արժեք	27,596,940	-	-	27,596,940
Արժեզրկումից պահուստ	(268,789)	-	-	(268,789)
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	13,984,361	-	-	13,984,361
Համախառն հաշվեկշռային արժեք	13,984,361	-	-	13,984,361
Արժեզրկումից պահուստ	(123,328)			(123,328)
Զուտ հաշվեկշռային արժեք	13,861,033	-	-	13,861,033
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	61,574,921	-	-	61,574,921
Ստանդարտ	445,679	298,792	-	744,471
Ոչ ստանդարտ	-	503,839	-	503,839
Չաշխատող	-	-	1,354,899	1,354,899
Համախառն հաշվեկշռային արժեք	62,020,600	802,631	1,354,899	64,178,130
Արժեզրկումից պահուստ	(474,597)	(171,752)	(618,826)	(1,265,175)
Զուտ հաշվեկշռային արժեք	61,546,003	630,879	736,073	62,912,955
Առևտրային վարկեր				
Բարձր	81,813,236	-	-	81,813,236
Ստանդարտ	82,392	1,589,033	-	1,671,425
Ոչ ստանդարտ	-	16,597	-	16,597
Չաշխատող	-	-	5,775,837	5,775,837
Համախառն հաշվեկշռային արժեք	81,895,628	1,605,630	5,775,837	89,277,095
Արժեզրկումից պահուստ	(353,527)	(391,068)	(3,223,398)	(3,967,993)
Զուտ հաշվեկշռային արժեք	81,542,101	1,214,562	2,552,439	85,309,102
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	850,233	-	-	850,233
Համախառն հաշվեկշռային արժեք	850,233	-	-	850,233
Արժեզրկումից պահուստ	(25,127)	-	-	(25,127)
Զուտ հաշվեկշռային արժեք	825,106	-	-	825,106
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Բարձր	18,310,012			18,310,012
Արժեզրկումից պահուստ*	(27,887)			(27,887)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ				
Բարձր	24,391,594	-	-	24,391,594
Համախառն հաշվեկշռային արժեք	24,391,594	-	-	24,391,594
Արժեզրկումից պահուստ	(1,185)	-	-	(1,185)
Զուտ հաշվեկշռային արժեք	24,390,409	-	-	24,390,409
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Բարձր	189,002	-	-	189,002
Ստանդարտ	10,590,793	-	-	10,590,793
Համախառն հաշվեկշռային արժեք	10,779,795	-	-	10,779,795
Արժեզրկումից պահուստ	(32,154)	-	-	(32,154)
Զուտ հաշվեկշռային արժեք	10,747,641	-	-	10,747,641
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Բարձր վարկանիշ	292,899	-	-	292,899
Ստանդարտ վարկանիշ	38,095,164	-	-	38,095,164
Իրական արժեք	38,388,063	-	-	38,388,063
Արժեզրկումից պահուստ	(204,864)			(204,864)
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	51,607,602	-	-	51,607,602
Ստանդարտ	210,725	238,197	-	448,922
Ոչ ստանդարտ	-	149,702	-	149,702
Չաշխատող	-	-	313,103	313,103
Համախառն հաշվեկշռային արժեք	51,818,327	387,899	313,103	52,519,329
Արժեզրկումից պահուստ	(337,837)	(46,247)	(162,937)	(547,021)
Զուտ հաշվեկշռային արժեք	51,480,490	341,652	150,166	51,972,308
Առևտրային վարկեր				
Բարձր	77,804,903	-	-	77,804,903
Ստանդարտ	61,228	5,458,074	-	5,519,302
Ոչ ստանդարտ	-	3,419,548	-	3,419,548
Չաշխատող	-	-	35,743	35,743
Համախառն հաշվեկշռային արժեք	77,866,131	8,877,622	35,743	86,779,496
Արժեզրկումից պահուստ	(448,823)	(2,377,037)	(4,552)	(2,830,412)
Զուտ հաշվեկշռային արժեք	77,417,308	6,500,585	31,191	83,949,084

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	963,177	-	-	963,177
Համախառն հաշվեկշռային արժեք	963,177	-	-	963,177
Արժեզրկումից պահուստ	(21,599)	-	-	(21,599)
Զուտ հաշվեկշռային արժեք	941,578	-	-	941,578
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Բարձր	14,764,200	-	-	14,764,200
	14,764,200	-	-	14,764,200
Արժեզրկումից պահուստ*	(16,661)	-	-	(16,661)

*Վերոնշյալ աղյուսակում վարկային պարտավորվածություններ և տրամադրված երաշխիքներում բացահայտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը վերաբերում է միայն տրամադրված երաշխիքներին: Վարկային պարտավորվածությունների՝ վճարային քարտերի և օվերդրաֆտների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը ներառված է վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում, քանի որ Բանկը չի կարող վարկային պարտավորվածության բաղադրիչը տարանջատել ֆինանսական գործիքի բաղադրիչից և ակնկալվող պարտքային կորուստները ճանաչել առանձին-առանձին:

38.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.5.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:

- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա դեֆոլտի հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են

դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ	Վարկանիշ	2020 12-ամսյա PD –ի միջակայք	2019 12-ամսյա PD –ի միջակայք
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Բարձր,Ստանդարտ	0.09-3.93%	0.10-3.43%
	Ոչ ստանդարտ	10.40-53.18%	12.49-29.45%
	Չաշխատող	88.54-100%	86.49-100%
Առևտրային վարկեր	Բարձր,Ստանդարտ	1.07-2.35%	1.13-3.16%
	Ոչ ստանդարտ	19.34-84.20%	17.51-63.89%
	Չաշխատող	94.70-100%	94.10-100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	2020 12-ամսյա PD	2019 12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.04%	0.001-0.04%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.059-7.21%	0.052-7.48%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	12.834-23.60%	13.385-29.13%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապատկեր ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ անշարժ, շարժական գույք և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող

պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.5.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Բանկի կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	706,537	-
Փոփոխությունից զուտ վնաս	402,888	-

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ

ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.5.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճ
- ՀՆԱ (արտահայտված ՀՀ դրամով)
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանսֆերտներ
- Գործազրկության մակարդակ
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում (%)
- Առևտուր (աճի տեմպ %)
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք
- Գնաճ
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

38.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

Արդյունաբերության ճյուղեր

Վարկերի տեղաբաշխումը ըստ տնեսության ճյուղերի ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

38.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ, շարժական գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

31.12.2020թ. դրությամբ 28,852,479 հազար դրամ (31.12.2019թ. դրությամբ՝ 24,755,763 հազար դրամ) ընդհանուր արժեքով վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ չի ձևավորվել գրավների մեծության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Անշարժ գույք	99,848,733	92,283,456
Շարժական գույք	1,965,170	773,543
Պաշարներ	609,013	485,270
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխավորություններ	15,960,403	11,353,907
Թանկարժեք մետաղներ և ոսկյա իրեր	13,649,374	10,248,743
Դրամական միջոցների հոսքեր	15,414,678	16,057,891
Դրամական միջոցներ	322,166	347,564
Արժեթղթեր	51,510	148,572
Այլ	5,634,178	7,599,879
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	153,455,225	139,298,825

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

38.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

38.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների գծով կիրառվող միջին արդյունավետ տոկոսադրույքները 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2020թ. Միջին կշռված արդյունավետ, տոկոսադրույք, %			2019թ. Միջին կշռված արդյունավետ, տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7.00	3.94	1.25	5.73	6.29	5.63
Պարտքային ներդրումային արժեթղթեր	9.21	5.17	3.87	9.18	5.33	4.10
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	7.85	5.53	4.04	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	12.51	10.20	6.74	12.44	8.85	6.26
Տոկոսակիր պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	5.8	1.48	0.48	7.14	2.34	2.88
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	0.1	0.1	-	0.1	0.1	-
- Ժամկետային ավանդներ	9.02	4.59	2.49	8.47	4.29	2.55
Այլ փոխառություններ	7.93	5.38	3.87	8.70	6.42	4.33
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.83	5.55	-	9.83	5.55	-
Ստորադաս փոխառություն	-	6.50	-	-	6.50	-

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ			31 դեկտեմբերի 2020
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն
ՀՀ դրամ	+1	-	(482,650)
Եվրո	+2	60,283	-
ՀՀ դրամ	(1)	-	533,840
Եվրո	(2)	(60,283)	-

Հազար ՀՀ դրամ			31 դեկտեմբերի 2019
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն
ՀՀ դրամ	+1	-	(406,595)
ԱՄՆ դոլար	+1	-	(34,737)
Եվրո	+2	(51,907)	-
ՀՀ դրամ	(1)	-	432,450
ԱՄՆ դոլար	(1)	-	35,160
Եվրո	(2)	(51,907)	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքեներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը

հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		31 դեկտեմբերի 2019թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	32,343	+5	55,329
Եվրո	+5	(387)	+5	(1,135)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթներ	Ընդամենը
Ակտիվներ					
Դրամական միջոցներ	12,560,258	16,654,351	1,501,857	741,556	31,458,022
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,825,752	3,810,369	705,414	-	14,341,535
Ներդրումային արժեթղթեր					
-Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	21,940,420	5,341,837	423,590	-	27,705,847
-Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները	12,015,319	1,200,311	645,403	-	13,861,033
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	46,655,910	92,842,346	8,723,768	33	148,222,057
Այլ ակտիվներ	372,544	316,579	33,867	102,116	825,106
Ընդամենը	103,370,203	120,165,793	12,033,899	843,705	236,413,600

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթներ	Ընդամենը
Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	10,453,213	1,338,764	156,288	48	11,948,313
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	48,086,931	44,673,945	4,560,908	614,698	97,936,482
Այլ փոխառություններ	13,136,858	59,944,760	5,187,626	-	78,269,244
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,018,169	14,147,073	-	-	15,165,242
Ստորադաս փոխառություն	-	2,154,443	-	-	2,154,443
Վարձակալության գծով պարտավորություններ	3,261,337	-	-	-	3,261,337
Այլ պարտավորություններ	1,537,450	159,849	12,028	9,654	1,718,981
Ընդամենը	77,493,958	122,418,834	9,916,850	624,400	210,454,042
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(526,909)	2,899,895	(2,124,783)	(247,858)	345
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,349,336	646,854	(7,734)	(28,553)	25,959,903
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին	8,305,867	9,233,127	767,542	3,476	18,310,012
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	88,498,733	111,463,986	9,511,873	1,001,613	210,476,205
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	64,372,150	112,057,992	8,308,544	46,931	184,785,617
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	78,651	1,700,588	(1,226,027)	(560,243)	(7,031)
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,205,234	1,106,582	(22,698)	394,439	25,683,557
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ին	6,185,419	7,616,789	940,236	21,756	14,764,200

38.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման

դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 17-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2020, %	2019, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	24.56	25.91
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	125.36	135.26

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 37-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	10,291,544	1,440,941	279,547	-	12,012,032	11,948,313
Պարտավորություններ Հաճախորդների նկատմամբ	50,990,600	8,770,631	44,369,127	128,170	104,258,528	97,936,482
Այլ փոխառություններ	3,357,582	28,849,144	48,753,494	7,017,503	87,977,723	78,269,244
Թողարկված պարտքային արժեթղթեր	112,451	1,071,876	15,184,487	-	16,368,814	15,165,242
Ստորադաս փոխառություն	11,824	-	2,705,042	-	2,716,866	2,154,443
Վարձակալության գծով պարտավորություններ	59,499	641,079	2,358,492	1,350,000	4,409,070	3,261,337
Այլ պարտավորություններ	1,718,981	-	-	-	1,718,981	1,718,981
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	66,542,481	40,773,671	113,650,189	8,495,673	229,462,014	210,454,042
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	2,341,690	-	-	-	2,341,690	2,341,690
Արտահոսք	(2,342,740)	-	-	-	(2,342,740)	(2,342,740)
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	521,903	-	-	-	521,903	522,590
Արտահոսք	(522,570)	-	-	-	(522,570)	(522,742)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	16,370,281	1,814,188	116,688	8,855	18,310,012	18,310,012

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
			31 դեկտեմբերի 2019թ.			
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,500,565	1,322,119	395,689	-	4,218,373	4,179
Պարտավորություններ Հաճախորդների նկատմամբ	46,072,495	36,703,510	1,841,280	80,424	84,697,709	83,418,886
Այլ փոխառություններ	1,273,963	19,530,595	61,745,696	6,340,369	88,890,623	77,048,866
Թողարկված պարտքային արժեթղթեր	100,605	17,737	13,890,910	-	14,009,252	14,005,787
Ստորադաս փոխառություն	10,500	-	-	2,611,224	2,621,724	1,977,270
Վարձակալության գծով պարտավորություններ	48,093	529,026	2,308,478	1,322,701	4,208,298	2,588,778
Այլ պարտավորություններ	1,603,251	-	-	-	1,603,251	1,603,251
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	51,609,472	58,102,987	80,182,053	10,354,718	200,249,230	184,785,617
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	1,964,982	-	-	-	1,964,982	1,964,982
Արտահոսք	(1,972,615)	-	-	-	(1,972,615)	(1,972,615)
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	480,008	-	-	-	480,008	479,613
Արտահոսք	(479,700)	-	-	-	(479,700)	(479,700)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	13,804,477	907,063	52,660	-	14,764,200	14,764,200

38.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը,

Խորհուրդը, Գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

39 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	2020					
	Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	4,142,592	14,005,787	77,048,866	1,977,270	2,588,778	99,763,293
Դրամային հոսքերից	(2,381,907)	1,146,566	(5,703,215)	(494)	(393,757)	(7,332,807)
Վճարումներ	(10,013,937)	(4,240,120)	(30,331,125)	(494)	(393,757)	(44,979,433)
Ստացված գումար	7,632,030	5,386,686	24,627,910	-	-	37,646,626
Ոչ դրամային հոսքերից	175,304	12,889	6,218,256	177,667	1,066,316	7,650,432
Վարձակալության գծով պարտավորության զուտ ավելացում	-	-	-	-	186,168	186,168
Վարձակալության գծով պարտավորության վերաչափում	-	-	-	-	880,148	880,148
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	173,366	-	6,531,749	176,346	-	6,881,461
Հաշվեգրված տոկոսների զուտ ազդեցություն	1,938	12,889	(313,493)	1,321	-	(297,345)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,935,989	15,165,242	77,563,907	2,154,443	3,261,337	100,080,918

Հազար ՀՀ դրամ

	Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2019						
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	2,226,993	13,253,993	81,567,962	1,990,079	-	99,039,027
Դրամային հոսքերից	1,926,962	751,794	(3,859,439)	-	(396,786)	(1,577,469)
Վճարումներ	(21,064,683)	(4,342,530)	(20,621,905)	-	(396,786)	(46,425,904)
Ստացված գումար	22,991,645	5,094,324	16,762,466	-	-	44,848,435
Ոչ դրամային հոսքերից	(11,363)	-	(659,657)	(12,809)	2,985,564	2,301,735
Անցում ՖՀՄՍ 16-ին	-	-	-	-	1,214,134	1,214,134
Վարձակալության գծով պարտավորության զուտ ավելացում	-	-	-	-	1,636,015	1,636,015
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(12,839)	-	(659,657)	(16,605)	-	(689,101)
Հաշվեգրված տոկոսների զուտ ազդեցություն	1,476	-	-	3,796	135,415	140,687
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,142,592	14,005,787	77,048,866	1,977,270	2,588,778	99,763,293

40 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Հիմնական կապիտալ	36,036,621	33,741,399
Լրացուցիչ կապիտալ	1,855,708	2,614,721
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	37,892,329	36,356,120
Ռիսկով կշռված ակտիվներ	230,334,631	239,816,094
Կապիտալի համարժեքության նորմատիվ	16.45%	15.16%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2017թ. որոշում է կայացրել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 30.000.000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

41 Սեգմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2019թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	11
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	13
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	15
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	17

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական

հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Գուդվիլի արժեզրկման գնահատում

2017թ.-ից ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձևավորվել է գուդվիլ: Ղեկավարությունը պետք է գնահատի գուդվիլի արժեզրկումը տարեկան կտրվածքով՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մոդելը՝ գուդվիլի օգտագործված մասի արժեքը որոշելու համար: Սա պահանջում է մի շարք առանցքային ենթադրությունների և դատողությունների կիրառում՝ ներառյալ կանխատեսվող ապագա դրամական հոսքերը, աճի երկարաժամկետ գործակիցները, շահութաբերության մակարդակը և կիրառվող զեղչման դրույքները: Ավելին, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ղեկավարությունը կիրառում է գուդվիլը համապատասխան դրամաստեղծ միավորների (CGUs) տեղաբաշխելու դատողություն:

Ղեկավարության արժեզրկման գնահատման հետ կապված մեր ընթացակարգերը ներառել են.

- մեթոդաբանության գնահատում,
- ձեռնարկատիրական գործունեության և ճյուղի վերաբերյալ մեր գիտելիքների հիման վրա առանցքային ենթադրությունների հիմնավորվածությունը,
- մուտքային տվյալների համադրում աջակցող հաշվետվությունների հետ, ինչպիսիք են հաստատված բյուջեները և այս բյուջեների հիմնավորվածության դիտարկումը:

Մեր կարծիքով օգտագործված մասի արժեքի հաշվարկների վերաբերյալ ղեկավարության հավաստումները՝ առկա վկայության հիման վրա, ողջամիտ են:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է,

որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականնության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են

հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը, հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն
Առաջադրանքի պատասխանատու

22 ապրիլի 2020թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2019	2018
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	8	16,097,745	15,814,734
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	8	(9,165,993)	(8,860,575)
Զուտ տոկոսային եկամուտներ		6,931,752	6,954,159
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	9	1,998,473	1,565,536
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	9	(800,361)	(818,476)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		1,198,112	747,060
Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	10	1,061,016	1,267,106
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով զուտ վնաս		(27,959)	(303,443)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով օգուտ		188,254	273,233
Այլ գործառնական զուտ եկամուտներ	11	31,957	341,182
(Արժեզրկման ծախս)/արժեզրկման հակադարձում	12	(39,596)	390,783
Անձնակազմի գծով ծախսեր	13	(3,676,079)	(3,472,922)
Գուդվիլի արժեզրկում	6	(350,000)	(2,510,864)
Հիմնական միջոցների մաշվածություն և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(915,003)	(647,551)
Այլ ծախսեր	14	(1,572,129)	(1,850,655)
Շահույթ մինչև հարկումը		2,830,325	1,188,088
Շահութահարկի գծով ծախս	15	(566,678)	(673,284)
Տարվա շահույթ		2,263,647	514,804

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2019	2018
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի զուտ փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ/(վնաս)		321,099	(196,404)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		78,642	22,695
Վերադասակարգում շահույթին կամ վնասին		(153,416)	(247,413)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(16,886)	88,763
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/(վնաս)		229,439	(332,359)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		229,439	(332,359)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		2,493,086	182,445
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	16	1.29	0.29

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ	17	24,390,409	38,633,475
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	18	689	4,071
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	10,747,641	16,937,582
Ներդրումային արժեթղթեր			
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	38,475,185	29,184,794
-Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20	-	4,175,959
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	135,921,392	119,978,388
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	22	8,544,020	5,667,894
Գուդվիլ	6	662,602	1,012,602
Հետաձգված հարկային ակտիվ	15	184,087	141,904
Բռնագանձված ակտիվներ	23	1,721,695	2,314,940
Այլ ակտիվներ	24	1,798,584	2,776,875
Ընդամենը՝ ակտիվներ		222,446,304	220,828,484
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	25	4,142,779	6,229,888
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	18	7,720	12,004
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	83,418,886	80,850,763
Այլ փոխառություններ	27	77,048,866	81,567,962
Թողարկված պարտքային արժեթղթեր	28	14,005,787	13,253,993
Ստորադաս փոխառություններ	29	1,977,270	1,990,079
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		47,497	238,796
Վարձակալության գծով պարտավորություններ	33	2,588,778	-
Այլ պարտավորություններ	30	1,804,385	1,773,749
Ընդամենը՝ պարտավորություններ		185,041,968	185,917,234

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	31	8,803,655	8,803,655
Էմիսիոն եկամուտ		8,031,745	8,031,745
Իրական արժեքի պահուստ		887,544	658,105
Չբաշխված շահույթ		19,681,392	17,417,745
Ընդամենը՝ սեփական կապիտալ		37,404,336	34,911,250
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		222,446,304	220,828,484

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. ապրիլի 22-ին:

Մհեր Անանյան
Վարչության նախագահ

Տիգրան Գալստյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	8,803,655	8,031,745	658,105	17,417,745	34,911,250
Տարվա շահույթ	-	-	-	2,263,647	2,263,647
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքի զուտ փոփոխությունից չվաստակած զուտ օգուտ	-	-	321,099	-	321,099
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	(153,416)	-	(153,416)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	78,642	-	78,642
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(16,886)	-	(16,886)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	229,439	2,263,647	2,493,086
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,803,655	8,031,745	887,544	19,681,392	37,404,336
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,803,655	8,031,745	886,937	17,432,975	35,155,312
ՖՀՄՄ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 7)	-	-	103,527	(530,034)	(426,507)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	8,803,655	8,031,745	990,464	16,902,941	34,728,805
Տարվա շահույթ	-	-	-	514,804	514,804

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Իրական արժեքի պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքի զուտ փոփոխությունից չվաստակած զուտ վնաս	-	-	(196,404)	-	(196,404)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	(247,413)	-	(247,413)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	22,695	-	22,695
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	88,763	-	88,763
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(332,359)	514,804	182,445
Հաշվեկշիռը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,803,655	8,031,745	658,105	17,417,745	34,911,250

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2019	2018
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	2,830,325	1,188,088
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	915,003	647,551
Գուդվիլի արժեզրկում	350,000	2,510,864
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս/(հակադարձում)	39,596	(390,783)
Փոփոխություն ստացվելիք տոկոսներում	(66,951)	(56,937)
Փոփոխություն վճարվելիք տոկոսներում	86,118	259,143
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	1,262	10,307
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	196,998	50,906
Զուտ օգուտ ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(16,590)	(212,984)
Շահույթում կամ վնասում ճանաչված ֆինանսական ակտիվների իրական արժեքից վնաս	25,467	308,030
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	4,361,228	4,314,185
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	(26,369)	41,741
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,053,765	(4,684,815)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(16,703,480)	(2,538,833)
Բռնագանձված ակտիվներ	593,245	1,234,636
Այլ ակտիվներ	818,859	(610,450)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(4,002,708)	4,120,688
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	3,037,559	(14,274,279)
Այլ պարտավորություններ	42,964	(77,945)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր՝ մինչև շահութահարկը	(5,824,937)	(12,475,072)
Վճարված շահութահարկ	(817,046)	(768,894)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(6,641,983)	(13,243,966)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2019	2018
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթեր	(5,026,256)	(4,508,600)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(951,803)	(636,136)
Հիմնական միջոցների վաճառք	9,561	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(5,968,498)	(5,144,736)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Պարտքային արժեթղթեր	751,794	4,441,227
Ֆինանսական կազմակերպություններից փոխառությունների (մարում)/ ստացում	(1,932,477)	12,899,741
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(396,786)	-
Ստորադաս փոխառության ստացում	-	1,989,444
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(1,577,469)	19,330,412
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	(14,187,950)	941,710
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ	38,633,475	38,044,426
Ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	209	(1,394)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(55,325)	(351,267)
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 17)	24,390,409	38,633,475
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	16,030,794	15,757,797
Վճարված տոկոսներ	(9,079,875)	(8,601,432)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ (Բանկ) հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը հանդիսանում է 1991թ-ին հիմնված «Հայկապ Բանկ» ՓԲԸ իրավահաջորդը: Բանկը գրանցվել է 20 սեպտեմբերի 1991թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N4 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International, Diners Club քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 59 մասնաճյուղերը գտնվում են ՀՀ տարբեր մարզերում և ԼՂՀ-ում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Բուզանդի 87, 85 տարածք:

Միացման պայմանագրի համաձայն Բանկը 2017թ. ձեռք է բերել վերահսկողություն «Հայկական զարգացման Բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ, որի լիցենզիան հետ է կանչվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 1,017 մարդ:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018 թ. գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և

Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»*

ՖՀՄՍ 16-ը *«Վարձակալություններ» փոխարինում է* ՀՀՄՍ 17-ը *«Վարձակալություն»*, առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ 15 *«Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»*):

Այս նոր ստանդարտի կիրառումը հանգեցրել է նրան, որ Բանկն իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք որոշակիացված են որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Նոր ստանդարտը կիրառվել է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման միասնական ազդեցությունը ճանաչելով սեփական կապիտալում որպես կուտակված արդյունքի սկզբնական մնացորդի ճշգրտում ընթացիկ ժամանակաշրջանում: Նախորդ ժամանակաշրջանները չեն վերաներկայացվել: Բացի այդ, ՖՀՄՍ 16-ում բացահայտման պահանջները հիմնականում չեն կիրառվել համադրելի տեղեկատվության համար:

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Բանկն ընտրել է ՀՀՄՄ 17-ի և ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՄ 16-ը նախկինում ՀՀՄՄ 17-ի և ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

ՖՀՄՄ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Բանկն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Բանկը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ելնելով վերը նշվածից՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 1,214,134 հազար դրամի օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Հիմնական միջոցներ» տողում:
- 1,214,134 հազար դրամի լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ առանձին տողում:
- ՖՀՄՄ 16-ի ընդունումը որևէ ազդեցություն չի ունեցել Բանկի չբաշխված շահույթի վրա:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորությունների համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

Հազար ՀՀ դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	449,168
Վարձակալության երկարաձգման այլընտրանքի խելամիտ համոզմունք	1,303,267
Ճանաչումից ազատումներ.	
• փոքրարժեք գույքի վարձակալություն	(94,722)
• Վարձակալություն 12 ամսից կարճ ժամկետով	(49,747)
Գործառնական վարձակալության գծով պարտավորությունները մինչև զեղչումը	1,607,966
Զեղչումը՝ օգտագործելով լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը	(393,832)
2019թ. հունվարի 1-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	1,214,134

Սկզբնական կիրառման անսաթվին օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման ստուգում կատարելու փոխարեն, Բանկը հիմնվել է պատմական գնահատման վրա՝ արդյոք վարձակալություններն անբարենպաստ են, թե ոչ, անմիջապես նախքան ՖՀՄՄ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Բանկը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես ֆինանսական վարձակալություններ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալական պարտավորությունը սկզբնական կիրառման ամսաթվին չափվում են այն գումարով, որով չափվել են անմիջապես նախքան սկզբնական կիրառման ամսաթիվը՝ ՀՀՄՍ 17-ի կիրառմամբ:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառված լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը կազմում է 9%:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս Բանկն օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2019թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) *«Ֆինանսական գործիքներ» կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»,*
- ՖՀՄՄՄԿ Մեկնաբանություն 23 *«Շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն»*,
- ՀՀՄՍ 19 (Փոփոխություններ) *«Պլանի փոփոխություն, դադարեցում կամ ներդրում»,*
- 2015-2017թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից):

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ),
- «Էականության սահմանումը» (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ

Բանկը կիրառում է ձեռքբերման մեթոդը ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման համար: Դուստր ընկերության վերահսկողության ձեռքբերման նպատակով Բանկի կողմից փոխանցված փոխհատուցումը հաշվարկվում է Բանկի կողմից թողարկված սեփական

կապիտալի և պարտավորությունների, փոխանցված ակտիվների ձեռքբերման ամսաթվով հաշվառվող իրական արժեքով, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող որևէ ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռքբերման ծախսերը ճանաչվում են որպես ծախս դրանց տեղի ունենալու պահին:

Ձեռքբերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվով՝ իրական արժեքով:

4.2 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռսբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.5.6 ծանոթագրությունում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսները, շահաբաժինները:

4.3 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը և ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ներկայացվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության զուտ եկամուտ կամ վնաս արտարժութային գործառնություններից հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.23 Հավատարմագրային գործառնություններ

Բանկն իրականացնում է հավատարմագրային գործառնություններ իր հաճախորդների համար: Բանկը նաև մատուցում է դեպոզիտարիոն ծառայություններ, ինչը ներառում է հաճախորդներին պատկանող արժեթղթերի դեպո հաշիվներով գործառնությունները: Բանկի կողմից կառավարվող ակտիվները, ինչպես նաև դրանցից ծագող պարտավորությունները չեն ներառվում Խմբի ֆինանսական հաշվետվություններում: Բանկը կրում է հավատարմագրային գործառնությունների գծով գործառնական ռիսկը, իսկ նշված գործառնությունների վարկային և շուկայական ռիսկը կրում են հաճախորդները:

Հավատարմագրային գործառնություններից ստացված վարձավճարները արտացոլվում են կոմիսիոն և այլ տեսքով եկամուտներում:

4.24 Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՍ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտներից և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում: Բանկի եկամուտը բխում է հայկական աղբյուրներից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.5.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 35):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես 34 ծանոթագրությունը):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տես՝ ծանոթագրություն 38), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես՝ ծանոթագրություն 4.5.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 32 ծանոթագրությունը:

Գուդվիլի արժեզրկում

Բանկը գնահատում է գուդվիլը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորների փոխհատուցվող արժեքի հիման վրա:

6 Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Գուդվիլ ձեռք բերումից

Միացման պայմանագրի համաձայն Բանկը 2017թ. ձեռք է բերել «Հայկական զարգացման Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետոմսերը և վերահսկողություն, որի լիցենզիան ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հետ է կանչվել: Ձեռքբերման արդյուքնում ճանաչվել է գուդվիլ.

Հազար ՀՀ դրամ

Փոխանցված հատուցում	15,129,999
Որոշելի զուտ ակտիվների իրական արժեք	10,725,662
Գուդվիլ	4,404,337
Գուդվիլի արժեզրկում	(880,871)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2017թ. դրությամբ	3,523,466
Գուդվիլի արժեզրկում	(2,510,864)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2018թ. դրությամբ	1,012,602
Գուդվիլի արժեզրկում	(350,000)
Գուդվիլի մնացորդ արժեզրկումից հետո 31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ	662,602

7 Անցման բացահայտում ՖՀՄՍ 9

Ստորև նկարագրվում է ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՍ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքների համադրումը ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված մնացորդների միջև ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասակարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ				
Ամորտիզացված արժեք				
Դրանմական միջոցներ				
Տարեսկզբի մնացորդ	38,044,426			
Վերաչափում		-	(2,003)	
Տարեվերջի մնացորդ				38,042,423
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Տարեսկզբի մնացորդ	12,425,722			
Վերաչափում		-	(42,957)	
Տարեվերջի մնացորդ				12,382,765
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին՝ ներառյալ վարձակալության գծով դեբիտորական պարտքերը				
Տարեսկզբի մնացորդ	119,167,143			
Վերաչափում		-	(471,214)	
Տարեվերջի մնացորդ				118,695,929
Այլ ֆինանսական ակտիվներ				
Տարեսկզբի մնացորդ	1,486,426			
Վերաչափում		-	(8,863)	
Տարեվերջի մնացորդ				1,477,563
Ընդամենը ամորտիզացված արժեք	171,123,717	-	(525,037)	170,598,680
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր				
Տարեսկզբի մնացորդ	29,238,238			
Վերադասակարգում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափող բաժնային գործիքներ		(87,122)	-	
Վերադասակարգում իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափող պարտքային գործիքներ		(29,151,116)	-	
Տարեվերջի մնացորդ		(29,238,238)		-

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք ՀՀՄՍ 39-ի համաձայն 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերադասա-կարգում	Վերաչափում (ակնկալվող պարտքային կորուստներ)	Հաշվեկշռային արժեք ՖՀՄՍ 9-ի համաձայն 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Ներդրումային արժեթղթեր (պարտքային)				
Տարեսկզբի մնացորդ	-			
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից		29,151,116	-	
Տարեվերջի մնացորդ				29,151,116
Ներդրումային արժեթղթեր (բաժնային)				
Տարեսկզբի մնացորդ	-			
Վերադասակարգում վաճառքի համար մատչելի արժեթղթերից		87,122	-	
Տարեվերջի մնացորդ				87,122
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափող ֆինանսական ակտիվներ	-	29,238,238	-	29,238,238
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	21,534	-	-	21,534
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական ակտիվներ	21,534	-	-	21,534
Ֆինանսական պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	3,253	-	-	3,253
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափող ֆինանսական պարտավորություններ	3,253	-	-	3,253
Ամորտիզացված արժեք				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,708,928	-	-	3,708,928
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	95,811,913	-	-	95,811,913
Այլ փոխառություններ	66,843,616	-	-	66,843,616
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,733,830	-	-	8733,830
Այլ պարտավորություններ	1,683,330	-	-	1,683,330
Ընդամենը ամորտիզացված արժեք	176,781,617	-	-	176,781,617

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Պահուստներ և չբաշխված շահույթ
Իրական արժեքի պահուստ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	886,937
Իրական արժեքով՝այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում ՖՀՄՍ 9-ի համաձայն	103,527
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	990,464
Չբաշխված շահույթ	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	17,432,975
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում՝ ներառյալ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվողները (տես՝ ստորև)	(636,662)
Հետաձգված հարկ	106,628
Տարեսկզբի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	16,902,941
Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով	(426,507)

Հետևյալ աղյուսակը համադրում է.

- ՀՀՄՍ 39-ի համաձայն ֆինանսական ակտիվների արժեզրկումից վերջնական պահուստը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,
- ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների սկզբնական պահուստը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	ՀՀՄՍ 39/ՀՀՄՍ 37-ի համաձայն արժեզրկման կորուստների պահուստ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վերաչափում	ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստներ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ
Արժեզրկումից պահուստ			
Դրամական միջոցներ	-	2,003	2,003
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	25,273	42,957	68,230
ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր / ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	-	103,527	103,527
ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ վարկեր և փախատվություններ՝ ներառյալ վարձակալության գծով դեբիտորական պարտքեր/ ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	2,033,077	471,214	2,504,291
Այլ ֆինանսական ակտիվներ	24,145	8,863	33,008
	2,082,495	628,564	2,711,059
ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	-	8,098	8,098
	-	8,098	8,098
Ընդամենը արժեզրկումից պահուստ	2,082,495	636,662	2,719,157

8 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	292,479	270,241
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,596,905	2,449,849
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	12,519,893	12,231,362
Հակադարձ ռեպո գործառնություններ	688,468	863,282
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	16,097,745	15,814,734

Պարտավորություններ բանկերի նկատմամբ	100,382	158,627
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,551,176	2,887,667
Այլ փոխառություններ	5,340,705	4,895,075
Թողարկված պարտքային արժեթղթեր	812,904	781,436
Ստորադաս փոխառություն	128,015	6,712
Ռեպո գործառնություններ	97,396	131,058
Վարձակալության գծով պարտավորություններ	135,415	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	9,165,993	8,860,575

9 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Վճարահաշվարկային գործառնություններ	1,350,900	1,059,404
Վճարային քարտերով գործառնություններ	637,021	488,324
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	10,552	17,808
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,998,473	1,565,536

Վճարային քարտերով գործառնություններ	560,623	634,376
Վճարահաշվարկային գործառնություններ	205,713	155,303
Երաշխիքներ	3,078	9,996
Ֆոնդային բորսայի ծառայություններ	30,947	18,801
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	800,361	818,476

10 Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	1,044,426	1,054,122
Արտարժույթով ակտիվների և պարտավորությունների վերագանահատումից զուտ եկամուտ	16,590	212,984
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	1,061,016	1,267,106

11 Այլ գործառնական եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ստացված տույժեր և տուգանքներ	470,744	428,909
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	50,371	135,139
Արժեթղթերի հաշվառման ծառայություններ	58,577	53,216
Այլ եկամուտ	70,506	82,133
Ընդամենը այլ եկամուտներ	650,198	699,397
Ինկասացիայի գծով գործառնական ծախսեր	141,980	103,211
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող պետական հիմնադրամին	148,972	70,667
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	196,998	50,906
Դեպոզիտարիայի կողմից մատուցվող ծառայություններ	40,161	39,680
Վճարային քարտերի գծով գործառնական ծախսեր	33,640	22,343
Վճարներ ֆինանսական համակարգի հաշտարարին	22,813	21,567
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	1,262	10,307
Ֆակտորինգային ծախսեր	-	10,304
Այլ ծախսեր	32,415	29,230
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	618,241	358,215
Այլ գործառնական զուտ եկամուտ	31,957	341,182

12 Արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)

Հազար ՀՀ դրամ					2019
	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցներ	17	(209)	-	-	(209)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	(75,016)	-	-	(75,016)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	78,642	-	-	78,642
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	(62,001)	919,986	(802,441)	55,544
Այլ ակտիվներ	24	(19,890)	-	-	(19,890)
Ֆինանսական երաշխիքներ	32	525	-	-	525
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(77,949)	919,986	(802,441)	39,596

Հազար ՀՀ դրամ					2018
	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցներ	17	(609)	-	-	(609)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	19	38,940	-	-	38,940
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20	22,695	-	-	22,695
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	21	(127,385)	212,368	(535,790)	(450,807)
Այլ ակտիվներ	24	(9,040)	-	-	(9,040)
Ֆինանսական երաշխիքներ	32	8,038	-	-	8,038
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(67,361)	212,368	(535,790)	(390,783)

13 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	3,630,910	3,435,541
Այլ	45,169	37,381
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	3,676,079	3,472,922

14 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Գործառնական վարձակալության գծով ծախսեր*	-	475,601
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերանորոգման և պահպանման ծախսեր	300,085	245,913
Անվտանգության ծառայություն	313,577	290,706
Գովազդ և շուկայավարում	118,801	123,599
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	183,573	237,476
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	137,137	114,993
Գործուղման ծախսեր	40,057	52,567
Գրասենյակային ծախսեր	74,280	69,282
Կոմունալ և գրասենյակի սպասարկման ծախսեր	82,831	75,248
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	24,969	25,418
Ներկայացուցչական ծախսեր	21,092	19,190
Ապահովագրություն	28,974	20,911
Անդամավճարներ	10,750	13,517
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր*	144,469	-
Այլ ծախսեր	91,534	86,234
Ընդամենը այլ ընդհանուր վարչական ծախսեր	1,572,129	1,850,655

* Համադրելի տեղեկատվության բացակայությունը պայմանավորված է ՖՀՄՍ 16-ի կիրառմամբ (տես ծանոթագրություն 33):

15 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ընթացիկ հարկի գծով ծախս	625,747	738,374
Հետաձգված հարկ	(59,069)	(65,090)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	566,678	673,284

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2018թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

2019թ. Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է շահութահարկի մասին նոր օրենք: Հետևաբար, 2020թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կնվազի 20-ից 18% -ի: Այս փոփոխությունը հանգեցրել է 33,008 հազար ՀՀ դրամ վնասի, որը կապված է 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկի հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների վերահաշվարկման հետ:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2019	Արդյունավետ դրույքաչափ (%)	2018	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	2,830,325		1,188,088	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	566,065	20	237,618	20
Չնվազեցվող ծախսեր	(29,077)	(1)	502,104	42
Արտարժույթի դրական փոխարժեքային տարբերություն	(3,318)	-	(42,597)	(4)
Հետաձգված հարկային պարտավորության ապաճանաչման ազդեցությունը	-	-	(23,841)	(2)
Հարկային տոկոսադրույքի փոփոխման ազդեցություն	33,008	1	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	566,678	20	673,284	56

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2019 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	279	(3,394)	-	(3,115)	-	(3,115)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(33,670)	18,611	-	(15,059)	-	(15,059)
Ներդրումներ արժեթղթերում	(132,971)	36,876	(16,886)	(112,981)	-	(112,981)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	117,882	22,215	-	140,097	140,097	-
Հիմնական միջոցներ	21,772	50,049	-	71,821	71,821	-
Այլ ակտիվներ	7,733	(10,622)	-	(2,889)	-	(2,889)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	12,656	(1,266)	-	11,390	11,390	-
Վարձակալության գծով պարտավորություններ		(47,046)	-	(47,046)		(47,046)
Այլ պարտավորություններ	148,223	(6,354)	-	141,869	141,869	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	141,904	59,069	(16,886)	184,087	365,177	(181,090)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2017	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2018 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ	-	401	(122)	-	279	279	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(2,922)	8,591	(39,339)	-	(33,670)	-	(33,670)
Ներդրումներ արժեթղթերում	(221,734)		-	88,763	(132,971)	-	(132,971)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17,422	94,243	6,217	-	117,882	117,882	-
Հիմնական միջոցներ	(23,841)	-	45,613	-	21,772	21,772	-
Այլ ակտիվներ	-	1,773	5,960	-	7,733	7,733	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	12,656	-	-	-	12,656	12,656	-
Այլ պարտավորություններ	99,842	1,620	46,761	-	148,223	148,223	-
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(118,577)	106,628	65,090	88,763	141,904	308,545	(166,641)

16 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Տարվա շահույթ	2,263,647	514,804
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	1,760,731	1,760,731
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	1.29	0.29

17 Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Կանխիկ դրամական միջոցներ	9,718,914	8,422,779
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	12,823,585	25,305,465
Թղթակցային հաշիվներ բանկերում	1,849,095	4,906,625
	24,391,594	38,634,869
Արժեզրկումից պահուստներ	(1,185)	(1,394)
Ընդամենը դրամական միջոցներ	24,390,409	38,633,475

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 2%-ի (2018թ.: 2%) և արտարժույթով միջոցների 18%-ի (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18%) չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: Այդ միջոցները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 9,544,938 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10,705,794 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի նոստրո հաշիվ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	1,394	2,003
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(209)	(609)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,185	1,394

18 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոպերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	479,613	-	87
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	2,589,184	689	7,633
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		689	7,720

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	4,587,295	645	6,373
Արտաժութային ֆորվարդ պայմանագրեր	2,745,450	3,426	5,631
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		4,071	12,004

19 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Պահանջներ բանկերի նկատմամբ		
Վարկեր	116,585	2,368,743
ՀՀ ԿԲ-ում պլաստիկ քարտերով գործառնությունների համար դեպոնացված միջոց	944,000	942,500
Հակադարձ հետգնման պայմանագրեր	8,209,521	6,895,841
Այլ հաշիվներ	108,947	147,589
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	9,379,053	10,354,673
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		
Վարկեր	1,028,908	2,229,767
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	4,178,164
Սառեցված ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	371,834	282,148
Ընդամենը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների համախառն գումար	1,400,742	6,690,079
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,779,795	17,044,752
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(32,154)	(107,170)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,747,641	16,937,582

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սառեցված ավանդները ֆինանսական կազմակերպություններում իրենցից ներկայացնում են Master Card վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված ավանդը 79,161 հազար դրամ գումարի չափով (2018թ.՝ 78,060 հազար դրամ), Visa վճարային համակարգում անդամակցության դիմաց սառեցված 189,002 հազար դրամ գումարը (2018թ.՝ 190,598 հազար դրամ) և Interactive Brokers LLC բրոքերային ընկերության հետ անդամակցության համար 103,671 հազար դրամ գումարը (2018թ.՝ 13,491 հազար դրամ):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի որևէ պայմանագրային կողմ հանդիսացող ֆինանսական կազմակերպություն (2018թ.՝ մեկ), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվի մնացորդը կազմել է 4,457,751 հազար դրամ):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019թ.	2018թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	107,170	68,230
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(75,016)	38,940
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,154	107,170

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019		2018	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	8,529,870	8,209,521	10,736,617	10,397,624
Ոչ պետական պարտատոմսեր	-	-	685,288	676,381
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	8,529,870	8,209,521	11,421,905	11,074,005

20 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	23,498,663	22,040,034
Կորպորատիվ պարտատոմսեր	14,889,400	7,057,638
Բաժնային արժեթղթեր	87,122	87,122
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	38,475,185	29,184,794
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	-	4,175,959
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	4,175,959

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	126,222	103,527
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	78,642	22,695
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	204,864	126,222

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		31 դեկտեմբերի 2018թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	4.74%-15.36%	2020-2047	4.74%-16.35%	2019-2047
Կորպորատիվ պարտատոմսեր	2.99%-12.75%	2020-2025	3.30%-12.75%	2019-2025

21 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	19,673,309	(91,694)	19,581,615	17,429,256	(123,661)	17,305,595
Սպառողական վարկեր	32,846,020	(455,327)	32,390,693	22,607,583	(330,637)	22,276,946
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	-	-	-	106,091	(80)	106,011

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Առևտրային վարկեր						
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	146,672	(2,024)	144,648	284,490	(6,236)	278,254
Առևտուր	29,351,148	(354,608)	28,996,540	23,763,005	(337,676)	23,425,329
Արդյունաբերություն	10,701,295	(335,930)	10,365,365	16,923,305	(344,059)	16,579,246
Գյուղատնտեսություն	4,281,555	(7,408)	4,274,147	3,041,043	(11,220)	3,029,823
Շինարարություն	11,491,458	(1,238,726)	10,252,732	10,027,108	(289,456)	9,737,652
Այլ	30,807,368	(891,716)	29,915,652	28,363,697	(1,124,165)	27,239,532
Ընդամենը	139,298,825	(3,377,433)	135,921,392	122,545,578	(2,567,190)	119,978,388

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 600,425 հազար դրամ (2018թ.՝ 1,420,131 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու վարկառու (2018թ-ին՝ երեք), որոնց, այդ թվում նրանց փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 8,463,202 հազար դրամ (2018թ-ին ՝ 12,882,706 հազար դրամ):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	227,187	72,228	154,963	454,378
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	1,885	(469)	(1,416)	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(860)	9,893	(9,033)	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(1,433)	(411)	1,844	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(127,271)	(47,927)	(277,075)	(452,273)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	238,329	12,933	131,564	382,826
Վերականգնում	-	-	1,171,228	1,171,228
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,009,138)	(1,009,138)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	337,837	46,247	162,937	547,021

Հազար ՀՀ դրամ	2019			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	638,639	1,405,603	68,570	2,112,812
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	6,277	(4,578)	(1,699)	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(23,014)	23,014	-	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(20)	(1,982)	2,002	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(406,382)	584,871	(657,647)	(479,158)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	233,323	370,109	717	604,149
Վերականգնում	-	-	1,186,033	1,186,033
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(593,424)	(593,424)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	448,823	2,377,037	4,552	2,830,412

Հազար ՀՀ դրամ	2018			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	232,977	37,734	89,770	360,481
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	4,066	(3,561)	(505)	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(675)	1,885	(1,210)	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(1,293)	(29,797)	31,090	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(124,308)	62,028	(651,905)	(714,185)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	116,420	3,939	38,451	158,810
Վերականգնում	-	-	1,833,034	1,833,034
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,183,762)	(1,183,762)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	227,187	72,228	154,963	454,378

Հազար ՀՀ դրամ	2018			
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	677,892	1,357,593	108,325	2,143,810
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	81,501	(81,501)	-	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(151)	4,276	(4,125)	-
- գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(1,106)	(21,166)	22,272	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(472,571)	145,279	77,638	(249,654)
Տրամադրված կամ ձեռքբերված նոր ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	353,074	1,122	26	354,222
Վերականգնում	-	-	825,270	825,270
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(960,836)	(960,836)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	638,639	1,405,603	68,570	2,112,812

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 38.1.2 ծանոթագրությունում:

Բանկն ընդունել է արժեթղթեր՝ որպես գրավ առևտրային վարկերի համար, որոնք թույլատրվում են վաճառել կամ վերագրավադնել: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		31 դեկտեմբերի 2018թ.	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	-	-	117,656	106,091
Ընդամենը գնված արժեթղթեր և հետգնման պայմանագրերով տրամադրված վարկեր	-	-	117,656	106,091

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	891	3,296
1-ից 5 տարի	167,614	331,398
	168,505	334,694
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ		
Մինչև 1 տարի	(113)	(494)
1-ից 5 տարի	(21,720)	(49,710)
	(21,833)	(50,204)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	146,672	284,490

Ֆինանսական վարձակալության գծով պահուստները ներառված են վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստում և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 2,552 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,273 հազար դրամ):

Ֆինանսական վարձակալության գծով ենթադրվող տոկոսադրույքը կազմում է 8-12% (2018թ.՝ 8-12%):

Ինչպես նշված է 35 ծանոթագրությունում, 2019թ. դեկտեմբերի 31-ի և 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 37 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 38 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 34 ծանոթագրությունում:

22 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Հող և շենքեր	Վարձակալված գույքի բարելավումներ	Համակարգիչներ և կապի սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային սարքավորում	Ոչ նյութական ակտիվներ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	4,290,762	345,301	2,797,409	150,602	1,587,000	1,197,278	-	10,368,352
Ավելացում	14,698	77,946	322,292	22,890	82,604	115,706	-	636,136
Օտարում	-	(13,973)	(8,699)	-	(41,644)	-	-	(64,316)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,305,460	409,274	3,111,002	173,492	1,627,960	1,312,984	-	10,940,172
ՖՀՄՍ 16–ին անցման ճշգրտում	-	-	-	-	-	-	1,214,134	1,214,134
Ավելացում	13,512	77,838	254,124	87,065	411,056	106,946	1,636,015	2,586,556
Օտարում	-	(50,595)	(109,371)	(19,650)	(57,885)	-	-	(237,501)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,318,972	436,517	3,255,755	240,907	1,981,131	1,419,930	2,850,149	14,503,361
Կուտակված մաշվածություն								
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	686,234	194,927	2,051,445	127,036	1,191,750	427,328	-	4,678,720
Տարվա ծախս	119,133	16,236	248,881	15,976	141,288	106,037	-	647,551
Օտարում	-	(5,795)	(8,699)	-	(39,499)	-	-	(53,993)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	805,367	205,368	2,291,627	143,012	1,293,539	533,365	-	5,272,278
Տարվա ծախս	119,803	14,486	266,507	7,226	102,049	114,788	290,144	915,003
Օտարում	-	(42,446)	(109,270)	(19,650)	(56,574)	-	-	(227,940)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	925,170	177,408	2,448,864	130,588	1,339,014	648,153	290,144	5,959,341
Հաշվեկշռային արժեք								
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,393,802	259,109	806,891	110,319	642,117	771,777	2,560,005	8,544,020
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,500,093	203,906	819,375	30,480	334,421	779,619	-	5,667,894

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվներում ներառված են 467,718 հազար դրամ հաշվեկշռային արժեքով Մայքրոսոֆթ համակարգչային ծրագրային ապահովման օգտագործման իրավունքի արտոնագրերը (2018թ՝ 539,749 հազար դրամ):

Ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,243,071 հազար դրամ (2018թ. 1,467,189 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 7,782 հազար դրամ (2018թ. ՝ 169,564 հազար դրամ): Տվյալ սարքավորումները չեն ամորտիզացվում և դասակարգված են համաձայն իրենց դասերի:

Պայմանագրային պարտավորություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով (2018թ.՝ հիմնական միջոցների ձեռք բերման գծով 38,485 հազար դրամ, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով՝ 7,444 հազար դրամ):

23 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մասնրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անշարժ գույք	1,721,632	2,314,877
Այլ ակտիվներ	63	63
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	1,721,695	2,314,940

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

24 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Դրամական փոխանցումների համակարգերի գծով ստացվելիք գումարներ	823,627	1,445,613
Այլ ֆինանսական ակտիվներ	139,550	88,928
	963,177	1,534,541
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(21,599)	(38,662)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	941,578	1,495,879
Կանխավճարներ	389,442	695,675
Թանկարժեք մետաղներ	410,654	527,204
Պահեստ	56,389	57,597
Այլ	521	520
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	857,006	1,280,996
Ընդամենը այլ ակտիվներ	1,798,584	2,776,875

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստներ
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	38,662	33,008
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(19,890)	(9,040)
Զուտ վերականգնում	2,827	14,694
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,599	38,662

25 Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	545,441	1,157,143
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	-	4,002,707
Վարկեր առևտրային բանկերից	3,597,151	1,069,850
Լորո հաշիվներ	187	188
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	4,142,779	6,229,888

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի հետ հետգնման պայմանագրերի ներքո պարտավորություններից 4,002,707 հազար դրամ ընդհանուր գումարով պարտավորությունը ապահոված է հակադարձ հետգնման պայմանագրերով ձեռք բերված արժեթղթերով:

Վարկերը ՀՀ ԿԲ-ից ներառում են վարկեր ստացված տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային կողմ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որի մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը:

2019 և 2018թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

26 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
Անհատներ	18,993,890	16,230,185
Իրավաբանական անձինք	23,440,248	25,412,122
ՀՀ կառավարություն և պետական հիմնարկներ	1,427,369	512,705
Ժամկետային ավանդներ		
Անհատներ	34,651,150	31,969,901
Իրավաբանական անձինք	4,906,229	6,725,850
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	83,418,886	80,850,763

Ժամկետային ավադներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում հաճախորդների ավանդների մնացորդները 1,083,615 հազար դրամ (2018թ-ին՝ 1,855,359 հազար դրամ) գումարով հանդիսանում են գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի դիմաց:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու հաճախորդներ կամ կապակցված հաճախորդների խմբեր, որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը (2018թ-ին՝ երկու): 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդները կազմում են 10,592,550 հազար դրամ (2018թ-ին՝ 11,839,526 հազար դրամ):

27 Այլ փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Փոխառություններ միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից	69,348,009	75,033,202
Փոխառություններ ՀՀ կառավարությունից	102,796	530,845
Փոխառություններ տեղական ֆինանսական կազմակերպություններից	7,598,061	6,003,915
Ընդամենը այլ փոխառություններ	77,048,866	81,567,962

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի յոթ պայմանագրային կողմ (2018թ-ին՝ ութ), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների համախառն արժեքը կազմում է 65,494,293 հազար դրամ (2018թ-ին՝ 69,480,958 հազար դրամ):

Փոխառությունները տեղական ֆինանսական կազմակերպություններից ապահոված են Բանկի կոցմից հաճախորդներին տրամադրված վարկերի պահանջի իրավունքի գրավով:

Այլ փոխառությունների մի մասն ունեն հաստատուն, մյուսները՝ փոփոխական տոկոսադրույքներ:

2019 և 2018թթ. ընթացքում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

28 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Պարտատոմսեր	14,005,787	13,253,993
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	14,005,787	13,253,993

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Մեկ պարտատոմսի արժեքը	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
02.10.2017	USD	25	200,000	5.75	02.01.2022	5,000,000
04.12.2017	USD	25	200,000	5.5	04.03.2022	5,000,000
22.01.2018	USD	25	320,000	5.25	22.04.2022	8,000,000
11.06.2018	USD	25	120,000	5.25	11.09.2022	3,000,000
23.07.2018	AMD	10,000	100,000	9.5	23.07.2021	1,000,000,000
19.06.2019	USD	25	120,000	5.5	19.09.2023	3,000,000
29.10.2019	USD	25	114,189	5.5	29.01.2024	2,854,725

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ արժեթուղթ (2018թ.՝ նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ ոչինչ):

29 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառություններ	1,977,270	1,990,079
Ընդամենը ստորադաս փոխառություն	1,977,270	1,990,079

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

2018թ. ընթացքում Բանկը ստացել է 4,100 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով թողարկված ստորադաս փոխառություն՝ տարեկան 6.5% տոկոսադրույքով և մարման ժամկետը սահմանված է 2025թ.:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ ոչինչ):

30 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	778,468	781,055
Վճարվելիք գումարներ	243,960	322,183
Այլ ֆինանսական պարտավորություններ	580,823	450,116
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	1,603,251	1,553,354
Պարտավորություններ հարկերի գծով	184,473	204,259
Երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստներ*	16,661	16,136
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	201,134	220,395
Ընդամենը այլ պարտավորություններ	1,804,385	1,773,749

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխիքների գծով կորուստներից: Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տես 32 ծանոթագրությունում:

31 Սեփական կապիտալ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 8,803,655 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,760,731 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

Բանկի բաժնետերերը 2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև՝

Հազար ՀՀ դրամ

	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
«Ֆլեշ» ՍՊԸ	6,402,640	72.73%
Բարսեղ Բեգլարյան	1,991,940	22.63%
Ռուռալ Իմպուլս Հիմնադրամ II Էս Էյ ՍԻԿԱՎ-ՍԻՖ ԲԸ	377,660	4.28%
Այլ բաժնետերեր	31,415	0.36%
	8,803,655	100%

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

32 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Վարկերի և վարկային գծերի գծով պարտավորություններ	4,847,162	4,394,030
Վարկային քարտերի գծով պարտավորվածություններ	6,049,704	5,820,752
Չօգտագործված օվերդրաֆտներ	1,448,145	910,060
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	2,419,179	3,051,980
Ֆակտորինգային պայմանագրեր	10	171
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	14,764,200	14,176,993

Վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում (տես՝ ծանոթագրություն 21):

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում են այլ պարտավորություններում (տես՝ ծանոթագրություն 30), որոնց գծով վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2019թ.	2018թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	16,136	8,098
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	525	8,038
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,661	16,136

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Բանկը որպես վարձակալ (Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն)

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.
Մինչև 1 տարի	449,168
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	449,168

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 22 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

33 Վարձակալություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի տարածքների համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 22):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև աղյուսակում նկարագրված են Բանկի վարձակալական գործառույթները ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիպերի՝

Վարձակալված օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Վարձակալված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների քանակ	Մնացորդային ժամկետ	Միջին մնացորդային վարձակալական ժամկետ	Երկարացման հնարավորությամբ վարձակալությունների քանակ	Ձեռք բերման հնարավորությամբ վարձակալությունների քանակ	Գործակցին կապված փոփոխուն վճարով վարձակալությունների քանակ	Դադարեցման հնարավորությամբ վարձակալությունների քանակ
Գրասենյակային շենք	1	9.7 տարի	9.7 տարի	-	-	-	-
Մասնաճյուղեր	35	1.3-6 տարի	4.56 տարի	-	-	-	-

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ըստ դասերի.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	Մաշվածություն	Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնաճյուղեր	1,214,134	-	(249,514)	964,620
Գլխամաս	-	1,636,015	(40,630)	1,595,385
Ընդամենը	1,214,134	1,636,015	(290,144)	2,560,005

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վարձակալության գծով պարտավորություններ տողում:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	1,214,134
Ավելացում	1,636,015
Տոկոսի կուտակում	135,415
Վճարումներ	(396,786)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,588,778

2019թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 9 % (2018թ.՝ չի կիրառվել):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալաության գծով պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 37-ում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գործառնական վարձակալաության գծով պարտավորվածությունները տես՝ ծանոթագրություն 32:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Բանկն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի կարճաժամկետ վարձակալությունների գծով ապագա պարտավորվածություններ, և այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարը կազմում է 49,747 հազար դրամ:

34 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է համարվում ՀՀ գործարար Բարսեղ Բեգլարյանը, ով հանդիսանում է Բանկի բաժնետեր «Ֆլեշ» ՍՊԸ-ի սեփականատերը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2019		2018	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	50,328	229,224	1,732,957	273,806
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	97,019	494,338	1,910,085	623,035
Տարվա ընթացքում մարված վարկեր	(84,636)	(604,827)	(3,592,714)	(667,617)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	62,711	118,735	50,328	229,224
Արժեզրկումից պահուստ	(1,652)	(3,767)	(544)	(2,476)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	61,059	114,968	49,784	226,748

Հազար ՀՀ դրամ	2019		2018	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Հետգնման պայմանագրեր				
Մնացորդը 1 հունվարի դրությամբ	-	54,520	-	-
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	-	1,048,347	-	8,739,124
Տարվա ընթացքում մարված վարկեր	-	(1,102,867)	-	(8,684,604)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	54,520
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ				
Վարձակալված օֆիսային տարածքներ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
ՖՀՄՍ 16-ի կիրառում	-	149,266	-	-
Տարվա ընթացքում վարձակալված	1,619,563	-	-	-
Տարվա ընթացքում ամորտիզացված	(37,664)	(48,427)	-	-
Կապակցված անձի ապաճանաչում	-	(100,839)	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,581,899	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ 1 հունվարի դրությամբ	9,594,539	186,388	5,608,309	396,932
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	156,990,398	9,712,338	158,574,296	14,662,668
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(158,118,685)	(9,230,349)	(154,588,066)	(14,873,212)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,466,252	668,377	9,594,539	186,388
Վարձակալության գծով պարտավորություններ				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
ՖՀՄՍ 16-ի կիրառում	-	149,366	-	-
Տարվա ընթացքում ստանձնած	1,619,563	-	-	-
Տարվա ընթացքում զեղչատոկոսի մաշեցում	37,798	11,160	-	-
Տարվա ընթացքում մարված	(60,000)	(55,387)	-	-
Կապակցված անձի ապաճանաչում	-	(105,139)	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,597,361	-	-	-
Սփորադաս փոխառություն	1,977,270	-	1,990,079	-
Տրված երաշխիքներ	1,706,571	-	2,163,149	-

Հազար ՀՀ դրամ	2019		2018	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ վարկերի գծով	6,047	13,058	36,148	53,924
Արժեզրկման ծախս/(հակադարձում)	1,108	1,291	(17,219)	(1,833)
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ/(վնաս)	30,281	238	(14,633)	255
Զուտ օգուտ/(վնաս) արտարժույթի վերագնահատումից	(13,186)	4,083	(27,261)	(312)
Տոկոսային ծախսեր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով	(74,406)	(22,198)	(78,699)	(15,777)
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառությունների գծով	(128,015)	-	(6,712)	-
Տոկոսային ծախսեր վարձակալության գծով	(37,798)	(11,160)	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-	(17,400)	(55,386)
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների ամորտիզացիա	(37,664)	(48,427)	-	-

Բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 20 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 6%-20% (2018թ.՝ 6%-20%)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Աշխատավարձ և պարգևատրումներ	463,020	311,040
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	463,020	311,040

35 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով

դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

35.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ	-	24,390,409	-	24,390,409	24,390,409
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	10,747,641	-	10,747,641	10,747,641
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	135,907,137	-	135,907,137	135,921,392
Այլ ակտիվներ	-	941,578	-	941,578	941,578
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	4,142,779	-	4,142,779	4,142,779
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	83,418,886	-	83,418,886	83,418,886
Այլ փոխառություններ	-	77,048,866	-	77,048,866	77,048,866
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	14,005,787	-	14,005,787	14,005,787
Ստորադաս փոխառություն	-	1,977,270	-	1,977,270	1,977,270
Վարձակալության գծով պարտավորություններ		2,588,778		2,588,778	2,588,778
Այլ պարտավորություններ	-	1,603,251	-	1,603,251	1,603,251

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ	-	38,633,475	-	38,633,475	38,633,475
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	16,937,582	-	16,937,582	16,937,582
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	119,605,995	-	119,605,995	119,978,388
Այլ ակտիվներ	-	1,495,879	-	1,495,879	1,495,879
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	6,229,888	-	6,229,888	6,229,888
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	80,850,763	-	80,850,763	80,850,763
Այլ փոխառություններ	-	81,567,962	-	81,567,962	81,567,962
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	13,253,993	-	13,253,993	13,253,993
Ստորադաս փոխառություն	-	1,990,079	-	1,990,079	1,990,079
Այլ պարտավորություններ	-	1,553,354	-	1,553,354	1,553,354

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 4.5% մինչև 24% տարեկան (2018թ. 4% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

35.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ			31 դեկտեմբերի 2019թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը	-	38,475,185	-	38,475,185
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	689	-	689
Ընդամենը	-	38,475,874	-	38,475,874
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	7,720	-	7,720
Ընդամենը	-	7,720	-	7,720
	-		-	
Զուտ իրական արժեք	-	38,468,154	-	38,468,154

Հազար ՀՀ դրամ			31 դեկտեմբերի 2018թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը	-	33,360,753	-	33,360,753
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		4,071	-	4,071
Ընդամենը	-	33,364,824	-	33,364,824
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	12,004	-	12,004
Ընդամենը	-	12,004	-	12,004
Զուտ իրական արժեք	-	33,352,820	-	33,352,820

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային և սվոփ պայմանագրերից:

36 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ (ծանոթ. 19)	8,209,521	-	8,209,521	(8,209,521)	-	-

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2018թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայաց-ված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հետգնման պայմանագրերով ստացվելիք գումարներ (ծանոթ. 19,21)	11,180,096	-	11,180,096	(11,180,096)	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր (ծանոթ. 20,25)	4,002,707	-	4,002,707	(4,175,959)	-	(173,252)

37 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 38.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաղորդագրում	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաղորդագրում	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	24,390,409	-	24,390,409	-	-	-	24,390,409
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	689	-	689	-	-	-	689
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,032,829	365,532	10,398,361	348,472	808	349,280	10,747,641
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,271,750	10,071,373	11,343,123	24,331,994	2,800,068	27,132,062	38,475,185
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	5,001,053	39,403,359	44,404,412	61,130,878	30,386,102	91,516,980	135,921,392
Այլ ակտիվներ	941,578	-	941,578	-	-	-	941,578
	41,638,308	49,840,264	91,478,572	85,811,344	33,186,978	118,998,322	210,476,894
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,500,452	1,281,332	3,781,784	360,995	-	360,995	4,142,779
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	7,720	-	7,720	-	-	-	7,720
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	46,069,887	35,650,025	81,719,912	1,642,442	56,532	1,698,974	83,418,886
Այլ փոխառություններ	1,194,557	15,995,477	17,190,034	54,343,751	5,515,081	59,858,832	77,048,866
Թողարկված պարտքային արժեթղթեր	100,605	17,737	118,342	13,887,445	-	13,887,445	14,005,787
Ստորադաս փոխառություն	10,500	-	10,500	-	1,966,770	1,966,770	1,977,270
Վարձակալության գծով պարտավորություններ	26,853	309,147	336,000	1,214,022	1,038,756	2,252,778	2,588,778
Այլ պարտավորություններ	1,603,251	-	1,603,251	-	-	-	1,603,251
	51,513,825	53,253,718	104,767,543	71,448,655	8,577,139	80,025,794	184,793,337
Զուտ Դիրք	(9,875,517)	(3,413,454)	(13,288,971)	14,362,689	24,609,839	38,972,528	25,683,557
Կուտակված ճեղքվածք	(9,875,517)	(13,288,971)		1,073,718	25,683,557		

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
31 դեկտեմբերի 2018թ.							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	38,633,475	-	38,633,475	-	-	-	38,633,475
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,071	-	4,071	-	-	-	4,071
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,702,718	3,096,771	16,799,489	135,978	2,115	138,093	16,937,582
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	5,676,094	5,676,094	21,092,841	2,415,859	23,508,700	29,184,794
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	4,175,959	-	4,175,959	4,175,959
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	4,965,279	35,135,642	40,100,921	53,897,918	25,979,549	79,877,467	119,978,388
Այլ ակտիվներ	1,495,879	-	1,495,879	-	-	-	1,495,879
	58,801,422	43,908,507	102,709,929	79,302,696	28,397,523	107,700,219	210,410,148
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	4,135,735	1,277,419	5,413,154	816,734	-	816,734	6,229,888
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	12,004	-	12,004	-	-	-	12,004
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	43,881,221	34,937,301	78,818,522	1,973,621	58,620	2,032,241	80,850,763
Այլ փոխառություններ	950,226	15,145,807	16,096,033	60,501,220	4,970,709	65,471,929	81,567,962
Թողարկված պարտքային արժեթղթեր	104,574	1,990,669	2,095,243	11,158,750	-	11,158,750	13,253,993
Ստորադաս փոխառություն	6,711	-	6,711	-	1,983,368	1,983,368	1,990,079
Այլ պարտավորություններ	1,553,354	-	1,553,354	-	-	-	1,553,354
	50,643,825	53,351,196	103,995,021	74,450,325	7,012,697	81,463,022	185,458,043
Զուտ Դիրք	8,157,597	(9,442,689)	(1,285,092)	4,852,371	21,384,826	26,237,197	24,952,105
Կուտակված ճեղքվածք	8,157,597	(1,285,092)		3,567,279	24,952,105		

38 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի

հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի կառավարումն իրականացվում է Բանկի կառուցվածքային տարբեր մակարդակներում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի վարչություն

Բանկի վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Խորհրդին կից աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունված համապատասխան որոշումների կատարումը:

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով

Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իրացվելիության և շուկայական ռիսկերի կառավարման, բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար, իր լիազորությունների շրջանակներում որոշումներ է կայացնում վերոհիշյալ ռիսկերի գծով:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեները իրենց իրավասությունների շրջանակներում որոշումներ են ընդունում պարտքային ռիսկի ընդունման վերաբերյալ, պատասխանատվություն են կրում պարտքային ռիսկի զսպմանն ուղղված սահմանաչափերի պահպանման համար:

Ռիսկերի կառավարման վարչություն

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բանկային ռիսկերի բացահայտման, գնահատման, վերլուծության, մոնիտորինգի և հսկողության համար: Այն պատասխանատու է նաև ռիսկերի գնահատման համապատասխան հաշվետվությունների բազայի ստեղծման համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու

առաջարկները ներկայացնում է Խորհրդին կից Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Բանկի վարչությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ վարկային ռիսկի համապարփակ չափի, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արտարժութային ռիսկի, իրացվելիության ցուցանիշների և սթրես թեստերի վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացումների: Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը և վարկային ռիսկերի գնահատման հանձնաժողովը ամսեկան կտրվածքով ստանում են ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև նիստ ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկը ներառյալ արժեքի ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, պարտքային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա:

Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

38.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

38.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վարկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 38.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ				
Բարձր	24,391,594	-	-	24,391,594
Համախառն հաշվեկշռային արժեք	24,391,594	-	-	24,391,594
Արժեզրկումից պահուստ	(1,185)	-	-	(1,185)
Զուտ հաշվեկշռային արժեք	24,390,409	-	-	24,390,409
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Բարձր	189,002	-	-	189,002
Ստանդարտ	10,590,793	-	-	10,590,793
Համախառն հաշվեկշռային արժեք	10,779,795	-	-	10,779,795
Արժեզրկումից պահուստ	(32,154)	-	-	(32,154)
Զուտ հաշվեկշռային արժեք	10,747,641	-	-	10,747,641

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Բարձր վարկանիշ	292,899	-	-	292,899
Ստանդարտ վարկանիշ	38,182,286	-	-	38,182,286
Իրական արժեք	38,475,185	-	-	38,475,185
Արժեզրկումից պահուստ	(204,864)			(204,864)
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	51,607,602	-	-	51,607,602
Ստանդարտ	210,725	238,197	-	448,922
Ոչ ստանդարտ	-	149,702	-	149,702
Չաշխատող	-	-	313,103	313,103
Համախառն հաշվեկշռային արժեք	51,818,327	387,899	313,103	52,519,329
Արժեզրկումից պահուստ	(337,837)	(46,247)	(162,937)	(547,021)
Զուտ հաշվեկշռային արժեք	51,480,490	341,652	150,166	51,972,308
Առևտրային վարկեր				
Բարձր	77,804,903	-	-	77,804,903
Ստանդարտ	61,228	5,458,074	-	5,519,302
Ոչ ստանդարտ	-	3,419,548	-	3,419,548
Չաշխատող	-	-	35,743	35,743
Համախառն հաշվեկշռային արժեք	77,866,131	8,877,622	35,743	86,779,496
Արժեզրկումից պահուստ	(448,823)	(2,377,037)	(4,552)	(2,830,412)
Զուտ հաշվեկշռային արժեք	77,417,308	6,500,585	31,191	83,949,084
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	963,177	-	-	963,177
Համախառն հաշվեկշռային արժեք	963,177	-	-	963,177
Արժեզրկումից պահուստ	(21,599)	-	-	(21,599)
Զուտ հաշվեկշռային արժեք	941,578	-	-	941,578
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Բարձր	14,764,200	-	-	14,764,200
	14,764,200	-	-	14,764,200
Արժեզրկումից պահուստ*	(16,661)	-	-	(16,661)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ				
Բարձր	38,634,869	-	-	38,634,869
Համախառն հաշվեկշռային արժեք	38,634,869	-	-	38,634,869
Արժեզրկումից պահուստ	(1,394)	-	-	(1,394)
Զուտ հաշվեկշռային արժեք	38,633,475	-	-	38,633,475
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Բարձր	190,598	-	-	190,598
Ստանդարտ	16,854,154	-	-	16,854,154
Համախառն հաշվեկշռային արժեք	17,044,752	-	-	17,044,752
Արժեզրկումից պահուստ	(107,170)	-	-	(107,170)
Զուտ հաշվեկշռային արժեք	16,937,582	-	-	16,937,582
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Բարձր	341,870	-	-	341,870
Ստանդարտ	33,018,883	-	-	33,018,883
Իրական արժեք	33,360,753	-	-	33,360,753
Արժեզրկումից պահուստ	(126,222)			(126,222)
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	38,840,857	-	-	38,840,857
Ստանդարտ	333,807	338,133	-	671,940
Ոչ ստանդարտ	-	126,333	-	126,333
Չաշխատող	-	-	503,800	503,800
Համախառն հաշվեկշռային արժեք	39,174,664	464,466	503,800	40,142,930
Արժեզրկումից պահուստ	(227,187)	(72,228)	(154,963)	(454,378)
Զուտ հաշվեկշռային արժեք	38,947,477	392,238	348,837	39,688,552
Առևտրային վարկեր				
Բարձր	76,270,686	-	-	76,270,686
Ստանդարտ	22,780	5,864,412	-	5,887,192
Ոչ ստանդարտ	-	12,599	-	12,599
Չաշխատող	-	-	232,171	232,171
Համախառն հաշվեկշռային արժեք	76,293,466	5,877,011	232,171	82,402,648
Արժեզրկումից պահուստ	(638,639)	(1,405,603)	(68,570)	(2,112,812)
Զուտ հաշվեկշռային արժեք	75,654,827	4,471,408	163,601	80,289,836

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2018թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	1,534,541	-	-	1,534,541
Համախառն հաշվեկշռային արժեք	1,534,541	-	-	1,534,541
Արժեզրկումից պահուստ	(38,662)	-	-	(38,662)
Զուտ հաշվեկշռային արժեք	1,495,879	-	-	1,495,879
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Բարձր	14,176,993	-	-	14,176,993
	14,176,993	-	-	14,176,993
Արժեզրկումից պահուստ*	(16,136)	-	-	(16,136)

*Վերոնշյալ աղյուսակում վարկային պարտավորվածություններ և տրամադրված երաշխիքներում բացահայտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը վերաբերում է միայն տրամադրված երաշխիքներին: Վարկային պարտավորվածությունների՝ վճարային քարտերի և օվերդրաֆտների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը ներառված է վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում, քանի որ Բանկը չի կարող վարկային պարտավորվածության բաղադրիչը տարանջատել ֆինանսական գործիքի բաղադրիչից և ակնկալվող պարտքային կորուստները ճանաչել առանձին-առանձին:

38.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.5.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ,

կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա դեֆոլտի հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության

վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ	Վարկանիշ	12-ամսյա PD –ի միջակայք
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Բարձր,Ստանդարտ	0.10-3.43%
	Ոչ ստանդարտ	12.49-29.45%
	Չաշխատող	86.49-100%
Առևտրային վարկեր	Բարձր,Ստանդարտ	1.13-3.16%
	Ոչ ստանդարտ	17.51-63.89%
	Չաշխատող	94.10-100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.04%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.052-7.48%
CCC+ to CC	Ցածր	13.385-29.13%
D	Չաշխատող	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապափակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ անշարժ, շարժական գույք և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.5.4 ծանոթագրությունում:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են Փուլ 2-ում և Փուլ 3-ում ներառված ակտիվները, որոնք փոփոխվել են, և, հետևաբար, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համարվում են վերանայված՝ Բանկի կողմից փոփոխությունների գծով կրած կորուստների հետ միասին:

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հաշվետու ժամանակաշրջանում փոփոխված ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեք	-	169,391
Փոփոխությունից զուտ վնաս	-	(47,938)

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ

ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.5.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճ
- ՀՆԱ (արտահայտված ՀՀ դրամով)
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանսֆերտներ
- Գործազրկության մակարդակ
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում (%)
- Առևտուր (աճի տեմպ %)
- Արդյունաբերություն (աճի տեմպ %)
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք
- Գնաճ
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

38.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն ամբողջությամբ տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

Արդյունաբերության ճյուղեր

Վարկերի տեղաբաշխումը ըստ տնեսության ճյուղերի ներկայացված է ծանոթագրություն 21-ում:

38.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառռոության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ, շարժական գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

31.12.2019թ. դրությամբ 24,755,763 հազար դրամ (31.12.2018թ. դրությամբ՝ 15,015,945 հազար դրամ) ընդհանուր արժեքով վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ չի ձևավորվել գրավների մեծության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անշարժ գույք	92,283,456	83,032,658
Շարժական գույք	773,543	869,017
Պաշարներ	485,270	341,307
Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց երաշխավորություններ	11,353,907	7,591,539
Թանկարժեք մետաղներ և ոսկյա իրեր	10,248,743	7,683,788
Դրամական միջոցների հոսքեր	16,057,891	14,601,358
Դրամական միջոցներ	347,564	195,349
Արժեթղթեր	148,572	486,781
Այլ	7,599,879	7,743,781
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	139,298,825	122,545,578

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

38.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների:

Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

38.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների գծով կիրառվող միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2019թ. Միջին կշռված արդյունավետ, տոկոսադրույք, %			2018թ. Միջին կշռված արդյունավետ, տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5.73	6.29	5.63	6.51	3.38	6.98
Պարտքային ներդրումային արժեթղթեր	9.18	5.33	4.10	11.3	4.9	5.74
Հաճախորդներին տրված վարկեր	12.44	8.85	6.26	12.10	9.66	6.15
Տոկոսակիր պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	7.14	2.34	2.88	6.62		2.66
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ						
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ	0.1	0.1	-	0.1	0.1	-
- Ժամկետային ավանդներ	8.47	4.29	2.55	8.71	4.34	2.72
Այլ փոխառություններ	8.70	6.42	4.33	8.85	6.61	4.33
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.83	5.55	-	9.84	5.66	-
Ստորադաս փոխառություն	-	6.50	-	-	6.70	-

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով՝ ներառյալ հեջավորման գործիքների ազդեցությունը: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, ներառյալ հեջերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ բնորոշված սվոպերի ազդեցությունները, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոպի իրացման ժամկետների: Կապիտալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ — **31 դեկտեմբերի 2019**

			Կապիտալի զգայունություն			
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+3	-	(58,619)	(751,178)	(439,761)	(1,249,558)
ԱՄՆ դոլար	+3	-	(133)	-	(340)	(473)
Եվրո	+2	(51,907)	-	-	-	(51,907)
ՀՀ դրամ	(3)	-	58,619	745,984	439,761	1,244,364
ԱՄՆ դոլար	(3)	-	133	-	126	259
Եվրո	(2)	51,907	-	-	-	51,907

Հազար ՀՀ դրամ — **31 դեկտեմբերի 2018**

			Կապիտալի զգայունություն			
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+3	-	(38,170)	(849,523)	(223,169)	(1,110,862)
ԱՄՆ դոլար	+3	-	-	(223,428)	-	(223,428)
ԱՄՆ դոլար	+2	(282,943)	-	-	-	(282,943)

Հազար ՀՀ դրամ			31 դեկտեմբերի 2018			
			Կապիտալի զգայունություն			
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	(3)	-	38,170	849,523	223,169	1,110,862
ԱՄՆ դոլար	(3)	-	-	223,428	-	223,428
ԱՄՆ դոլար	(2)	282,943	-	-	-	282,943

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		31 դեկտեմբերի 2018թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	55,329	+5	56,472
Եվրո	+5	(1,135)	+5	(44,154)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արժույթներ	Ընդամենը
Ակտիվներ					
Դրամական միջոցներ	14,307,708	8,326,583	1,006,215	749,903	24,390,409
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,332,990	1,293,205	4,861	116,585	10,747,641
Ներդրումային արժեթղթեր	25,661,904	11,904,280	909,001	-	38,475,185
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	38,914,643	89,500,778	7,505,971	-	135,921,392
Այլ ակտիվներ	281,488	439,140	85,825	135,125	941,578
	88,498,733	111,463,986	9,511,873	1,001,613	210,476,205
Պարտավորություններ					
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	545,532	2,447,830	1,149,417	-	4,142,779
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	40,102,141	33,662,533	4,827,106	4,827,106	83,418,886
Այլ փոխառություններ	14,422,049	60,475,414	2,151,403	-	77,048,866
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,018,414	12,987,373	-	-	14,005,787
Ստորադաս փոխառություն	-	1,977,270	-	-	1,977,270
Վարձակալության գծով պարտավորություններ	2,588,778	-	-	-	2,588,778
Այլ պարտավորություններ	868,130	507,572	180,618	46,931	1,603,251
Ընդամենը	59,545,044	112,057,992	8,308,544	4,874,037	184,785,617
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	78,651	1,700,588	(1,226,027)	(560,243)	(7,031)
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,032,340	1,106,582	(22,698)	(4,432,667)	25,683,557
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ին	6,185,419	7,616,789	940,236	21,756	14,764,200
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	85,817,114	114,641,272	8,685,424	1,262,267	210,406,077
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	57,776,503	119,304,554	7,800,849	564,133	185,446,039
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(4,012,370)	5,792,728	(883,071)	(905,220)	(7,933)
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,028,241	1,129,446	1,504	(207,086)	24,952,105
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2018թ. դեկտեմբերի 31-ին	6,461,981	6,620,284	1,071,097	23,631	14,176,993

38.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 17-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2019, %	2018, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	25.91	29.83
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	135.26	147.62

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 37-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	2,500,565	1,322,119	395,689	-	4,218,373	4,142,779
Պարտավորություններ Հաճախորդների նկատմամբ	46,072,495	36,703,510	1,841,280	80,424	84,697,709	83,418,886
Այլ փոխառություններ	1,273,963	19,530,595	61,745,696	6,340,369	88,890,623	77,048,866
Թողարկված պարտքային արժեթղթեր	100,605	17,737	13,890,910	-	14,009,252	14,005,787
Ստորադաս փոխառություն	10,500	-	-	2,611,224	2,621,724	1,977,270
Վարձակալության գծով պարտավորություններ	48,093	529,026	2,308,478	1,322,701	4,208,298	2,588,778
Այլ պարտավորություններ	1,603,251	-	-	-	1,603,251	1,603,251
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	51,609,472	58,102,987	80,182,053	10,354,718	200,249,230	184,785,617
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	2,582,240	-	-	-	2,582,240	2,582,240
Արտահոսք	(2,589,184)	-	-	-	(2,589,184)	(2,589,184)
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	480,008	-	-	-	480,008	479,613
Արտահոսք	(479,700)	-	-	-	(479,700)	(479,700)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	13,804,477	907,063	52,660	-	14,764,200	14,764,200

	31 դեկտեմբերի 2018թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	4,142,131	1,354,586	919,762	-	6,416,479	6,229,888
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	43,884,457	35,986,678	2,159,834	85,496	82,116,465	80,850,763
Այլ փոխառություններ	1,037,297	18,718,386	69,724,076	5,679,976	95,159,735	81,567,962
Թողարկված պարտքային արժեթղթեր	104,574	2,102,742	11,580,363	-	13,787,679	13,253,993
Ստորադաս փոխառություն	6,711	-	-	2,762,182	2,768,893	1,990,079
Այլ պարտավորություններ	1,553,354	-	-	-	1,553,354	1,553,354
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	50,728,524	58,162,392	84,384,035	8,527,654	201,802,605	185,446,039
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի փոխանակման ֆորվարդային պայմանագրեր						
Ներհոսք	2,743,245	-	-	-	2,743,245	2,743,245
Արտահոսք	(2,745,450)	-	-	-	(2,745,450)	(2,745,450)
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	4,588,610	-	-	-	4,588,610	4,587,294
Արտահոսք	(4,601,075)	-	-	-	(4,601,075)	(4,593,022)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	11,606,617	626,525	1,943,851	-	14,176,993	14,176,993

38.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը, Խորհուրդը, Գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

39 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	2019					
	Պարտավորություններ ՀՀ բանկերի նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	2,226,993	13,253,993	81,567,962	1,990,079	-	99,039,027
Դրամային հոսքերից	1,926,962	751,794	(3,859,439)	-	(396,786)	(1,577,469)
Վճարումներ	(21,064,683)	(4,342,530)	(20,621,905)	-	(396,786)	(46,425,904)
Ստացված գումար	22,991,645	5,094,324	16,762,466	-	-	44,848,435
Ոչ դրամային հոսքերից	(11,363)	-	(659,657)	(12,809)	2,985,564	2,301,735
Անցում ՖՀՄՍ 16-ին	-	-	-	-	1,214,134	1,214,134
Վարձակալության գծով պարտավորության ավելացում	-	-	-	-	1,636,015	1,636,015
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	(12,839)	-	(659,657)	(16,605)	-	(689,101)
Հաշվեգրված տոկոսներ	1,476	-	-	3,796	135,415	140,687
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,142,592	14,005,787	77,048,866	1,977,270	2,588,778	99,763,293

Հազար ՀՀ դրամ

	2018				
	Պարտավորություններ բանկերի նկատմամբ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Այլ փոխառություններ	Ստորադաս փոխառություն	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3,706,790	8,733,830	66,843,616	-	79,284,236
Դրամային հոսքերից	*(1,481,935)*	*4,441,227*	*14,381,676*	*1,989,444*	*19,330,412*
Վճարումներ	(26,082,682)	(7,270,948)	(16,726,895)	-	(50,080,525)
Ստացված գումար	24,600,747	11,712,175	31,108,571	1,989,444	69,410,937
Ոչ դրամային հոսքերից	*2,138*	*78,936*	*342,670*	*635*	*424,379*
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	8,992	15,475	(68,190)	(6,076)	(49,799)
Հաշվեգրված տոկոսներ	(6,854)	63,461	410,860	6,711	474,178
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,226,993	13,253,993	81,567,962	1,990,079	99,039,027

40 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Հիմնական կապիտալ	33,741,399	33,305,195
Լրացուցիչ կապիտալ	2,614,721	1,611,548
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	36,356,120	34,916,743
Ռիսկով կշռված ակտիվներ	239,816,094	215,402,486
Կապիտալի համարժեքության նորմատիվ	15.16%	16.21%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների

մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2017թ. որոշում է կայացրել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 30.000.000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

41 Սեգմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

42 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսի բռնկման վերջնական ազդեցությունն այս պահին անհայտ է, սակայն այն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա: COVID-19-ի հետ կապված զարգացող իրավիճակը կարող է որոշակի ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների ծավալի վրա: Այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական անձ, այնպես էլ իրավաբանական անձ հանդիսացող վարկառուների կողմից վարկային հարաբերությունների արդյունքում ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու անկարողությամբ և այլ հանգամանքներով:

2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել է երկրում արտակարգ իրավիճակ, որը կտևի մինչև 2020թ. մայիսի 14-ը: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ազդեցությունը:

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 001605 [1927305036]
PAYMENT ORDER RECEIPT

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

ՊԿ\ID 867
Ամսաթիվ\Date 23/03/22 15:37

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount	
15100024160500	900005016119	AMD	50,000.00

Վճարող\Remitter
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Վճարողի բանկ\Remitter's Bank
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code **2302500518**

Շահառու\Beneficiary
Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար
Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Հիսուն հազար դրամ
Նպատակ\Details
Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար

Կատարող\Maker **Սարգսյան Նառա**

Կ.Տ.
ST.

ՀՀ 103002101519 ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Acc. N ... WITH OPERATION ... OF THE CENTRAL BANK OF THE REPUBLIC ... ARMENIA
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ... ARARATBANK OJSC 19 PUSHKIN str. YEREVAN 375002 25